ԷՋՄԻԱԾՆ

1972

Է

Ամ146



ԻԸ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Յուլիս

1972



ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Կ. ՊՈԼՍԻ ՀՈՒՆԱՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԱԹԵՆԱԳՈՐԱՍ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ,

Երևան

Մեծ կսկիծով հայտնում եմ Նորին Սրբությանդ Նորին Սրբություն Տ. Աթենագորաս Պատրիարքի մահը:

Թաղումը տեղի է ունենալու հուլիսի 10-ին, երեքշաբթի օրը, ժամը 12-ին:

ՄԵԼԻՏՈՆ
ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՂ,
ՔԱՂԿԵԴՈՆԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ

10-ը հուլիսի 1972 թ.,
Ստամբուլ

*
* *

ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՂ, ՔԱՂԿԵԴՈՆԻ
ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՄԵԼԻՏՈՆԻՆ.

Ստամբուլ

Հայաստանյայց առաքելական եկեղեցու անունից ներկայացնում ենք Ձեզ Մեր եղբայրական ցավակցությունները և աղոթում, որ Աստված լուսավորի Աթենագորաս մեծ Պատրիարքի հոգին հավիտենական խաղաղության թագավորության մեջ, սրբերի դասում:

Սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

10-ը հուլիսի 1972 թ.,
Ս. Էջմիածին

ՀԵՌԱԳՐԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ Կ. ՊՈԼՍՈ ՀՈՒՆԱՑ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՆՈՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ.

Ս. Էջմիածին

Աստուծո սուրբ կամքով ընտրված լինելով տիեզերական սուրբ Աթոռին որպես գահակալ, հղում ենք Ձերդ Սրբությանը մեր սրտագին, եղբայրական համբույրն ի Քրիստոս:

ՊԱՏՐԻԱՐՔ **ԴԻՄԵՏՐԻՈՍ**

17-ը հուլիսի 1972 թ.,
Ստամբուլ

*
* *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԴԻՄԵՏՐԻՈՍԻՆ,
ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ.

Ստամբուլ

Հայ առաքելական եկեղեցու անունից ուրախությամբ շնորհավորում ենք Ձեր ընտրությունը և աղոթում, որ սուրբ Հոգվո շնորհներով լուսավորված երկար տարիներ ի կատար ածեք Ձեր մեծ առաքելությունը ի փառս Քրիստոսի և ձեր պատմական սուրբ Աթոռի:

Աստուծո սերը և օգնականությունը թող լինեն Ձեզ հետ այժմ և միշտ:

Եղբայրական հարգալից սիրո ողջագուրումով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

20-ը հուլիսի 1972 թ.,
Ս. Էջմիածին

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Ժամանում

Վեհափառ Հայրապետը սույն թվականի հունիսի 30-ից մինչև հուլիսի 4-ը, եղբայրական հրավերովը վրաց ուղղափառ եկեղեցու կաթողիկոսական տեղապահ տ. Դավիթ միտրոպոլիտի, եղավ Թբիլիսիում՝ մասնակցելու համար քույր եկեղեցու՝ համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոսի գահակալության հանդիսություններին:

Շուրջ երեք ամիս էր անցել, ինչ վախճանվել էր քույր եկեղեցու նախկին պետը՝ լուսահոգի Տ. Եփրեմ Բ-ը:

Հունիսի 30, ուրբաթ. Վեհափառ Հայրապետը Թբիլիսի մեկնումից առաջ Մայր տաճարի զանգերի ղողանջների տակ իջնում է աղոթքի: Այստեղ, հանուն Մայր Աթոռի միաբանության ողջերթի խոսք է ասում, ուղղված Վեհափառ Հայրապետին, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Երևանի օդանավակայանում Հայոց Հայրապետին բարի ճանապարհ մաղթելու էին եկել Մայր Աթոռի միաբանությունը, պաշտոնեությունը, Երևանի քահանայից դասը:

Հայոց Հայրապետին ճանապարհում է նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Ս. Գասպարյանը:

Այս ուղևորության ընթացքին, որպես շքախմբի անդամ, Նորին Վեհափառությանը ուղեկցում էին վրահայոց թեմի առաջնորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ տ. Նարեկ վրդ. Շաքարյանը, Մայր Աթոռի միաբան տ. Մասիս աբդ. Գալստյանը՝ որպես գավազանակիր, և դիվանապետ Հ. Առաքելյանը:

Մինչև Թբիլիսի թռիչքը տևում է մոտ կես ժամ: Թբիլիսիի օդանավակայանում Հայոց Հայրապետին ջերմորեն դիմավորում են Ուրբնիսիի միտրոպոլիտ և վրաց ուղղափառ եկեղեցու կաթողիկոսական տեղապահ տ. Դավի-

թը, Կուտատելսկիի միտրոպոլիտ տ. Ռոմանոսը, Կերբենիսիի տ. Գայոզ եպիսկոպոսը, վրաց եկեղեցու քահանա հայրեր և այլ պաշտոնական անձինք:

Նորին Սրբության ժամանումը ողջունում են նաև վրահայոց թեմական ու եկեղեցական խորհուրդների պատվարժան անդամները՝ հանձինս Սուրեն Ավչյանի, Սամվել Իսախանյանի, Սուրեն Եսայանի, Գևորգ Դուրգարյանի, Հայկ Նահապետյանի և ուրիշների, ինչպես նաև տ. Հովհաննես, տ. Տիրայր, տ. Եղիշե, տ. Արամ քահանա հայրերը:

Հայոց Հայրապետին դիմավորելու համար օդանավակայան էր եկել նաև Վրացական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր կրոնից գործերի լիազոր Դիմիտրի Շալուտաշվիլին: Այստեղ փոխանակվում են բարիգալուտյան և ողջույնի սրտագին խոսքեր:

Այնուհետև Վեհափառ Հայրապետն ու Իր շքախմբի անդամները առաջնորդվում են «Իվերիա» շքեղ հյուրանոց:

Ընտրություն

Հուլիսի 1-ին, շաբաթ օրը, Թբիլիսիի վրաց ս. Սիոն Մայր եկեղեցու կամարների տակ հանդիսավորապես, զանգերի ղողանջներով, բացվեց վրաց ուղղափառ եկեղեցու ընտրական ԺԱ ժողովը, վրաց եկեղեցու բոլոր թեմերի ու շրջանների 55 ներկայացուցիչներով ընտրելու եկեղեցու նոր պետին՝ Պատրիարք-կաթողիկոսին:

Ժամը 12-ին այստեղ է ժամանում նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ը՝ որպես պատվավոր հյուր: Հայոց Հայրապետը նախագահության սեղանին է, ուր տեղեր ունեն նաև վրաց ուղղափառ եկեղեցու կաթողիկոսական տեղապահ տ. Դավիթ միտրոպոլիտը, ս. Սինոդի մյուս անդամ սրբազան հայրերը՝ տ. Իլիա, տ. Զինովի և տ. Ռոմանոս միտրոպոլիտներն ու տ. Գայոզ եպիսկոպոսը, ռուս պրավոսլավ եկեղեցու պետ Տ. Պիմեն Պատրիարքի ներկայացուցիչ Ալեքսեյ միտրոպոլիտը, ու վրահայոց թեմի առաջնորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը:

Եկեղեցու նույն կամարների տակ տեղ են գրաված հոգևորական թե աշխարհական ներկայացուցիչները, թեմերից ու շրջաններից ընտրության համար եկած պատգամավորները:

Ժողովը բացված է: Նախագահող սրբազանը՝ տ. Դավիթ միտրոպոլիտը, հայտնում է օրակարգը, որը ունի երկու կետ. ա) կաթողիկոսական ընտրություն և բ) ընթացիկ հարցեր:

Առաջին հարցի շուրջ հաշվետու զեկուցում է կարդում ս. Սինոդի անդամ, նախագահ և կաթողիկոսական տեղապահ տ. Դավիթը: Այդ զեկուցումը Եփրեմ Բ երջանկահիշատակ կաթողիկոսի գահակալության շրջանի գործունեության ընդհանուր պատկերն էր ներկայացնում: Այնուհետև կատարվում է հոգեհանգիստ՝ լուսահոգի տ. Եփրեմ Բ կաթողիկոսի հիշատակին:

Ապա տ. Գայոզ եպիսկոպոսը, նախագահության անդամներից մեկը, ընթերցում է երկրորդ զեկուցումը՝ նվիրված վրաց եկեղեցու կազմակերպչական հարցերին:

Այնուհետև տեղի է ունենում ընտրությունը: Վրաց եկեղեցու ընտրական ԺԱ ժողովը միաձայն քվեարկությամբ կաթողիկոս է ընտրում տ. Դավիթ միտրոպոլիտին:

Սույն արժանավոր ընտրությունը ջերմորեն ընդունվում է բոլոր պատգամավորների և ժողովին ներկա հյուրերի կողմից:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ԴԱՎԻԹ Ե ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Նորընտիր Պատրիարքին առաջինը ողջունում և շնորհավորում է ջերմորեն Հայոց Հայրապետը և ապա քույր եկեղեցիների մյուս ներկայացուցիչները:

Ապա տեղի է ունենում հայրապետական մաղթանք և ընթերցվում նորընտիր Պատրիարք-կաթողիկոսի կենսագրությունը:

Ժողովը օրակարգի Բ հարցի քննումից հետո համարվում է փակված:

Գահակալության հանդիսություն

Հուլիսի 2-ին, կիրակի. վրաց եկեղեցու հին ավանդության համաձայն Թբիլիսիից մոտ 22 կմ հեռավորության վրա գտնվող Վրաստանի հին մայրաքաղաք Մցխեթայի Սվետի-Ցխովելի հայտնի տաճարում կատարվում է նորընտիր Պատրիարք-կաթողիկոսի՝ Նորին Սրբություն Տ. Դավիթ Ե-ի գահակալության հանդիսությունները:

Ժամը 12-ին հյուրերն ու պատվիրակությունները, ինչպես նաև հարյուրավոր ուխտավորներ ժամանում են հանդիսություններին, իսկ երբ երևում են նաև հայ և վրաց քույր եկեղեցիների պետերը, սկսում են ղողանջել եկեղեցու զանգերը:

Շարականների երգեցողության տակ, թափորի առաջնորդությամբ, երկու հայրապետներն էլ աջ ու ձախ օրհնելով ուխտավորներին, առաջնորդվում են դեպի ս. Սեղան: Դավիթ Ե կաթողիկոսը մնում է այստեղ՝ զգեստավորման, իսկ Հայոց Հայրապետը առաջնորդվում է ավելի առաջ՝ Իրեն հատկացված հատուկ գահավորակին:

Սկսվում է ս. պատարագը: Պատարագիչն էր նորընտիր Հայրապետը վրաց: Ահա մեծ հանդեսով բերվում են նորընտիր կաթողիկոսի թագն ու գավազանը. «Արժանի է, արժանի է» վանկերգում են խորանից և ժողովրդից՝ երգեցիկ խմբերը: Թագը մեծ շուքով դնում են Տ. Դավիթ Ե-ի գլխին, իսկ գավազանը տալիս ձեռքը: Նորին Սրբությունը հետո կարդում է իր ուխտ-աղոթքը:

Ս. հաղորդությունից հետո, երբ դարձյալ կրկնվում է «Արժանի է»-ն, հանում են քույր եկեղեցու պետի պատարագի թագը և մատուցում կաթողիկոսական վեղարը, որի ճակատին հայրապետական խաչն է՝ մարգարտաշար:

Ս. պատարագը ավարտված է: Բոլոր բարձրաստիճան հյուրերն ու պատգամավոր հոգևորականները հրավիրվում են ս. Սեղանի առջև՝ ատյան: Նորին Սրբություն Տ. Դավիթ Ե կաթողիկոսը բազմած է իր գահին: Հայոց Հայրապետն էլ Իր շքախմբով այստեղ է: Սկսվում են շնորհավորանքներն ու ճառերը: Վրաց եկեղեցու ս. Սինոդի անդամ տ. Իլիա միտրոպոլիտի շնորհավորական խոսքից հետո, Հայաստանյայց առաքելական եկեղեցու և համայն հավատացյալ ժողովրդի անունից շնորհավորանքի Իր խոսքն է ասում նաև Հայոց Հայրապետը.

Գոհություն Աստուծո ամենակալին, որ մեզ շնորհեց այս պահը՝ ներկա գտնվելու մեր հարազատ քույր՝ վրացական օրթոդոքս սուրբ եկեղեցու նորընտիր կաթողիկոսի գահակալության հանդեսին:

Խորապես երջանիկ ենք, որ վերացավ սգո քողը այս պատմական Աթոռի վրայից և վրացական եկեղեցու սուրբ Սինոդը սուրբ Հոգու ներշնչմամբ ընտրեց իր նոր գահակալը՝ հանձին Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսի:

Ձերդ Սրբություն, թանկագին Եղբայր Մեր ի Քրիստոս,

Թույլ տվեք, որ հանուն հայ առաքելական եկեղեցու և Մայր Աթոռ ս. Էջմիածնի Ձերդ Սրբության բերենք մեր սրտագին շնորհավորանքը, մեր եղբայրական սերը և գնահատանքը, ինչպես և ջերմագին մաղթանքները, որ Աստված Ձեզի պարգևէ երկար, շատ երկար տարիներու հովվապետություն, խաղաղությամբ և բեղուն գործունեությամբ, ի փառս ձեր պատմական սուրբ եկեղեցու և ի մխիթարություն մեզ բոլորիս:

Այս երջանիկ առիթով բերում ենք նաև Հայաստան աշխարհից եղբայրական Վրաստանին և նրա ազնիվ և ստեղծարար ժողովրդին սիրո ողջույնը և ամենաբարի զգացումները մեր ժողովրդի, հայ հավատացյալ ժողովրդի:

Վստահ եղեք, թե ոչ միայն Սովետական Հայաստանում, այլև աշխարհում, որտեղ որ մի հայ մարդու սիրտ բաբախում է, այնտեղ գտնվում է մի ազիզ եղբայր վրաց ժողովրդի:

Ավելի քան երկու հազար տարիների խաղաղ դրացիության, միատեղ, աղոթքի, միատեղ հոգևոր ու մշակութային զարգացման, միատեղ ինքնապաշտպանության, միատեղ ազատագրման մի հերոսացման պատմություն ունենք մեր ետև, որ ժայռակերտ պատվանդանն է հանդիսանում մեր եկեղեցիների և ժողովուրդների ներկա և ապագա կյանքի:

Եղբայրության դաշինքը անքակտելի է մեր երկու ժողովուրդների քրիստոնեական հավատքով, մշակութային հազարամյա արժեքներով, բարոյական ու ընկերային արդարության ըմբռնումներով, քաղաքական շահերի նույնության գիտակցությամբ, և մանավանդ սովետական բազմազգ մեծ ընտանիքին պատկանելու վճռականությամբ ու հպարտությամբ:

Այս ամուր պատվանդանին վրա հաստատ կանգնած, թող մեր եկեղեցիները նաև հետ այսու, Ձերդ Սրբության և Մեր առաջնորդությամբ, շարունակեն իրենց առաքելությունը հոգևոր շինության ճանապարհով, էկումենիկ ոգիով, միշտ վառ ու պայծառ պահելով սուրբ Ավետարանի լույսը:

Թող մեր եկեղեցիները շարունակեն նաև իրենց անկնուն աշխատանքը ի խնդիր աշխարհի խաղաղության դատի հաղթանակին, որ մեր օրերի մարդկության առաջ դրված մեծագույն հարցն է: Խաղաղության և ժողովուրդներու բարեկամության պայքարը մեզ բոլորիս համար նույնքան քրիստոնեական է, ինչքան հայրենասիրական:

Ձերդ Սրբության և Ձեր հոգևոր դասուն մաղթում ենք անսպառ եռանդ այս նվիրական պայքարի ճանապարհի վրա, ու Մենք ևս Ձեր կողքին ենք իբրև աղոթակից և գործակից եղբայր:

Թող Աստված անխռով պահպանի և ամրապնդի խաղաղ գործակցությունը աշխարհի ժողովուրդների և պետությունների միջև:

Թող Աստված խաղաղության ու միշտ վերելքի մեջ պահպանե ծաղկած երկիրը անմահ Վրաստանի:

Թող Աստված անշարժ ու փառավոր պահպանի վրացական սուրբ եկեղեցին, Ձերդ Սրբության երջանիկ հովվապետության ներքո, երկա՜ր-երկա՜ր ամիսներ տարիներ:

«Եւ ինքն Աստուած խաղաղութեան, սուրբս արասցէ զձեզ համօրէնս. և բովանդակ ձեր ոգի և շունչ և մարմին՝ անարատ ի գալուստն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի պահեսցի» (Ա. Թեսաղ. Ե 23), ամէն:

Վերջում Հայոց Հայրապետը, իբրև հիշատակ եղբայրական սիրո և ազնիվ բարեկամության, վրաց եկեղեցու նորընտիր Պատրիարք-կաթողիկոս

Տ. Դավիթ Ե-ին նվիրում է 400 գրամանոց մի ոսկյա սրբանկար՝ «Տիրամայրը», շրջանակի մեջ, պատրաստված հայ դրվագող-ոսկերիչ վարպետների կողմից, Երևանում:

Ապա իրենց շնորհավորական գեղեցիկ ճառերով հանդես են գալիս Տալլինի և Էստոնիայի միտրոպոլիտ, ռուս պրավոսլավ եկեղեցու պատվիրակության գլուխ և ս. Սինոդի անդամ տ. Ալեքսին՝ համայն Ռուսաստանի և Մոսկվայի Պատրիարք Նորին Սրբություն Տ. Պիմենի անունից, տ. Գայոզ եպիսկոպոսը և ուրիշ ներկայացուցիչներ՝ վրաց ուղղափառ եկեղեցու թեմերի ու շրջանների անունից:

Գահակալության հանդիսությունները վերջանում են համայն վրաց Պատրիարք-կաթողիկոս Տ. Դավիթ Ե-ի պատասխան խոսքով:

Մցխեթան հայտնի է դեռևս Բ դարից ն. Ք.: Հայաստանից հետո հռոմեացի զորավար Պոմպեոսը կռիվներով հասել է նաև այստեղ: Վրաստանում քրիստոնեությունը ևս առաջինը այստեղ է քարոզվել ս. Հռիփսիմյանց կույսերի խմբից սրբուհի Նունեի կողմից: Մարիանի վրաց թագավորը ապա նոր կրոնը հռչակում է պետական՝ 337 թվականին: Մցխեթան իր հարաճուն կյանքը ապրել է, որպես մայրաքաղաք, մինչև Ե դար, մինչև Վախթանգ Գորգասալ թագավորի շրջանը: Հետո երկրի կենտրոնը տեղափոխվել է Թբիլիսի: Սակայն երկրի վարչական կենտրոնի տեղափոխումը բնավ պատճառ չէր, որ եկեղեցական-կրոնական կյանքը մոռացվեր այստեղ: Ընդհակառակն, ԺԱ դարում երբ կառուցվում է Սվետի-Ցխովելի տաճարը (1010—1019) այդ կյանքը նոր ձևի մեջ է մտնում և վրաց պատրիարք-կաթողիկոսները գահակալության հանդեսները միշտ էլ անցկացնում են այստեղ:

Մցխեթայում կան նաև ուրիշ մենաստաններ, որոնցից ամենահինը հայտնի Օլվարին է:

Պաշտոնական ճաշ

Նույն օրը, կիրակի, ժամը 17-ին, Թբիլիսիի «Իվերիա» հյուրանոցի շքեղ դահլիճում վրաց եկեղեցու ս. Սինոդի կողմից, ի պատիվ վրաց նորընտիր Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսի և գահակալության հանդիսությունների հյուրերի, տրվեց պաշտոնական ճաշկերույթ, ուր ներկա էին շուրջ 80 հրավիրյալներ, որոնց թվում էին Ն. Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսն Իր շքախմբով, ռուսաց եկեղեցու ներկայացուցչական խմբի գլուխ տ. Ալեքսեյ միտրոպոլիտը իր շքախմբի մյուս անդամներով, վրաց եկեղեցու միտրոպոլիտ սրբազան հայրեր, պատգամավոր հոգևորականներ ու աշխարհականներ, պետական պաշտոնական անձինք, վրաց մտավորականության ներկայացուցիչներ, վրահայոց խորհրդի անդամներ ու հոգևոր հայրեր:

Սեղանը օրհնում և նրան նախագահում է համայն վրաց Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսը: Ապա առաջին բաժակը կամ կենացը, որ խմվում է հոտնկայս, դա վրաց, հայոց և ռուսաց քույր եկեղեցիների անխախտ բարեկամության կենացն է, նրանց սրբազան Պետերի կենացը:

Ահա Իր առաջին բաժակաճառն է ասում Հայոց Հայրապետը: Նա նախ Իր գոհունակությունն է հայտնում այս գեղեցիկ ընդունելության և այն կենացի համար, որն առաջարկվեց քիչ առաջ: Հետո, օգտվելով առիթից, մի անգամ ևս սրտագին շնորհավորում է վրաց եկեղեցու նորընտիր Տ. Դավիթ Ե կաթողիկոսին:

Ցավոք տեղեկացել ենք, որ մի քանի օր առաջ խիստ անձրևները,—

ասում է Իր խոսքի մեջ Հայոց Հայրապետը,—**հեղեղներ են առաջացրել այս-տեղ՝ ձեր գեղեցիկ մայրաքաղաքում, ու եղել են վնասներ: Տխուր է, սակայն միշտ անձրևներից հետո լինում են արևոտ և լուսավոր օրեր, ինչպես այսօր է, ու բնությունը ավելի է կենդանանում, կանաչում ու ծաղկում: Ահա այսօր այդ բոլորից հետո, երբ մեր քույր եկեղեցին ընտրել է իր արժանընտիր գա-հակալին՝ Տ. Դավիթ Ե կաթողիկոսին, նշանակում է, թե հոգևոր անձրև է, որ տեղում է այս եկեղեցու վրա և նաև վերազարթոնք է ապրում:**

Հայոց Հայրապետը այնուհետև մի անգամ ևս վեր է հանում հայ և վրաց քույր եկեղեցիների և ժողովուրդների դարավոր բարեկամությունն ու եղբայ-րական կապերը նրանց պատմության բոլոր հանգրվաններում, կապեր, որոնք առավել ևս սերտացել ու ամրապնդվել են հատկապես վերջին հիսուն տարի-ների ընթացքում:

Հանուն ռուս պրավոսլավ եկեղեցու և նրա Պատրիարքի՝ Նորին Սրբու-թյուն Տ. Պիմենի, խոսք է ասում նաև տ. Ալեքսեյ միտրոպոլիտը:

Բաժակաճառեր են արտասանում նաև տ. Իլիա միտրոպոլիտն ու տ. Գա-յոզ եպիսկոպոսը, ակադեմիկոս Ամիրանաշվիլին և քահանա հայրեր:

Գեղեցիկ բաժակաճառ է ասում նաև Վրաստանի կառավարության ներ-կայացուցիչը և կրոնից լիազոր մեծարգո Դիմիտրի Ճալուտաշվիլին:

Ճաշկերույթը վերջանում է միասին արտասանված աղոթքով:

Պաշտոնական այցելություններ

Հուլիսի 3-ին, երկուշաբթի. Վեհափառ Հայրապետը այցելություն է տա-լիս Վրացական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ պրն. Գիվի Ջավա-խիշվիլուն: Մեծարգո վարչապետի և Ամենայն Հայոց կաթողիկոսի միջև տեղի է ունենում սիրալիր տեսակցություն՝ վրաց և հայ ժողովուրդների դարավոր բարեկամության ոգով:

Նույն օրը, ավելի ուշ, Հայոց Հարապետը հյուրընկալվում է նաև Վրաս-տանի կառավարության կրոնից գործերի լիազոր պրն. Դիմիտրի Ճալուտաշ-վիլու կողմից, որի ընթացքում փոխանակվում են ողջույնի ջերմ խոսքեր, բարեկամական մթնոլորտում:

Հայոց ս. Գևորգ առաջնորդանիստ եկեղեցում

Վեհափառ Հայրապետը Թբիլիսի սույն ուղևորության ժամանակ սիրով այցելություն է տալիս նաև վրահայոց թեմի հավատացյալ հոտին:

Երկուշաբթի, ժամը 18-ն է: Ահա ս. Գևորգ առաջնորդանիստ եկեղեցու ներսն ու բակը լիքն է ամեն կողմից այստեղ՝ Վեհափառ Հայրապետի օրհ-նությունը առնելու եկած հարյուրավոր հայ հավատացյալներով: Հայոց Հայ-րապետը երբ իջնում է Իր ինքնաշարժից, առաջինը Նրան դիմավորում և բարիգալստյան խոսք են ասում վրահայոց թեմի առաջնորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանն ու թեմական խորհրդի նախագահ Սուրեն Ավչ-յանը:

Ապա Վեհափառ Հայրապետը զանգերի ղողանջների և «Հրաշափառ»-ի երգեցողության տակ, փռված ուղեգորգերի վրայով, առաջնորդվում է եկեղե-ցի՝ օրհնելով Իրեն վարդերով դիմավորող խուռներամ ժողովրդին:

Երեկոյան ժամերգությանը նախագահում է Նորին Ս. Օծությունը: Վեր-ջում, հրաժեշտից առաջ, հայրապետական օրհնության պատգամի ու

խոսքի մեջ Վեհափառ Հայրապետը ընդգծում է Թբիլիսի Իր այցելության ուրախ առիթը, որը եղել է համայն վրաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք-կաթողիկոսի ընտրությունն ու գահակալությունը: Մենք եկանք, որ անձամբ մեր խնդակցությունն ու ողջագուրումը բերեինք մեր եղբորը, Նորին Սրբություն Տ. Դավիթ Ե նորընտիր կաթողիկոսին,—ասում է Հայոց Հայրապետը,—մաղթելով նրան երջանիկ, բեղուն, շինարար և խաղաղ տարիներ՝ ի փառս վրաց եկեղեցու և հավատացյալ ժողովրդի և ի մխիթարություն մեզ բոլորիս:

Վեհափառ Հայրապետը Իր խոսքի մեջ հայտնում է նաև Իր տեսակցության մասին Վրաստանի մեծարգո վարչապետի՝ պրն. Գիվի Ջավախիշվիլու հետ, հանդիպում, որը եղել է ջերմ, սիրալիր ու բարեկամական:

Վերջում, Հայոց Հայրապետը բարեմաղթություններ է անում հայ և վրաց ժողովուրդների բարեկամության և նրանց հաջողությունների վերաբերյալ:

Ժամերգությունը վերջանում է «Պահպանիչ»-ով և աջահամբույրով:

Հանդիպումներ

Այսօր, ուշ երեկոյան, Հայոց Հայրապետին առանձին-առանձին հրաժեշտի այցելություններ են տալիս համայն վրաց ուղղափառ եկեղեցու Տ. Դավիթ Ե կաթողիկոսը՝ իր ուղեկիցներով և հյուրաբար վրաց եկեղեցու գահակալության հանդեսին ներկա եղած ռուս պրավոսլավ եկեղեցու Սրբազան Պատրիարքի՝ Տ. Պիմենի կողմից Թբիլիսի եկած տ. Ալեքսեյ միտրոպոլիտը՝ իր ուղեկիցներով:

Վեհափառ Հայրապետը օգտվելով Տ. Դավիթ Ե կաթողիկոսի հետ ունեցած հանդիպման առիթից, նրան հրավիրեց ի մոտո այցելելու ս. Էջմիածին՝ իբրև թանկագին հյուրը Մայր Աթոռի: Քույր եկեղեցու նորընտիր գերագույն պետը սիրով ընդունեց Հայոց Հայրապետի հրավերը:

Վերադարձ Մայր Աթոռ

Հուլիսի 4-ին, երեքշաբթի օրը, Հայոց Հայրապետը հոգեպես մխիթարված վրաց ուղղափառ ս. եկեղեցու գահակալության հանդեսին բերած Իր այցելությամբ, անջնջելի տպավորությամբ, Իր շքախմբով մեկնում է Վրաստանի մայրաքաղաքից՝ Թբիլիսիից:

Ն. Ս. Օծությանը բարի ճանապարհ մաղթելու համար օդանավակայան էին եկել Նորին Սրբություն Տ. Դավիթ Ե կաթողիկոսը, տ. Իլիա, տ. Զինովի, տ. Ռոմանոս միտրոպոլիտներն ու տ. Գայոզ եպիսկոպոսը, վրաց եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ ու քահանա հայրեր:

Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ մաղթեցին նաև վրահայոց թեմական առաջնորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, թեմական և եկեղեցական խորհուրդների պատվարժան անդամներ, քահանա հայրեր:

Օդանավակայանում Հայոց Հայրապետին ողջերթ մաղթեց նաև Վրացական ՍՍՀ Մինիստրների սովետի կրոնից գործերի լիազոր Դիմիտրի Շալուտաշվիլին:

Վեհափառ Հայրապետը, թռիչքից կես ժամ հետո, ժամը 14-ին, հասնում է Երևան, ուր Նա դիմավորվում է Մայր Աթոռի ողջ միաբանության ու պաշտոնեության կողմից, ի գլուխ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի, Արարատյան թեմի թեմական և եկեղեցական խորհուրդների անդամների ու քահանայից դասի:

Հայոց Հայրապետին դիմավորում ու բարի գալուստ է մաղթում նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Ս. Գասպարյանը:

Ավարտված է Հայոց Հայրապետի՝ վրաց ուղղափառ եկեղեցուն տրված եղբայրական և բարի կամեցողության այցելությունը: Այն որքան մի նոր և կարևոր էջ է երկու հարևան քույր եկեղեցիների ու ժողովուրդների պատմության համար, նույնքան սրտագին առիթ է հայ և վրաց ժողովուրդների դարավոր կապերի է՛լ ավելի սերտացման ու ամրապնդման իմաստով:

«Զի բարի, զի վայելուչ, զի բնակեն եղբարք ի միասին» (Սաղմ. ԺԷ 1):

Տ. ՆԱՐԵԿ ՎՐԴ. ՇԱՔԱՐՅԱՆ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀՈՎՎԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ

1972 թվականի մայիս և հունիս ամիսներին Մոսկվայի և համայն Ռուսաստանի Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը, սիրալիր ու եղբայրական հրավերովը Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի, Դամասկոսի և Երուսաղեմի հույն ուղղափառ եկեղեցիների Պատրիարքների, մեծ շքախմբի ուղեկցությամբ հովվական այցելություն է տալիս վերոհիշյալ վայրերի պատմական վանքերն ու եկեղեցիները, ինչպես նաև այդ երկրներում գտնվող ռուսական եկեղեցիներն ու համայնքները:

Այս ուխտագնացությունը նշանակալից է մանավանդ մեր օրերին, երբ քրիստոնյա քույր եկեղեցիները, արդի կյանքի մեծ հրամայականի առաջ, դուրս են եկել իրենց մեկուսացումից, մոտենում են միմյանց, փորձում են միասին աղոթել ու աշխատել հավաքական ճիգերով, էկումենիկ ոգով, Քրիստոսի մեկ և ընդհանրական եկեղեցու փառքի, աշխարհի խաղաղության ու ժողովուրդների եղբայրության համար:

Այս ոգով առաջնորդված ու այս մտածումների լույսի տակ հովվական իր այցելության ժամանակ Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքն այցելում է նաև Երուսաղեմի, Դամասկոսի և Կահիրեի հայոց եկեղեցիներն ու վանքերը, օրհնում հայ հավատացյալներին:

Պաշտոնական առիթներով եկեղեցիներում և ապա սեղանների շուրջ արտասանված բարիգալստյան և ողջույնի խոսքերը խանդավառ ու ջերմ մթնոլորտում վերածվում էին հայ և ռուս եկեղեցիների և հոգևորականության միջև հոգևոր եղբայրության սրբազան տոնի և դաշինքի:

Հայ և ռուս եկեղեցիների եղբայրական հարաբերությունների պատմությունը դարերի հնություն ունի:

Ավանդություն դարձած սրտագին ու ջերմ այդ հարաբերությունները շարունակվում են և ամրապնդվում հայ և ռուս եկեղեցիների և երկու ժողովուրդների միջև մանավանդ մեր օրերին, Տ. Տ. Վազգեն Ա Հայոց Հայրապետի օրով, ավելի լայն չափով և ընդգրկումով:

«Հայ ժողովրդի և եկեղեցու անքակտելի միասնությունը ռուս եղբայրական ժողովրդի և եկեղեցու հետ խարսխված է ավելի քան երկու հարյուր տարիների բարեկամության հաստատուն պատվանդանի վրա, պատվանդան, որ ինչպես անցյալում, այսօր էլ հանդիսանում է վերածնված Հայաստանի ապրելու, գոյատևելու և ազատորեն զարգանալու պայմանը և գրավականը», հաստատում է Հայոց Հայրապետը Մոսկվայում, ռուսական Զագորսկի վանքում, Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքի գահակալության առթիվ արտասանած իր ողջույնի խոսքի մեջ (տես «Էջմիածին» ամսագիր, 1971, հունիս-հուլիս, էջ 14):

Ահա թե ինչու երբեք պատահականություն չէր, որ Կահիրեի, Դամասկոսի, Երուսաղեմի հայ համայնքներն ու ազգային իշխանություններն ու ողջ հավատավոր ժողովուրդը ուրախությամբ և ջերմորեն ընդունեին Մոսկվայի և համայն Ռուսաստանի Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքի շնորհաբեր այցելությունը հայոց եկեղեցիներն ու վանքերը:

Ստորև «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում քաղվածաբար Մայր Աթոռ ուղարկված պաշտոնական գրություններից Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքի այցելության վերաբերյալ որոշ հատվածներ.

Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը Երուսաղեմի հայոց վանքում

Մայիսի 17-ին Մոսկվայի և համայն Ռուսաստանի Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը իր շքախմբով ժամանում է Երուսաղեմի մոտ Լիդդայի օդանավակայան, որպես Երուսաղեմի հունաց Պատրիարքի թանկագին հյուրը:

Երուսաղեմի հայոց ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարքը Լիդդայի օդանավակայանում, բարձրանալով օդանավ, անձամբ ողջունում և բարի գալուստ է մաղթում թանկագին հյուրին և նրա շքախմբի անդամներին, հանուն Հայոց Վեհափառ Հայրապետի, իր և սրբոց Հակոբյանց միաբանության, ընկերակցությամբ լուսարարապետ տ. Հայրիկ արքեպ. Ասլանյանի: Հուզիչ էր երկու հոգևոր պետերի եղբայրական համբույրը:

Մայիսի 18-ին, հաջորդ օրը, Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքն իր շքախմբով այցելում է հայոց պատրիարքարան:

Հայոց մայրավանքի մեծ դարբասի առաջ Նորին Սրբություն Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը, ժողովրդական խանդավառ արտահայտությունների մեջ, «Հրաշափառ»-ով առաջնորդվում է ս. Հակոբյանց Մայր տաճար՝ ընկերակցությամբ տ. Եղիշե սրբազան պատրիարքի և ս. Գլխադիր մատրան մեջ իր աղոթքն ու ուխտը կատարելուց հետո, տաճարի Ավագ սեղանի բեմից օրհնում է ժողովրդին:

Ապա տ. Եղիշե սրբազան պատրիարքը, ի պատիվ Մոսկվայի և համայն Ռուսաստանի Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքի և նրա շքախմբի անդամների, կազմակերպում է հայոց պատրիարքարանի շքեղ դահլիճում փառավոր

Նորին Սրբություն ռուսաց Տ. Պիմեն պատրիարքը և Նորին Ամենապատվություն Տ. Եղիշե հայոց պատրիարքը Սրբոց Հակոբյանց վանքի գլխավոր մուտքի առաջ ողջագուրման պահին. Երուսաղեմ

ընդունելություն, որին ներկա են լինում Երուսաղեմի հոգևոր բոլոր պետերը՝ իրենց շքախմբերով, Երուսաղեմի դիվանագիտական ողջ անձնակազմը, պետական բարձրաստիճան պաշտոնակատարներ, համալսարանի, ակադեմիայի, թանգարանի նախագահներ, Երուսաղեմի քաղաքագլուխը, կառավարչապետը, պաշտոնական այլ անձնավորություններ և հայ համայնքի ընտրանին:

Ճաշկերույթն անցնում է ջերմ ու խանդավառ մթնոլորտում: Երկու պատրիարքները ողջույնի և բարիգալստյան ճառեր են փոխանակում:

Տ. Պիմեն Պատրիարքի Երուսաղեմ գտնվելու առիթով կազմակերպված եկեղեցական հանդիսություններին և պաշտոնական ընդունելություններին մասնակցում է անձամբ ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքը:

Մայիսի 25-ին Տ Պիմեն Սրբազան Պատրիարքը հրաժեշտ է առնում Երուսաղեմի և Բեթլեհեմի տերունական սրբավայրերից, վանքերից, քույր եկեղեցիների հոգևոր պետերից և մեկնում Սոֆիա:

Օդանավակայանում մեծանուն հյուրին և նրա շքախմբի անդամներին ճանապարհում է անձամբ դարձյալ տ. Եղիշե սրբազան պատրիարքը:

Հուզիչ էր կրկին անգամ արձանագրել ռուսաց և հայոց սրբազան երկու պատրիարքների ողջագուրումը վերջին պահին օդանավակայանում:

Եղբայրական այս ջերմ ու անկեղծ համբույրը խորհրդանշում էր ի Քրիստոս երկու եկեղեցիների և հայ ու ռուս հավատացյալ ժողովուրդների եղբայրությունն ու սերը:

Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը Կահիրեում

Ապրիլի 28-ին Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը իր շքախմբով ժամանում է Կահիրե, որպես հյուրը Եգիպտոսի և համայն Աֆրիկայի հույն օրթոդոքս եկեղեցու պատրիարքի:

Եգիպտոսի հայոց առաջնորդական տեղապահ տ. Զավեն եպս. Չինչինյանը, ազգային-եկեղեցական մարմինների ներկայացուցիչներով դիմավորում է օդանավակայանում Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքին և հանուն Հայոց Հայրապետի և Եգիպտոսի հայ համայնքի բարի գալուստ է մաղթում:

Այնուհետև տ. Զավեն սրբազանը թե՛ Ալեքսանդրիայում և թե՛ Կահիրեում ներկա է լինում և բարիգալստյան խոսքերով հանդես է գալիս միշտ ու ամենուրեք, պաշտոնապես, Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքի այցելության առթիվ կազմակերպված եկեղեցական հանդիսությանց և ընդունելությանց՝ ընկերակցությամբ տ. Ներսեհ ծ. վրդ. Բամբուկճյանի և տ. Սահակ ավագ քհն. Շաքարյանի և թեմական ժողովի ատենապետ Հարություն Ամատունու:

Մայիսի 2-ին, երեքշաբթի օրը, երեկոյան ժամը 17-ին, հանուն Ն. Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի, նրա շքախմբի անդամներից Կիևի Ֆիլարետ միտրոպոլիտը, Տուլայի և Պիլովի Յուվենալի միտրոպոլիտը և Պյոտր քահանան պաշտոնական փոխադարձ այցելություն են տալիս Կահիրեում հայոց առաջնորդարան և ջերմորեն ու հարգալից մեծարանքով ընդունվում առաջնորդական տեղապահ տ. Զավեն սրբազանի, տ. Ներսեհ ծ. վարդապետի, քահանայից դասի և ազգային իշխանությանց բոլոր անդամների կողմից:

Հանդիպման ժամանակ մտերմիկ մթնոլորտում տ. Ֆիլարետ միտրոպոլիտը և տ. Զավեն եպիսկոպոսը ողջույնի ու բարիգալստյան եղբայրական սրտառուչ ճառեր և նվերներ են փոխանակում:

ՀԱՅԿ ԴՊՐՈՒԹՅՈՒՆ

Կահիրեի Եկեղեցասեր տիկնանց հանձնախմբի անդամները պատշաճ պատվասիրությամբ մեծարում են հարգելի հյուրերին:

Այնուհետև Կահիրեի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու զանգերի զվարթ ղողանջի ներքո և «Հրաշափառ»-ով քույր եկեղեցու ներկայացուցիչները առաջնորդվում են եկեղեցի, ուր տեղի է ունենում էկումենիկ աղոթք:

Հյուրերն ապա այցելում են Ապրիլյան եղեռնի նահատակների հիշատակին կառուցված մատուռ և աղոթում հայ նահատակների խնկելի հիշատակի համար:

Մայիսի 3-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան, տ. Զավեն սրբազանը, ընկերակցությամբ տ. Ներսեհ ծ. վարդապետի, տ. Սահակ ավագ քահանայի և քաղաքական ժողովի անդամների, «Շեփերտ» հյուրանոցում բարիգալստյան պաշտոնական այցելություն է տալիս տ. Պիմեն Սրբազան Պատրիարքին և, հանուն եգիպտահայ թեմի, Նորին Սրբությանն է նվիրում Կահիրեի հայ ուսկերիչների պատրաստած թանկագին մի հուշանվեր:

Հանդիպման ժամանակ Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը իր գոհունակությունն է հայտնում այս այցելության համար և շեշտում կարևորությունը հայ և ռուս եկեղեցիների միջև գոյություն ունեցող սիրալիր հարաբերությունների, մանավանդ ա՛յս օրերին, Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի և իր գահակալության շրջանում:

Մայիսի 4-ին, հինգշաբթի օրը, Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը իր շքախմբով մեկնում է Դամասկոս:

Մոսկվայի և համայն Ռուսաստանի Սրբազան Պատրիարքին և նրա շքախմբի անդամներին օդանավակայանում ճանապարհում են նաև տ. Զավեն եպիսկոպոսը, տ. Ներսեհ ծ. վարդապետը և ազգային-եկեղեցական մարմինների ներկայացուցիչներ:

Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը Դամասկոսում

Մայիսի 4-ին, հինգշաբթի օրը, Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը իր շքախմբով ժամանում է Դամասկոս, որպես թանկագին հյուր հույն օրթոդոքս պատրիարքության:

Հանուն Ամենայն Հայոց Հայրապետի և Դամասկոսի ազգային-եկեղեցական իշխանության, առաջնորդ տ. Կորյուն ծ. վրդ. Մանվելյանը օդանավակայանում բարի գալուստ է մաղթում բարձրաստիճան հյուրին՝ ընկերակցությամբ քահանայից դասի և ազգային իշխանության ներկայացուցիչների:

Դամասկոսում ևս հայ համայնքի առաջնորդ տ. Կորյուն ծ. վրդ. Մանվելյանը միշտ և ամենուրեք ներկա է լինում Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքի այցելության առիթով կազմակերպված եկեղեցական հանդիսությանց և պաշտոնական ընդունելությանց՝ ընկերակցությամբ տ. Շավարշ քհն. Ավագյանի, քաղաքական ժողովի անդամների:

Մայիսի 5-ին, ուրբաթ, ժամը 16.30-ին, Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը իր շքախմբով այցելում է Դամասկոսի հայոց ս. Սարգիս վանք և ապա ընդունելության դահլիճ և ջերմորեն ու խանդավառ արտահայտություններով դիմավորվում առաջնորդ հոր, քահանայից դասի, ազգային-եկեղեցական մարմինների և խուռներամ հավատացյալների կողմից: Սրտագին հյուրասիրության ժամանակ ողջույնի և բարիգալստյան ճառեր են փոխանակվում, ինչպես նաև հուշանվերներ:

ՌՈՒՍԱՑ, ՀԱՅՈՑ ԵՎ ՀՈՒՆԱՑ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐԸ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐԻ ՄԵՋ. ԵՐՈՒՍԱՂԵՄ

Մայիսի 6-ին, շաբաթ օրը, ժամը 12-ին, տ. Կորյուն ծ. վարդապետը, ընկերակցությամբ քաղաքական ժողովի անդամների, հանուն Դամասկոսի հայ համայնքի, ռուսաց վանքում պաշտոնական այցելություն է տալիս Սրբազան Պատրիարքին և արժանանում նրա օրհնությանը:

Մայիսի 8-ին, երկուշաբթի օրը, Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքին Դամասկոսի օդանավակայանում ճանապարհում են նաև տ. Կորյուն ծ. վրդ. Մանվելյանը, տ. Շավարշ քահանան և Դամասկոսի ազգային-եկեղեցական մարմինների ներկայացուցիչներ:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը մեծ ուրախությամբ է արձանագրում Մոսկվայի և համայն Ռուսաստանի Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի այցելության արձագանքները Եգիպտոսի, Դամասկոսի հայոց եկեղեցիներն ու համայնքները, Երուսաղեմի հայոց ս. Հակոբյանց պատմական ու դարավոր վանք, որպես պայծառ վկայություն մեր օրերում հայ և ռուս եկեղեցիների և նրանց հոգևոր պետերի ի Քրիստոս եղբայրության և սիրո անկեղծ զգացմունքների, ինչպես նաև հայ և ռուս եղբայրական ժողովուրդների դարավոր բարեկամության:



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Այսու լիազորված ենք հայտարարելու, որ Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը, ընդառաջելով կարևոր թվով եպիսկոպոսների առաջարկություններին, որոշեց Հայաստանյայց եկեղեցու եպիսկոպոսաց ժողովը հետաձգել 1973 թվականի աշնանը՝ առավել ժամանակ տալու համար, որպեսզի ուսումնասիրվի ու քննարկվի ծիսական բարեկարգությանց ծրագիրը:

Նույն նպատակով այս տարի, նոյեմբերին, Մայր Աթոռ պիտի հրավիրվի եպիսկոպոսաց ժողովի ծիսական բարեկարգությանց հանձնաժողովը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

10-ը հուլիսի 1972 թ.,
Ս. Էջմիածին

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հուլիսի 2-ին, կիրակի: Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

* * *

Հուլիսի 9-ին, կիրակի.—Վարդավառ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մասիս աբեղա Գալստյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը Քրիստոսի պայծառակերպության հոգևոր ու բարոյական մեծ նշանակության մասին, ինչպես մարդկային ազգի պատմության, այնպես էլ յուրաքանչյուր հավատացյալի կյանքի մեջ:

* * *

Հուլիսի 10-ին, երկուշաբթի.—Հիշատակ մեռելոց:

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան արարողություն «Վասն համօրէն ննջեցելոց»:

* * *

Հուլիսի 11-ին, երեքշաբթի: Այսօր երեկոյան ժամը 19-ին Վեհափառ Հայրապետի նախագահությամբ Վեհարանում գումարվում է Գերագույն Հոգևոր խորհրդի հերթական նիստը:

* * *

Հուլիսի 16-ին, կիրակի: Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես քհն. Մարուքյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

* * *

Հուլիսի 23-ին, կիրակի: Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

* * *

Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի միաբան, դիվանապետ և ժառանգավորաց վարժարանի տեսուչ տ. Շահե ե-

պիսկոպոս Ահեմյանը: Նա, մայր տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, Վեհարանում աջհամբույրով ստանում է Հայոց Հայրապետի օրհնությունը:

*
* *

Հուլիսի 30-ին, կիրակի: Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող, ԱՄՆ-ի Սպրինգֆիլտ քաղաքի հայոց հոգևոր հովիվ տ. Ներսես քհն. Ճեպեջյանը և քարոզում Մայր Աթոռ ս. Էջմիածնից և մայր հայրենիքից ստացած իր տպավորությունների մասին, հաղորդելով նաև իր համայնքի ողջույնները Մայր Աթոռի միաբանությանը:

Հավարտ ս. պատարագի ս. հաղորդություն են ստանում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող ԱՄՆ-ի հայոց եկեղեցու Երիտասարդաց կազմակերպության 20—25 անդամ-անդամուհիներ, որոնք տ. Ներսես քհն. Ճեպեջյանի գլխավորությամբ ժամանել էին Մայր Աթոռ և հայրենիք:

*
* *

Նույն օրը տ. Շահե եպս. Ահեմյանը հրաժեշտ է առնում Վեհափառ Հայրապետից և վերադառնում իր պաշտոնատեղին՝ Երուսաղեմ, Սրբոց Հակոբյանց վանք:



ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և Ամերիկայի Միացյալ Նահանգաց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի հրավերով այս տարի հոգևորականաց համագումարին մասնակցելու համար Մայր Աթոռից ապրիլի 28-ին Նյու-Յորք են մեկնում՝ Մայր Աթոռի միաբան և հոգևոր ճեմարանի դասատու տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը և Օրջոնիկիձեի հայոց ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ տ. Կարապետ քհն. Գըլըճյանը:

Հոգևորականաց համագումարը այս տարի տեղի է ունեցել մայիսի 2—3 օրերին Նյու-Յորքի նահանգի Ուոթըրուիլիթ քաղաքի ս. Պետրոս եկեղեցում՝ մասնակցությամբ 28 հոգևորական պատգամավորների:

Համագումարի պաշտոնական բացումից և դիվանի ընտրությունից հետո, հատենի ժողովի ընթերցվում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնությանն և ողջույնի գիրը, որն ունկնդրվում է հոտնկայս:

Համագումարին ներկա է լինում նաև Մայր Աթոռի միաբան, Ռումինիայի և Բուլղարիայի հայոց առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը, որը ԱՄՆ-ի հայոց առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի հրավերով գտնվում էր այնտեղ:

Համագումարում տ. Տիրայր սրբազանը, հանուն Հայոց Հայրապետի, ողջունում է համագումարի բացումը և հաղորդում անձամբ Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները: Տիրայր սրբազանը մասնակցում է համագումարի աշխատանքներին և այնուհետև հանդես գալով ոգեշունչ ու հայրենասիրական ելույթներով իր այցելած քաղաքներում:

Մայր Աթոռի մյուս երկու պատգամավորներն էլ՝ տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը և տ. Կարապետ քհն. Գըլըճյանը, նույնպես մասնակցում են համագումարի աշխատանքներին, դասախոսություններ են կարդում, ապա լինում են կազմված ծրագրի համաձայն, Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի մի շարք քաղաքներում, որտեղ ս. պատարագ են մատուցում, Բանին կենաց քարոզությամբ մխիթարում հավատացյալներին, հաղորդում Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները և վերածնված Հայոց աշխարհի խանդավառ խաբրիկներով խանդավառում ամերիկահայ ժողովրդի հայրենակարոտ սրտերը:

Տ. Գևորգ վրդ. Սերայդարյան

Մայիսի 3-ին դասախոսություն է կարդում հոգևորականաց համագումարում «Տոմարի անցած փուլերը և բարեփոխությունները հայոց մեջ» թեմայի շուրջ և ապա պատասխանում ժողովականների մի շարք հարցերին:

Դասախոսությունը ունկնդրվում է մեծ հետաքրքրությամբ և որոշվում է այն թարգմանել անգլերենի:

Մայիսի 7-ին տ. Գևորգ վարդապետը ս. պատարագ է մատուցում Նյու-Յորքի հայոց ս. Վարդան Մայր տաճարում և քարոզում «Ես եկի զի զկեանս ունիցիք և առատ ունիցիք» բնաբանով:

Ս. պատարագից հետո տ. Գևորգ վարդապետը մասնակցում է մայրերի օրվա հանդիսությանը, ուր և դասախոսում է «Մայրերի դերը ընտանեկան դաստիարակության գործում» թեմայի շուրջ:

Մայիսի 8—13-ը տ. Գևորգ վարդապետը այցելում է Նյու-Յորքի տեսարժան վայրերը, ապա հիվանդանոցներում գտնվող հայ հիվանդներին և մխիթարում նրանց:

Մայիսի 14-ին տ. Գևորգ վարդապետը պատարագում է Նյու-Ճըրզիի հայոց ս. Խաչ եկեղեցում և քարոզում «Քում ամենազօր և հրաշալի գալստեան քո, Տէր, երկիր պագանեն զօրք հրեշտակաց» բնաբանով:

Մայիսի 17-ին տ. Գևորգ վարդապետը այցելում է Վաշինգտոնի հայոց եկեղեցին, ուր ընդունվում է տ. Բաբգեն եպս. Վարժապետյանի կողմից, ապա այցելում է մայրաքաղաքի տեսարժան վայրերը:

Երեկոյան Վաշինգտոնի հայոց եկեղեցուն առընթեր սրահում տ. Գևորգ վարդապետը դասախոսություն է կարդում «Հոգևոր ճեմարանը այսօր» թեմայի շուրջ:

Մայիսի 22-ին տ. Գևորգ վարդապետը պատարագում է Պրովիդենսի հայոց ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցում և քարոզում «Ես աղաչեցից զՀայր և նա մխիթարիչ տացէ ձեզ» բնաբանով:

Մայիսի 22-ին տ. Գևորգ վարդապետը Պրովիդենսում հրապարակային դասախոսություն է կարդում ս. Էջմիածնի դերի և նշանակության, ինչպես նաև հայոց վերածնված ժողովրդի մասին:

Մայիսի 23-ին Մեսեչուսեցի նահանգի Սփրինգֆիլտ քաղաքի հայոց եկեղեցուն առընթեր սրահում տ. Գևորգ վարդապետը հանդես է գալիս Մայր Աթոռ ս. Էջմիածին վանքի պատմության և հոգևոր ճեմարանի կյանքի վերաբերյալ շահեկան դասախոսությամբ:

Մայիսի 24-ին տ. Գևորգ վարդապետը Ուոտերտաուն քաղաքում մասնակցում է տեղի հայ մանկապարտեզի սանիկների ամավերջի հանդիսությանը, իսկ **մայիսի 25-ին** Բոստոնի հայոց ս. Երրորդություն եկեղեցուն առընթեր սրահում դասախոսում է հայ ժողովրդի կրոնասիրական, հայրենասիրական բարձր զգացմունքների մասին:

Մայիսի 28-ին տ. Գևորգ վարդապետը ս. պատարագ է մատուցում Սփրինգ Ֆիլտի հայոց ս. Հովհաննես Ավետարանիչ եկեղեցում և քարոզում հոգեգալստյան տոնի հոգևոր նշանակության մասին:

Հունիսի 4-ին Մայր Աթոռ ս. Էջմիածնի տոնի առիթով Նյու-Յորքի հայոց ս. Վարդան Մայր տաճարում պատարագում և քարոզում է տ. Գևորգ վարդապետը՝ «Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա» բնաբանով:

Տ. Կարապետ քհն. Գլըճյան

Մայիսի 2-ին տ. Կարապետ քհն. Գլըճյանը հոգևորականաց համագումարում կարդում է «Ի՞նչ է պատվիրում Հիսուսը մեզ այսօր» թեմայի շուրջ, դասախոսություն, որն ունկնդրվում է մեծ հետաքրքրությամբ:

Մայիսի 7-ին պատարագում է Նյու-Ճըրզի նահանգի Իունյըն Սիթի քաղաքի ս. Խաչ եկեղեցում և քարոզում «Արդ, եղերուք դուք կատարեալք որպէս և Հայրն ձեր կատարեալ է» բնաբանով:

Մայիսի 14-ին տ. Կարապետ քահանան պատարագում է Նյու-Յորքի հայոց ս. Վարդան Մայր եկեղեցում և քարոզում «Ելանեմ ես առ Հայրն իմ և առ Հայր ձեր և Աստուածն իմ և Աստուած ձեր» բնաբանով:

Մայիսի 21-ին տեր հայրը պատարագում է Մեսեչուսեց նահանգի Ուոտերտաուն քաղաքի ս. Հակոբ եկեղեցում և քարոզում «Ես աղաչեցից զՀայր և այլ մխիթարիչ տացէ ձեզ, զի ընդ ձեզ բնակեսցէ ի յաւիտեան» բնաբանով:

Մայիսի 28-ին Լովել քաղաքի ս. Վարդանանց եկեղեցում պատարագում է և քարոզում «Միշտ անշարժ պահեա զԱթոռ Հայկազնեայս» բնաբանով:

Հունիսի 4-ին, ս. Էջմիածնի տոնի օրը, տ. Կարապետ քահանան պատարագում է Նյու-Ճըրզի նահանգի Թենաֆլայ քաղաքի ս. Թովմաս հայոց եկեղեցում և քարոզում «Եկայք շինեսցուք սուրբ զվտորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց ձեզ լոյս ի Հայաստան աշխարհի» բնաբանով:

Մայիսի 15—16 օրերին տ. Կարապետ քահանան լինում է Ֆիլադելֆիայում, այցելում իր ազգականներին, իսկ **մայիսի 17—18** օրերին անցնում Վաշինգտոն, ուր տեղի հայոց եկեղեցում, հանրության առաջ, հանդես է գալիս Մայր Աթոռ ս. Էջմիածնի և վերածնված Հայոց աշխարհի և ժողովրդի մասին հայրենասիրական դասախոսությամբ:

Մայիսի 20—29 օրերին տ. Կարապետ քահանան այցելում է Ուոտերտաուն, Քեմբրիջ, Սփրինգֆիլտ և Լովել քաղաքներ և հանդիպում ունենում տեղի հոգևոր հովիվների և հավատացյալների հետ:

Տ. Կարապետ քահանան հրապարակային և ընտանեկան հավաքույթների ժամանակ հանդես է գալիս Հյուսիսային Կովկասում գտնվող հայ եկեղեցիների և այնտեղ պաշտոնավարող հայ քահանաների, հոգևոր հովիվների և ժողովրդի հոգևոր կյանքի մասին:

Ամեն տեղ Մայր Աթոռի երկու պատգամավորները վայելում են եղբայրական ջերմ հոգատարությունը, առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի, տ. Տիրան արքեպ. Ներսոյանի, տ. Բաբգեն եպս. Վարժապետյանի, իրենց այցելած քաղաքների վարդապետ կամ քահանա հոգևոր հովիվների և հայ հավատավոր ժողովրդի գուրգուրանքն ու ուշադրությունը:

Մայր Աթոռի երկու ներկայացուցիչները ս. պատարագից հետո եկեղեցիներին առընթեր սրահներում հանդիպումներ են ունենում հայ համայնքի անդամների, մտավորականների, արվեստագետների, քույր եկեղեցու ներկայացուցիչների հետ, ամեն տեղ խոսում եկեղեցասիրության, էջմիածնասիրության և հայրենասիրության մասին, պատասխանում իրենց տրված բոլոր հարցերին, վեր հանում Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնության ներքո ափյուռքի պայմաններում հայ եկեղեցու և հայ հոգևորականության կատարած հոգևոր դաստիարակչական, ինչպես նաև հայապահպանման շնորհակալ աշխատանքները և հեռավոր Ամերիկայի հյուրընկալ հողի վրա ապրող մանավանդ երիտասարդ հայորդիների սրտերը խանդավառում ս. Էջմիածնով և վերածնված Հայոց երկրի պայծառ ապագայով:

Հունիսի 10-ին տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը և տ. Կարապետ քհն. Գոլոճյանը, որպես Մայր Աթոռի ներկայացուցիչներ մասնակցելուց հետո հոգևորականաց համագումարին և իրենց հոգևոր առաքելությունը բարեխղճորեն կատարած, վերադառնում են Մայր Աթոռ ս. Էջմիածին:





ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔՀՆ. ՄԱՐՈՒՔՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ ՄԵՐ ՕՐԵՐԻՆ

(Զեկուցում 1971 թ. հոկտեմբեր 6—9 ս. Էջմիածնում տեղի ունեցած քահանայից համագումարի ժամանակ):

Արշակունիների թագավորության անկումից շուրջ 500 տարի հետո՝ 9-րդ դարի վերջերին, Արծրունիների և Բագրատունիների թագավորության հաստատումով Հայաստանում սկսվում է ինչպես տնտեսական կյանքի աշխուժացման, այնպես էլ մշակութային վերելքի խաղաղ մի ժամանակաշրջան: Զարգանում է հայ ճարտարապետությունը, քանդակագործությունը, մանրանկարչությունը, հոգևոր երաժշտությունը: Ստեղծվում է մեր միջնադարյան ճարտարապետության կոթող Անին, կառուցվում են հարյուրավոր վանքեր և եկեղեցիներ, որոնք նոր շունչ ու երանգ են տալիս հայ ճարտարապետությանը:

Այս շրջանում հայտնի վանքերն էին Կամրջաձորի, Հռոմոսի, Նարեկա, Հաղբատի, Սանահինի, Տաթևի վարդապետարանները, Սևանի անապատը և ուրիշներ: Այս վանքերն ու մենաստանները եղել են ոչ միայն գերերկրային խոկումների, ճգնողական կյանքի վայրեր, այլև գիտության օջախներ, որտեղ գալիս էին հայ ժողովրդի ընտիր, հավատավոր զավակները՝ լույս, հավատք ստանալու, իրենց միտքն ու հոգին բանալու ժամանակի գիտության առաջ, որպեսզի իրենք էլ իրենց հերթին դառնային հայ մշակույթի ջահակիրներ:

Ժամանակաշրջանի տիրապետող ոգին կրոնական էր: Աստուծո և աշխարհի ունայնության գաղափարը, քրիստոնեական ոգին և հատկապես հազարամյա վարդապետության քարոզը, աշխարհի մոտալուտ վախճանը՝ այս բոլորը մթնոլորտը դարձրել էին ավելի կրոնաբույր:

Մեր հայ իշխանները իրենց հոգու փրկության համար ջանք չէին խնայում անցողիկ իրենց կյանքը լցնելու բարեգործություններով, վանական շենքերի ու վանական կյանքի ստեղծումով: Եվ այսպես զարգանում էր անապատական կյանքը, ճգնավորական կյանքը:

Հայ գրականությունը այս շրջանում ունեցավ իր փայլուն ներկայացուցիչը հանձին Գրիգոր Նարեկացու:

10-րդ դարի երկրորդ կիսամյակի սկզբին, 951 թ., ծնվեց Գրիգոր Նարեկացին, Ռշտունյաց կամ Անձևացյաց գավառի գյուղերից մեկում: Նա շուտ որբացավ, չտեսավ մորը և չվայելեց նրա գուրգուրոտ խնամքը, բայց Հայաստանյայց եկեղեցին այդ որբուկի մայրը դարձավ, սնեց իր գրկի մեջ ու

արբացրեց: Նարեկացու «Մատյան ողբերգության» աղոթագիրքը հայ հավատացյալը իր սնարի տակ դրեց, հիվանդության ու նեղ օրերին դարձնելով այն իր մխիթարության գիրքը: Նա եղավ «մեղագիրն ու դեղագիրը ամեն հայու տան» (Գարեգին եպս. Սըրվանձտյան):

Գր. Նարեկացու կենսագրության մասին մեզ չեն հասել մանրամասն տեղեկություններ:

Նա սովորել է Վանա ծովի հարավային ափի մոտ գտնվող Նարեկա վանքում: Բարձր ժայռի կատարին թառած Գր. Նարեկացու ճգնարանի առաջ անմիջապես բացվում է Վանա ծովը իր գեղեցկությամբ, դիմացը երևում են Աղթամար և Առուտեր կղզիները, իսկ ավելի հեռվում բարձրանում են Մոկաց և Ռշտունյաց բարձրագագաթ լեռնաշղթաները: Բնության այս հրաշալի շրջապատում մեծանում ու իր ամբողջ կյանքն է անցկացնում Գրիգոր Նարեկացին: Նա Ապարանից խաչի պատմության և նրան հաջորդող ներբողների հիշատակարանում իր մասին գրել է. «Ես Գրիգոր՝ յետին վարժապետաց և կրտսերն բանասիրաց, որդի դստեր եղբօր հօր Անանիայի հոգեզարդ և մտավարժ փիլիսոփայի, և ըստ վարուց մաքրութեան կրօնից գովելոյ և հռչակելոյ»: Կամ «Ողբերգության Մատյանի» հիշատակարանում գրում է. «...Գրիգոր կրօնաւոր քահանայ, յետինն բանահիւսաց և կրտսերն վարժապետաց»:

Նարեկացին իր ուսումն ստացել է հոր և Անանիա Նարեկացու շնչի տակ, որոնք սոսկ կրոնավորներ չէին, այլ ժամանակաշրջանի ամենապայծառ գիտնական, գրագետ, աստվածաբան և փիլիսոփա: Պրպտող ընթերցասեր պատանին իր մտավոր և հոգեվոր սնունդը ստանում է Աստվածաշնչից, հայ ինքնուրույն և թարգմանական գրականությունից, ժողովրդական ստեղծագործությունից:

Նարեկացին երկար չապրեց: 52 տարեկան հասակում՝ 1003 թ. վախճանվեց: Նրա կարապի երգը հանդիսացավ հայ գրականության գլուխ-գործոց «Մատյան ողբերգության»-ը:

Դժբախտաբար մեզ լրիվ հայտնի չէ Գր. Նարեկացու ստեղծագործության ամբողջական պատկերը: Մեզ հասել են՝ ա) Դանձեր—թվով երեք, բ) Տաղեր և մեղեդիներ—քսանից ավելի, գ) Մի թուղթ թոնդրակեցիների դեմ գրված, դ) Մեկնություն երգոց երգվույն—պատվիրված Վասպուրականի Գուրգեն թագավորի կողմից, ե) «Պատմություն Ապարանից խաչին և ներբող ս. Խաչի և ներբող ս. Աստվածածնի»—հանձնարարված Մոկաց Ստեփանոս եպիսկոպոսի կողմից, 989 թվից հետո, զ) «Ներբող առաքելոց», է) «Ներբող ս. Հակոբայ Մծբնայ Հայրապետին» և ը) «Մատյան ողբերգության»:

Նարեկացին իր տաղերով և «Մատյան ողբերգության» պոեմով դարձավ հայ գրականության վերածննդի դարաշրջանի մեծ բանաստեղծը, նա մեր գրականության նախորդ դարաշրջանների նվաճումները այնպիսի բարձրության հասցրեց, որ դադարեց միայն մեր ազգի սեփականությունը լինելուց: Նա դարձավ համամարդկային հնչեղությամբ այնպիսի ապրումների, զգացումների, իդեալների, երազների, խոկումների հանճարեղ երգիչը, որի նմանը այդ ժամանակաշրջանում չեն ունեցել ո՛չ Եվրոպայի, ո՛չ էլ Արևելքի ժողովուրդները:

Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունների նկատմամբ չթուլացող հետաքրքրություն է ցույց տվել մեր մտավորականությունը հնուց անտի: Հիշատակություն կա, որ Գրիգոր Նարեկացու մասին առաջին մեկնությունները գրել են Սարգիս Շնորհալին և Գրիգոր Սկևռացին 12-րդ դարում, որոնց գործերը մեզ չեն հասել:

Ամենահինը և ծավալունը Հակոբ Նալյան պատրիարքի «Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ» աշխատությունն է՝ տպված Կ. Պոլսում 1745 թ.:

Գր. Նարեկացու և ընդհանրապես հայ հին մշակութային արժեքների հանդեպ հայագետների մոտ հետաքրքրությունը սկսվում է 19-րդ դարի առաջին կիսամյակում:

1827 թ. Մխիթարյան միաբան Հ. Գաբրիել Ավետիքյանը տպագրում է մի համառոտ մեկնություն «Նարեկ աղօթից համառօտ և զգուշաւոր լուծմամբ բացայայտեալ մի անգամ, և այժմ երկրորդ անգամ յաւելուածով» (նարեկալուծ), (Վենետիկ, ս. Ղազար):

Արշակ Չոպանյանը առաջինն էր, որ մեր գրականության մեջ 1895 թ. «Ծաղիկ» ամսագրում լուրջ մոտեցում ցուցաբերեց Գր. Նարեկացու ստեղծագործությունների հանդեպ և գրեց «Գրիգոր Նարեկացին» հոդվածը:

Գրվեցին այլ և այլ հեղինակների կողմից ուսումնասիրություններ , վերլուծականներ, թարգմանությունների կապակցությամբ առաջաբաններ, հոդվածներ: Մեզ ծանոթ նման աշխատություններ կատարել են.

ա) Արևմտահայ մեծանուն բանաստեղծ Միսաք Մեծարենցը—«Նարեկացիին հետ».

բ) Մանուկ Աբեղյան—«Մատեան ողբերգութեան».

գ) Գյուտ եպիսկոպոս Ղազարյանց—«Արեւելեան անապատականը» և «Նարեկ»-ը, (Երուսաղեմ, 1937 թ.).

դ) Ստ. Մալխասյանց—«Գր. Նարեկացի»

(«Էջմիածին», Դ տարի, 1947, մայիս-հունիս, էջ 31—42).

ե) Եղիշե վարդապետ (Եղիվարդ)—«Նարեկը հայ գրականության մեջ», (Երուսաղեմ, 1947 թ., «Սիոն» ամսագիր, 1—8 համարներ).

զ) Գարեգին եպիս. Տրապիզոնցի—«Մատյան ողբերգության» թարգմանության առաջաբանը.

է) Թորգոմ պատրիարք Գուշակյան—«Մատյան ողբերգության» առաջաբան, (1926 թ.).

ը) Հակոբ Օշական—Կատարել է վերլուծության փորձ («Սիոն», 1941 թ., 10—11—12 համարներ և 1942 թ. 1—2).

թ) Գրիգոր Ա. Սաֆարյան—«Գր. Նարեկացի և իր աղոթամատյանը»:

Մեզ մոտ՝ սովետահայ մտավորականությունը մեծ հետաքրքրություն ցուցաբերեց Դր. Նարեկացու ստեղծագործությունների հանդեպ:

Նման աշխատություններից են.

ա) Աշոտ Մկրտչյանի՝ հեռակա մանկավարժական ինստիտուտի համար պատրաստած դասագրքում Նարեկացուն նվիրված բաժինը (նյութեր 10—18-րդ դարերի հայոց գրական պատմության, պր. Ա., Եր., 1945 թ.).

բ) Արշավիր Միսիթարյանի «Տաղեր»-ի թարգմանությունը և ներածությունը, (Երևան, 1957 թ.).

գ) Մկրտիչ Մկրյանի «Գր. Նարեկացի» մենագրությունը, (Երևան, 1955 թ.).

դ) Վարագ Առաքելյանի աշխատությունը Նարեկացու ոճի և լեզվի հարցերի շուրջը (մի քանի գլուխ տպագրված «Էջմիածին» ամսագրում).

ե) Պարույր Սևակի «Գրիգոր Նարեկացի» հոդվածը («Հայրենիքի ձայն», 1966 թ., № 4(26):

զ) Կարպիս Սուրենյանի «Անծանոթ աշխարհ» հոդվածը, («Սովետական Հայաստան» ամսագիր, 1968 թ., № 3).

է) Հայկ Գասպարյանի «Գր. Նարեկացին և Արևմուտքի գրական միտքը» հոդվածը, («Սովետական Հայաստան» ամսագիր, 1968 թ., համար 3—4, էջ 42—45):

ը) Վաչե Նալբանդյանի առաջաբանը Վազգեն Գևորգյանի «Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի (1970 թ., Երևան) թարգմանության առթիվ:

Արևմտահայերենով «Մատյան ողբերգության»-ի լրիվ թարգմանությունը առաջին անգամ կատարել է Միսաք Գոչունյանը (Քասիմ) 1902 թ., երկրորդ լրիվ թարգմանությունը՝ Թորգոմ արքեպս. Գուշակյանը 1926 թ., իսկ երրորդ թարգմանությունը՝ Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնցին՝ 1926 թ., որը ունեցել է երկու հրատարակություն:

Հայաստանում առաջին անգամ «Մատյան ողբերգության»-ը թարգմանվել է Մկրտիչ Խերանյանի կողմից 1960 թվականին Երևանում: Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության»-ը ոչ լրիվ, սակայն գեղագիտական մեծ ճաշակով թարգմանել է Վազգեն Գևորգյանը 1970 թ.: Նարեկացու տաղերի թարգմանության առաջին փորձը մեզ մոտ կատարել է Արշավիր Միսիթարյանը:

Գրիգոր Նարեկացին ոչ միայն համալսարանական ծրագրով ուսումնասիրելի հեղինակ է, այլև մեր միջնակարգ դպրոցի ծրագրով ևս մատչելի է յուրաքանչյուր հայ պատանու:

*
* *

Նարեկացին թարգմանվել է նաև օտար լեզուներով: Եվրոպայում, վերածննդյան շրջանում, բարեկարգականները (ռեֆորմատորները) լատիներեն են թարգմանել Նարեկացու Մատյանը:

1886 թ. բելգիացի արևելագետ Ֆելիքս Նևը առաջին անգամ ֆրանսերենի թարգմանեց Նարեկի 41-րդ և 80-րդ գլուխները: Ըստ հեղինակի, Նարեկացին «Հայաստանի ամենանշանավոր հոգևորականներից մեկը» է:

Գրիգոր Նարեկացու ստեղծագործության արժեքն ու համաշխարհային նշանակությունը ֆրանսիական ընթերցող հասարակությանը ծանոթացնելու գործին առաջին անգամ լրջորեն ձեռնամուխ եղավ ականավոր գրող, հրապարակախոս, քննադատ և թարգմանիչ Արշակ Չոպանյանը:

1900 թ. «Մերկյուր դը ֆրանս» թերթում նա տպագրեց մի ուսումնասիրություն, որտեղ մեջ էր բերել 30 հատընտիր հատվածներ: Իսկ 1902 թ. «Պոեմ Արմենիեն» ժողովածուի մեջ բերում է իր թարգմանության մի շարք նոր հատվածներ:

Ա. Չոպանյանի թարգմանությամբ, առաջին անգամ լինելով, ֆրանսիական գրական շրջանակներին հայտնի դարձավ Նարեկացին:

Գրող և գրաքննադատ Էդմոն Պիշոնը բարձր է գնահատել Նարեկացու գործը և համարել է նրան ջահ, որը ժամանակի խորքից իր շողերն է արձակում հետագա դարերի հայ գրականության վրա:

Քննադատ Գաբրիել Մուրեի գնահատությամբ «Գր. Նարեկացին միջնադարի ամենատարօրինակ, ամենահյութեղ և բառիս արդիական իմաստով ամենաարվեստագետ միստիկ բանաստեղծն է, որը գիտցավ իր հույզերն արտահայտել ամենաբուռն ուժգ-

նությամբ, ամենավառ գույներով և ամենայն շոշափելիությամբ»:

Վիպասան Պոլ Ատմին հատկապես նշեց, որ Նարեկացին «հավերժացրել է հոետորության արվեստի ամենազարմանալի ձևերը» և «ոգեշնչել է բնությունը՝ հայկական հանճարին հատուկ քնքշությամբ»:

Անգլիայում Զապել Բոյաջյանը 1916 թվին Նարեկից անգլերենի է թարգմանել երկու գլուխ և զետեղել իր «Հայկական լեգենդներ և բանաստեղծություններ» ժողովածուի մեջ:

Նարեկացու տաղերից երկուսը ռուսերենի թարգմանվեցին Վալերի Բրյուսովի կողմից և հրատարակվեցին 1916 թ. լույս տեսած «Պոեզիա Արմենիի» ժողովածուի մեջ:

1922 թ. իտալացի արևելագետ Ուբալդո Ֆալդաթին «Բեսարին» հանդեսում տպեց Նարեկացու «Մատյան»-ի 12-րդ և 80-րդ գլուխների իտալերեն թարգմանությունը: Ըստ նրան, բանաստեղծի վառ երևակայությունից բխող պատկերների մեջ խտացված են «Հայ դասական լեզվի բոլոր գեղեցկությունները, բոլոր գանձերը ու դարձվածքները»:

1950—51 թթ. «Կահիե դյու Սյուդ» հանդեսում տաղանդավոր բանաստեղծ Լյուք Անդրե Մարսելը տպագրեց Նարեկացու «Մատյան»-ից կատարած իր թարգմանության որոշ հատվածներ, որոնց վրա հետագայում թե՛ «Մատյան»-ից և թե՛ «Տաղեր»-ից այլ հատկանշական մասեր ևս ավելացնելով «Գր. Նարեկացի» խորագիրը կրող գիրք լույս ընծայեց՝ ներածական մի ընդարձակ և խոր ուսումնասիրությամբ հանդերձ:

Նարեկացու թարգմանության կապակցությամբ կարծիքներ են հայտնել գրականագետ Ժան Բալարը, Նոբելյան մրցանակի դափնեկիր Սեն-Ժոն Պերսը, «Ֆիգարո Լիտերեր» հանդեսի գրաքննադատ Անդրե Ռուսոն և ուրիշներ:

Ահա թե ինչ է ասում Անդրե Ռուսոն.

«Ասացեք, խնդրեմ, որևէ մեկը թելադրե՞լ է Նարեկացուն կամ Հոմերոսին, որ այդ ձևով գրեն: Ով կարող է այդպիսի բան ասել: Նույնն է Բեթհովենի կամ Միքելանջելոյի պարագան: Նրանք գրել, երգել և նկարել են ինքնուրույնաբար: Ոչ ոք չի կարող որևէ բան փոխել նրանց դյուցազներգության, համանվագի կամ նկարի մեջ: Մեզ մնում է կարդալ, ունկնդրել ու դիտել, մեզ մնում է ուրախանալ, տառապել ու հուզվել այն ապրումներով, որ նրանցից յուրաքանչյուրը դրել է իր ստեղծագործության մեջ»: (Անդաստան, Փարիզ, 1960 թ., № 11, էջ 49—64, Կ. Փոլատյան, «Զրույց Անդրե Ռուսոյի հետ»:

«Մատյան ողբերգության» պոեմի ֆրանսերեն լեզվով լրիվ թարգմանությունը կատարել է հայր Սահակ Քեշիշյանը 1961 թ.: Թարգմանիչը 14 տարի աշխատել է իր թարգմանության վրա:

«Լիվր է լեկտյուր» գրական հանդեսի քննադատ Վ. Վիտտերմը և «Ռեվյու դե զետյուտ Բիզանտին» բանասիրական հանդեսի տեսաբան Ռ. Ժանինը և ուրիշներ բարձր գնահատեցին Նարեկացու պոեմը:

Այս նոր թարգմանությունը գրավեց նաև օտար հոգևորականների, աստվածաբանների ուշադրությունը: Նրանք թեմատիկ-գաղափարական ընդհանրություններ գտան Նարեկացու և Արևմուտքի միջնադարյան հայրերի՝ ս. Օգոստինոսի, Բեռնարտոսի և ուրիշների երկերի միջև:

Լիբանանցի Ժորժ Աբլին ֆրանսերենից արաբերենի է թարգմանել Նարեկի մի քանի հատվածներ: Իսկ իրանցի գրող Աբդուլլահ Թավաքյոլը պարսկերենի է թարգմանել Նարեկից երեք հատված և գրել՝ մի ուսումնասիրություն:

Նարեկացին իր ներաշխարհի ինքնատիպությամբ և խորությամբ խոսքի բացառիկ ուժով դեռևս տարիներ առաջ ուշադրությունն է գրավել ազգիս Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա-ի, ներշնչել Նրան: Նա մեծ սիրով ու նախանձախնդրությամբ ձեռնամուխ է եղել Գր. Նարեկացու հրաշակերտը ռումին հասարակությանը ծանոթացնելու նվիրական գործին՝ թարգմանելով որոշ հատվածներ «Մատյան ողբերգության» պոեմից:

Անգլերեն լեզվի է թարգմանել Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը Նարեկից մի հատված, որը զետեղված է «Պատարագամատույցի» մեջ:

*
* *

Նարեկացու ստեղծագործության հերոսը տառապող մարդն է իր բոլոր հակասություններով: Մարդը մարմնականի և հոգեկանի, իրականության և իդեալի, աշխարհայինի և երկնայինի մեջտեղում տապակվում է: Հոգին թռիչքներ է գործում, իսկ մարմինը ետ է պահում նրան:

Նարեկացու իդեալը կատարյալ մարդն է:

Գր. Նարեկացին իր «Մատյան ողբերգության» պոեմի յուրաքանչյուր գլուխը սկսում է «Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի: Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ» բառերով: Տառապալից խոսքերով սկսվող Նարեկի 95 գլուխներն էլ հայոց վիշտը, անհատակ ծով վիշտը, դարերով կուտակված մեր ժողովրդի ապրումներն ու

զգացումները ընդգրկող գլուխներ են: Ահա թե ինչ է գրում «Ֆիգարո լիտերեր» հանդեսի գրաքննադատ Անդրե Ռուսոն. «Լիրևէ մեծ գրականություն նախ և առաջ ենթադրում է ծաղկած մշակույթ: Մեկուսի թվացող հանճարներն անգամ հանկարծ չեն բուսնում սունկի նման: Վերցնենք Նարեկացուն: Գիտե՞ք, թե ինչպիսի ապրումներ են պայմանավորել նրա ծնունդը: Նարեկացուն ծնունդ տալու համար հայ ժողովուրդը պետք է դարեր շարունակ մշակած լիներ մտքերը, խորապես ըմբռնած, ճաշակած ու մարսած լիներ քրիստոնեությունը: Նարեկացու ժողովուրդը պետք է նրա չափ տառապած լիներ, նրա պես պայքարած մեղքի դեմ, հանուն հոգեկան վեհության, հանուն արդարության: Այսպես է եղել նաև Հոմերոսի, Դանթեի, Շեքսպիրի պարագան»: («Անդաստան», Փարիզ, 1960 թ., համար 11, էջ 49—64, Կ. Փոլատյան, «Զրույց Անդրե Ռուսոյի հետ»):

Մեր բանասիրության մեջ կա երկու մոտեցում Գր. Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի նկատմամբ: Մի մասը պոեմը համարում է զուտ կրոնական ստեղծագործություն, իսկ մյուս մասը՝ զուտ գեղարվեստական գործ: Ծայրահեղությունները միշտ էլ հեռացնում են մարդկանց ճշմարտությունից: Ինչ խոսք, պոեմը Է՛ և մնում է հայ ժողովրդի աղոթագիրքը, հայ Աստվածաշունչը, գեղարվեստական ինչպիսի՜ կատարելությամբ գրված: Ինչպես լեռները բնության ընդերքի, տարերքի ժայթքումն են, այնպես էլ Գր. Նարեկացին մեր ժողովրդի հավատքի, ապրումների, բողոքի, հոգեկան տառապանքների, տվայտանքների պոռթկումն ու մորմոքն է:

Միջնադարյան նոր ժամանակաշրջանի բանաստեղծ Գր. Նարեկացին իր տաղերով ու «Մատյան ողբերգության» գործով նորարար է գրականության և արվեստի իր յուրահատուկ հասկացողության մեջ: Մինչ այդ, մեր շարականագիրները իրենց գործերով մնում էին Աստվածաշնչի շրջանակներից ներս, նրանց խոսքը, ոճը, լեզուն Աստվածաշնչի մոտավոր բառերով էին արտահայտված: Նարեկացին դուրս է գալիս այդ ծանոթ շրջանակներից ու նոր խոսքով հիմնովին փոխում գեղագիտական չափանիշներն ու արվեստի ըմբռնումները:

Որոշ բանասերներ Նարեկացու ստեղծագործությունների մեջ փորձեցին տեսնել արաբական, պարսկական, հունական գրականության ազդեցություններ: Փաստեր չկան վերոհիշյալ տեսությունը հաստատող: Նարեկացին զուտ հայկական մշակույթի ծնունդն է, մեր ժողովրդի ծոցում երկնված միտք ու սիրտ: Նրա գրականության հիմնական ակունքը մեր ինքնուրույն ու թարգմանական գրականությունն է, մեր ժողովրդական բանահյուսությունը և համամարդկային մշակույթի կոթող Աստվածաշունչը: Այլ խոսքով, Նարեկացին հայրենի բանավոր և գրավոր մշակույթի և համաշխարհային գրականության ծնունդն է:

Նարեկացիով գրականության մեջ մուտք է գործում հրաշափառ բնությունը, որի մեջ ապրում է մարդը: Միստիկ բանաստեղծը իր ճգնարանի խցիկում աղոթելիս՝ լսում է իր սրտին հասնող դրսի կյանքից ամեն մի շշուկ:

Նարեկացին միջնադարյան միստիկների նման չի մերժում, չի ժխտում մարմինը, ընդհան համարելով մեղքի աղբյուր: Նա ինքը անընդհատ կրկնում է, որ ինքը հողեղեն է և չի կարող կյանքից ու մեղքերից հեռու լինել, քանի որ ապրելիս անպայման ծնվում է մեղքը, չարիքը: Նա ուզում է, որ իրերի այս դրությունը փոխվի, վերանորոգվի մարդը, որովհետև մարդու անկումը չէ Աստուծո նպատակը, այլ անձնիշխան մարդու բարձրացումը թերություններից մինչև **Մարդ կատարյալը:** Մարդն աստվածանա և Աստված մարդանա. այս է հեղինակի ցանկությունը: Դրախտը ուզում է տեսնել այս աշխարհում, և այս բոլորը՝ աստվածային սիրով ու ողորմածությամբ:

Պոեմը հեղինակի մենախոսությունն է, ինքն իրեն և ապա Աստուծո հետ դեմ առ դեմ: Ինչքան մոտենում է Նրան, այնքան հեռանում է, որովհետև մարմնական մեղանչումները, մեղքը, նրան ետ են քաշում այդ Բարձրությունից: Եվ այդ մեղքերը իրենց ստորադաս մասերով անընդհատ աճում են:

Բայց, հեղինակը չի հուսահատվում և հոռետես չէ: Սխալ են նրանք, ովքեր «Նարեկի» մեջ տեսնում են միայն գետնաքարշ ինքնախարազանում, մարդկային արժանապատվությունների ոտնահարում: Մարդը Աստուծո պատկերն է և ինչքան էլ նա մեղանչի, չկարողանա հասնել իր իդեալին, այնուամենայնիվ, հույսը, հավատքը առ Աստված և սերը մարդու նկատմամբ վերելքի սանդուղքներն են, որոնք առաջնորդելու են նրան դեպի ապագա լուսավոր բարձունքները:

Նա իր հոգեկան փոթորիկը շոշափելի, տեսանելի դարձնելու համար դիմում է կյանքի բոլոր տեսակի օրինակներին, չի վախենում կրկնություններից, բնության պատկերների առատ օգտագործումից, և նրա մոտ կյանքը շարժուն վիճակում է վեր հանված:

Գր. Նարեկացու ձայնը, աղաղատանքը, պոռթկումը տարբեր երանգ են ստանում, նայած թե ինչ հոգեվիճակ է պատկերում

հեղինակը: Մարդը իր երկվությամբ, կյանքի հակասություններին մեջ մոլորված, երկու կրակների մեջ միշտ տանջվում է: Այս իմաստով հոյակապ է հայ գրականության մեջ անկրկնելի Նարեկացու հետևյալ պատկերը.

«Երկու ըմպանակ ունի ձեռքերում,
Մեկն արյունով լի, մյուսը՝ կաթով,
Երկու բուրվառներ կայծակնացնող,
Մեկը՝ խնկաբույր, մյուսը՝ ճենճահոտ,
Անոթներ՝ երկու համեմունք կրող,
Մեկը՝ քաղցրություն, մեկը՝ դառնություն,
Զույգ բաժակ՝ երկու պարունակությամբ,
Մեկը՝ արտասուք, մյուսը՝ ծծումբ,
Գավաթներ՝ բռնած մատների ծայրով,
Մեկի մեջ գինի, մյուսում՝ լեղի:
Տեսնում է բացված զույգ ներհակ դռներ,
Մեկը՝ դեպի լաց, մյուսը՝ վրիպում...»:
(Բան Լ—Բ) (Թարգմ. Վազգեն Գևորգյանի):

Եվ այսպես մարդկային տանջանքները կուտակվում են ու կիզում հեղինակին: Նա պատասխան չի սպասում Աստծուց. նա ուզում է հոգու անդորրություն, ցանկանում է երկվությունից ազատվել՝ կողմերից լավի հաղթանակով և խնդրում է, որ կյանքի դառնության բաժակը չմատուցվի իրեն, այլ մարդը վերանորոգվի, գտնի ինքն իրեն և դառնա իր իդեալին՝ Հիսուսին:

Նարեկացու ողբերգությունը լավատեսությամբ ողողված ստեղծագործ ոգու հաղթանակի արտահայտություն է: Իզուր չէ, որ մեր ժողովուրդը և՛ գիտակցությամբ, և՛ ներքին մղումով արբացրեց հեղինակին և գիրքը դարձրեց իր հանապազօրյա հացը:

Նարեկացու մատյանի յուրաքանչյուր գլխում սկսվող նույն վերնագիրը կրկնություն չէ, այլ միմյանց հետ կապ ունեցող, միմյանց լրացնող կիսատ թողնված խոսքի, աղոթքի, մրմունջի շարունակությունն է: Նույն մտածումների, զգացումների, մեղքի այլ և այլ տեսակների թվարկումը մի ուրիշ հեղինակի կողմից ամփոփված պիտի լիներ մի քանի էջերի մեջ: Իսկ Նարեկացին գնալով ավելի է բռնկվում ու տոչորվում և մարդկության մեղքը իր ուսերի վրա բեռնավորած քայլում դժվարությամբ, հևալով, ճչալով, բողոքելով, բայց և քաղցրությամբ, որովհետև նա տեսնում է լույսի այն շողը, որին մոտենալիս նա իրեն ավելի թեթև է զգում. նա չի վախենում իր հոգու բոլոր ծալքերը բաց անելուց, իր վիրավոր, արնոտ ներաշխարհը ցույց տալուց: Ամեն մի աղերս, բողոք ու ճչոց շատ բնական պատկերներով սահում են մեր աչքերի առաջից: Ընթերցողը շնչակտուր է լինում և հաճախ էլ ապշում՝ հաղորդակից լինելով նրա արվեստի վիթխարի կատարելությանն ու վայրի գեղեցկությանը: Նարեկացու գործը արտասովոր, բայց շատ հոգեհարազատ, ինքնատիպ մի գործ է համաշխարհային գրականության մեջ:

Նկարչությունն ու երաժշտությունը միաձուլված են նրա պոեմում, և այդ զգացվում է փոփոխական ձայնանկարի, կշռույթի չափերի մեջ: Ջրերի հորձանք և ամպերի որոտ,, գարնան պայծառ առավոտ և շունչ ենք զգում նրա պոեմի ու բանաստեղծությունների մեջ:

Նարեկացին նյարդ առ նյարդ զգացել է ալեծուփ կյանքը և շնչել իր մարմնի ամեն մի բջիջով, տառապել է մարդ արարածի կատարելության համար: Նա մահը ապրել է և սարսափելի, փշաքաղող պատկերներով տեսանելի է դարձնում այդ սարսռազդեցիկ, դժնդակ պահը.

«Զի ես, որ այժմ այսպես պերճախոս
Խրոխտաձայն եմ, սիգաքայլ, հպարտ,
բարձրապարանոց,
Այնժամ մեկնված՝ պիտ պառկեմ որպես
Անկենդան դիակ, անխոս, անլեզու,
Ձեռքերս կապված, խեղ անդամներով,
Շրթունքներս խուփ, աչքերս փակված,
Իբր անշարժ տախտակ, կիսայրված
խանձող,
Անզգա արձան, անբարբառ պատկեր,
Անշունչ գոյություն, խղճալի տեսիլ,
Եղկելի կերպար, ողբալի տիպար,
Ողորմելի դեմք, արտասվալի տեսք, համրացած լեզու...»:
(Բան ՀԳ—Բ)

Խոսքերը գնալով դառնում են ավելի մռայլ ու նույնիսկ հողի տակից լսելի, նրա աղաչանքները դառնում են ավելի սրտաճմլիկ: Նա խնդրում է Քրիստոսին այդ պահին իսկ իրեն չլքել: Ինչքան էլ դատաստանը ահավոր լինի, նա հավատում է, որ Աստուծո լույսը, ձեռքը իր իսկ ստեղծած մարդուն վեր պիտի բարձրացնի:

Հեղինակը ինքը կանխագուշակել է իր գործի կատարելիք դերի մասին՝ նրանով մաքրվելու են ընթերցողների միտքն ու հոգին: Նրանով մարդը գտնելու է իր փրկության ճանապարհը:

Անսպառելի է Նարեկացու երևակայությունը, պատկերների անսահման առատությունը: Պոեմի սկիզբն իսկ մի շշմեցնող պատկեր է՝ անհունորեն գեղեցիկ ու առինքնող.

«Սրտիս դառնահեծ հառաչանքների
Վայն ու ողբաձայն աղաղակները
Վերընծայում եմ քեզ, ով գաղտնատես,

Եվ իմ սասանված մտքի ճենճերող
Իղձերի պտուղն ու բերքը դրած
Աննձ տոչորող թախծի կրակին՝
Կամքիս բուրվառով առաքում եմ քեզ»:
(Բան Ա—Ա)

Տվյալ խոհը կամ հույզը համեմատությամբ կամ փոխաբերությամբ ցայտուն դարձնելու նպատակով է նա օգտագործում բնությունից վերցված պատկերները: Նարեկացու փոխաբերությունները, էպիտետները անթիվ են, համարձակ, ինքնատիպ և ճաշակավոր:

Պոեմի գեղարվեստական հաջողվածությանն ու ներգործությանը մեծապես նպաստում է նրա տաղաչափության հարուստ կառուցվածքը: Բանաստեղծը դիմել է բանաստեղծական տարբեր չափերի, ստեղծել է երաժշտություն: Տաղերում և «Մատյան»-ում բանաստեղծական ռիթմը ուժեղանում է ձայնավորների և բաղաձայնների որոշակի կրկնությամբ: Նարեկում տիրապետողը բաղաձայնների հանգիտությունն է, որը ուժեղացնում է բանաստեղծության ընդհանուր երաժշտական կողմը:

Գրիգոր Նարեկացին հայ գրականության մեջ նույնքան հայտնի է նաև իր տաղերով, որոնք իրենց հետ բերեցին վերածննդյան բուրմունքը, շողն ու լույսը: Բնությունը նրա տաղերում հորդում է և հանդես է գալիս ոչ միայն որպես գեղեցկություն, այլև կենդանի և կենդանություն պարգևող մի մեծ ուժ: Կյանքի գեղեցկության իդեալը գտնվում է բնության մեջ, լինի դա արտահայտված տերևի, վարդի, արեգակի կամ գեղեցիկ կույսի պատկերով, միևնույն է: Բնությունը նրա համար ներշնչման աղբյուր է:

Նա ոչ միայն հանճարեղ բանաստեղծ է, այլև նկարիչ: Նկարագրում է լույսի և գույների թրթռուն, նուրբ խաղը:

Նարեկացու մոտ մարդն ու բնությունը մի միասնություն են կազմում: Նա «Մեղեդի Ծննդեան» տաղի մեջ գեղեցկորեն կերտել է Աստվածամոր կերպարը բնության սքանչելի պատկերներով.

«Ծավալվել են աչքերը ծով
Առավոտվա ծովի վրա ծիծաղախիտ,
Ինչպես երկու փայլակնաձև արեգակներ,
Ծողն է նման լուսացնցուղ այգաբացի»:
Կամ
«Բերանն երկթերթ, շրթունքներից վարդն է կաթում,
Լեզվի տավիղն էր քաղցր երգում հուզումնահորդ»:

Նարեկացին մարդուն համարում է բնության զարդը: Նա «Վարդավառ»-ին տաղում փառաբանել է արևը և բնությունը.

«Գոհար վարդն էր շղարշ առել
Արփիական վեհ վարսերից.
Ծավալվում էր հուսկ վերևում, վարսերից վեր
Ծաղկածիծաղ ծովն երկնային»:

Նա առաջինն էր մեր քնարերգության մեջ, որ կենդանի պատկերներով երգեց իր «Ցարութիւն» տաղում աշխատանքը և աշխատավորին: Գր. Նարեկացին հայոց լեզվի բառամթերքն և ոճերը սահմանափակ գտնելով իր հույզերն ու մտքերը արտահայտելու համար՝ դուրս է գալիս եղած սահմաններից և դառնում մեր լեզվի մեծագույն նորարարներից մեկը՝ իբրև ատաղձ ունենալով գրաբարի, ժողովրդական լեզվի հարստությունները և մանավանդ ինքնաստեղծ կարողությունը:

Բազմաթիվ հայ սերունդների մտավորականների համար Նարեկացին եղել է ուսուցիչ: Նա ապրել է մեր ստեղծագործողների երկերում և իր բարերար ազդեցությունն է թողել իր օրերից մինչև Մեծարենց ու Չարենց և շարունակում է իր արվեստի մոգական ազդեցության տակ պահել մեր երիտասարդ գրողներին:

Դարեր են անցել: Գրիգոր Նարեկացու անձի ու գործի հանդեպ հայ և օտար գրական շրջանների չթուլացող հետաքրքրությունը մի անգամ ևս ապացուցում է, որ արվեստի գործը միշտ էլ անմահ է մնում:

Հեղինակը զգալով իր գործի արժեքը, մեծությունը, նվիրում է այն գալիք սերունդներին «որպես անարյուն զոհաբերություն» և որպես պատգամ՝ բացականչում է.

«...Թող որ հոչակված հասնի ազգերին,
Ժողովուրդներին քարոզվի ի լուր,
Տպվի դռներին բանականության
Եվ զգայության սերմերի վրա դրոշմվի ամուր»:

Նա հավատում և ինքնավստահ է, որ ինքն անմահ է.

«...ու թեպետ որպես մի մահկանացու պիտի վախճանվեմ,
Բայց այս մատյանի հարակայությամբ կըմնամ անմահ»:

Այսօր էլ մարդը կարիք ունի հոգեկան խաղաղության, կատարելության և աղոթքի: Նարեկացին այդ ուղին լուսավորող համաշխարհային գրականության մեջ հայ ջահակիրն է: Նա հայ ժողովրդի անկեզ մորենին է Մասիս սարի կատարին: Մոտեցեք նրան ոտաբոբիկ ու գլխահակ՝ լսելու համար հայի Աստուծո ձայնը, արվեստի աստուծո ձայնը:

Տ. ԵՆԵ ՔԱՀԱՆԱ ԲՐԱՆԻՇՏԵ

(Բուխարեստի աստվածաբանական ինստիտուտի պրոֆեսոր)

ՌՈՒՄԻՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՐԴԻ ԿՅԱՆՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՀԱՐՑԵՐ*

Ռումին ուղղափառ եկեղեցին այսօր՝ ուղղափառ ժամանակակից քրիստոնեության շրջանակում, ամենամեծ, ամենաճանաչված և ամենագնահատված ինքնագլուխ (ազգային) ուղղափառ եկեղեցիներից մեկն է: Վայելելով այսօրվա Ռումինիայում բոլոր տեսակի կրոնական դավանություններին տրված ազատությունը, արդի Պատրիարք Ն. Ս. Հուստինիանոսի իմաստուն ղեկավարությամբ (1948 թվականից) այս եկեղեցին վերջին քառորդ դարի ընթացքում զգալի առաջընթաց է ապրել իր կյանքի բոլոր բնագավառներում, որն էլ ավելի բարձրացրեց նրա հեղինակությունը ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտասահմանում:

Սա Ռումինիայում ամենամեծ թվով հավատացյալներ ունեցող եկեղեցին (քրիստոնեական խոստովանանք) է. ավելի քան 14 միլիոն մարդ ռումին ուղղափառներ են, ազգաբնակչության ընդհանուր՝ 21 միլիոն թվից՝ ունենալով ավելի քան 9.000 քահանաներ և 11.000 եկեղեցիներ (պաշտամունքի վայրեր):

Ռումին ուղղափառ եկեղեցու հավատացյալների կրոնական կյանքը ծավալվում է հատկապես աստվածային պաշտամունքի շրջանակում, որը, ինչպես և արևելյան բոլոր եկեղեցիներում, կազմում է ուղղափառ բարեպաշտության կենտրոնը, ներշնչման

---

* Հայոց Հայրապետի մասնավոր հրավերով մայիսի 16—24 օրերին Մայր Աթոռում էր գտնվում ռումին օրթոդոքս եկեղեցու պատվիրակությունը, որի կազմում էր նաև Բուխարեստի աստվածաբանական ինստիտուտի պրոֆեսոր, արժանապատիվ տ. Ենե քահանա Բրանիշտեն (տես «Էջմիածին», 1972, № Ե, էջ 9—14):

Արժանապատիվ տ. Ենե քահանան մայիսի 20-ին հոգևոր ճեմարանի հարկի տակ կարդաց իր սույն առաջին դասախոսությունը և պատասխանեց ներկաներից շատերի և մանավանդ ուսանողների հարցերին:

Մայիսի 23-ին տ. Ենե քահանան կարդաց իր երկրորդ դասախոսությունը, «Հայ եկեղեցու և ռումեն օրթոդոքս եկեղեցու ծիսական ընդհանրությունները» թեմայի շուրջը:

«Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում բովանդակալից առաջին դասախոսության հայերեն թարգմանությունը, որը կատարել է Բուխարեստի հայոց ս. Հրեշտակապետաց եկեղեցու հոգևոր հովիվ և Մայր Աթոռի միաբան տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանը, որը ռումին օրթոդոքս եկեղեցու պատվիրակությանը ուղեկցում էր որպես թարգման:

առաջին աղբյուրը և արտահայտության գլխավոր ձևը: Ինչպես և ուղղափառ ուրիշ ժողովուրդների մոտ, որոնք մինչև մեր դարի շեմքը ապրել են օսմանյան ստրկության ճնշման տակ, **աստվածային պաշտամունքը՝** այսինքն եկեղեցիներում կատարվող սուրբ արարողությունների ամբողջությունը, երկար ժամանակ եղել է քրիստոնեական միակ դպրոցը, որտեղ ռումին ժողովուրդը սովորել է ինչ կարծել Աստուծո մասին, ինչպես երկրպագել և մեծարել Նրան և ինչպես ապրել ընդհանրապես. և նույնպես եկեղեցիներում, մասնակցելով տոնական օրերի աստվածային արարողություններին, ռումին ուղղափառ հավատացյալները սովորեցին հավատի և ազգի համերաշխության, եղբայրության ոգին, մարդկության և արդարության, կրոնական և ազգային հանդուրժողականության զգացումը, լայն հասկացողությամբ և մարդկայնությամբ վերաբերվելով բոլոր նրանց, ովքեր այլ ցեղի և այլ հավատի էին պատկանում, և որոնց հետ համագոյակցել է իր ալեկոծ պատմության ամբողջ ընթացքում: Դրա համար էլ «ուղղափառություն» ռումին հավատացյալ ժողովրդի համար նշանակում է, առաջին հերթին, պաշտամունքի միատի հանախում տոնական օրերին, իր և երեխաների մկրտությունը եկեղեցու ավազանի սրբացած ջրի մեջ, կրոնական պսակը օջախի և ընտանիքի ստեղծման առիթով, «տերտերով» և «եկեղեցական արարողությամբ» թաղումը, քրիստոնեական մեծ տոների (Զատիկ, Հոգեգալուստ, Ծնունդ, Մը-կըրտություն և այլն) հետ կապված մեռելների պաշտամունքի և պապենական բարքերի և սովորույթների ավանդական ձևերի սրբությամբ կատարումը:

Այսպես է բացատրվում, թե ինչու այսօր էլ ռումին ուղղափառ եկեղեցու հավատացյալները իրենց կրոնական կյանքն ապրում են հատկապես եկեղեցի գնալով և տոնական օրերի աստվածային արարողություններին մասնակցելով: Եկեղեցիների մեծ մասը բաց են, հատկապես քաղաքներում, նաև աշխատանքի օրերը, բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են և կարող են մտնել եկեղեցի՝ աղոթելու, սրբապատկերների տակ մի մոմ վառելու, «մի պատարագ» կամ «մի ակատիստ» տալու կամ էլ քահանային փնտրելու՝ կրոնական տարբեր կարիքների բավարարման նպատակով: Մեծ հարգանք են վայելում ռումին ուղղափառ հավատացյալների կողմից առանձնապես քրիստոնեական մեծ տոները, որոնց հետ կապված են շատ հին բարքեր, ավանդություններ և սովորություններ՝ Ծնունդը (25 դեկտեմբեր), Ամանորը (1 հունվար), Մկրտությունը (6 հունվար), ս. Զատիկը՝ ուղղափառության ամենամեծ տոնը, Հոգեգալուստը, Աստվածամոր վերափոխումը (15 օգոստոս), ս. Խաչի վերացումը (14 սեպտեմբեր) և այլն: Այս տոների առթիվ, ինչպես և տարվա չորս երկարատև պասերի ժամանակ, տարբեր տարիների և սոցիալական դրության շատ հավատացյալներ խոստովանվում են և հաղորդվում: Մեծ թվով հավատացյալներ եկեղեցի են գալիս նաև ամենամեծարված սրբերի տոնակատարության օրերին, ինչպես ս. Դմիտրոս (26 հոկտեմբեր), ս. Բարսեղ Մեծն (1 հունվար), ս. Գևորգ (23 ապրիլ), ս. Հովհաննես Մկրտիչ (7 հունվար, 24 հունիս, 29 օգոստոս), ս. Առաքյալներ Պետրոս և Պողոս (29 հունիս) և այլն, մանավանդ այն եկեղեցիները, որոնք կրում են այս սրբերի անունները:

Ուղղափառ պաշտամունքի աստվածային արարողություններից ամենահաճախվածը, անկասկած, ս. պատարագն է՝ նոր օրենքի զոհաբերությունը և ուղղափառ հանրային աստվածային պաշտամունքի կենտրոնը: Շատ բազմամարդ են նաև բարձրաստիճան հոգևորականների արարողությունները, որոնք մատուցվում են մեծ շքեղությամբ, յուրահատուկ առիթներով, ինչպես Մայր տաճարներում քահանաների կամ եպիսկոպոսների ձեռնադրությունները, եկեղեցիների օծումը, եպիսկոպոսների այցելությունները իրենց թեմեր և այլն: Մարդաշատ են նույնպես եկեղեցիներում և գերեզմանոցներում կատարված թաղման արարողությունները (թաղումներ և հոգեհանգիստներ), մկրտություններն ու պսակադրությունները, բայց հատկապես Զատկվա պասի հինգերորդ շաբաթվա և ամբողջ Ավագ շաբաթվա երեկոյան արարողությունները, հսկումները, առանձնապես այս շաբաթվա հինգշաբթի և ուրբաթ օրերի արարողությունները վայելում են, ինչպես և անցյալում, հավատացյալների զանգվածային և ակտիվ մասնակցությունը, քանի որ նրանք կազմում են, ինչպես իրավամբ ասվել է, մի իսկական «ուղղափառ պատարագային կյանքի գագաթ» (Ս. Բուլգակով, L'Ortodoxie, Փարիզ, 1932 թ., էջ 183):

Ննջեցյալների նկատմամբ հոգատարությունը, որն արտահայտվում է թաղման ավանդական արարողություններով (թաղումները և հոգեհանգիստները), սովորույթ դարձած ժամկետներում հիշատակումներով, նախահայրական ծեսերով ու բարքերով, որոնցով պահպանվում է ննջեցյալների հետ կապը, այս բոլորը կարևոր տեղ են գրավում ուղղափառ եկեղեցու հավատացյալների կյանքում. այս հոգատարությունը առավելապես ցայտուն է տարվա երկու մեծ շաբաթ օրերին, երբ եկեղեցին կատարում

է բոլոր մեռելների ընդհանուր հիշատակումը և որոնք կոչվում են «Ննջեցելոց շաբաթներ», մեկը ձմեռվա (Վերջին դատաստանի կիրակիի նախօրյակին), մեկը՝ ամառվա (Հոգեգալստյան կիրակիի նախօրյակին), երբ մանավանդ հավատացյալ կանայք կատարում են ննջեցյալների հոգիների, հիշատակի և գերեզմանների նկատմամբ ավանդական պարտականությունները:

Հավատացյալների խնդրանքով կատարվում են խորհուրդներ և այլ ծիսակատարություններ եկեղեցու պատերից դուրս, ինչպես նոր տների օրհնությունը, ջրի սրբացումը, հիվանդների սնարին վերջին օծումը, ննջեցյալների պարբերական հիշատակման արարողություններ, ինչպես նաև տների «մկրտությունը», որը կատարվում է թեմերի ընդհանուր այցելության ժամանակ, եկեղեցական տարվա տարբեր օրերին (հատկապես Մկրտության տոնից առաջ):

Ռումին ուղղափառ եկեղեցու ձեռնարկած միջոցներից մեկն էլ հանդիսացավ եկեղեցիներում կրոնական արարողությունների ընթացքում հավատացյալների միատեղ երգեցողության առաջադրելը: Ինչպես և քրիստոնեական հին եկեղեցում, սուրբ պատարագի արարողության մասնակցող հավատացյալները հետզհետե աճող թվով երգում են պատարագային պատասխանների ժամանակ, եկեղեցական բուն երգիչների կողքին, ըստ սաղմոսական ավանդական մեղեդիների, որոնք միօրինակացված են մասնագետների կողմից և տպված են կրկնակի նշանագրությամբ (սաղմոսային և գծային): Աստվածային արարողության շրջանակում հավատացյալների՝ կրոնական երգեցողությանը մասնակցելը ռումին ուղղափառ եկեղեցում հեշտացվում է նաև այն հանգամանքի շնորհիվ, որ 16—17-րդ դարերից սկսած աստվածային արարողությունը կատարվում է ժողովրդի կենդանի լեզվով՝ ռումիներենով, որը խոսվում և հասկացվում է բոլոր հահավատացյալների կողմից, ի տարբերություն հունական և սլավոնական ժողովուրդների եկեղեցիների, որոնք դեռևս աստվածային արարողության ժամանակ օգտագործում են հին հունական լեզուն և, համապատասխանաբար, հին սլավոնական լեզուն, երկուսն էլ վաղուց գործածությունից դուրս եկած: Այն թեմերում, որտեղ գործադրվեց այս միջոցառումը, այն տվեց կրոնական կյանքի համար ամենաբարերար արդյունքները՝ նպաստելով եկեղեցիների հաճախումների ավելացմանը, հավատացյալների՝ աստվածային արարողություններին ակտիվ մասնակցելուն, նրանց եկեղեցաբանական (թեմի անդամների բարեխղճության) զգացումի զարգացմանը և աղանդավորական պրոպագանդայի կանխմանը:

Ռումին ուղղափառ եկեղեցու հոգևորականության և հավատացյալների կարևոր խնդիրներից մեկը **սուրբ վայրերի նկատմամբ հոգատարությունն է**՝ հին եկեղեցիների վերանորոգման, ամրացման և վերականգնման, նոր եկեղեցիների կառուցման, որտեղ որ դա անհրաժեշտ է, դրանց օժտման և զարդարման, ինչպես և մշտապես լավ վիճակում պահպանելու հոգը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում, այս տեսակետից, թեմական եկեղեցիների և ավելի հին վանքերի վրա, որոնք պատմության և արվեստի հուշարձաններ են և մաս են կազմում արվեստի և մշակույթի ազգային սեփականության: Նրանց պահպանման, վերականգնման և բարվոք վիճակում պահելու համար մտահոգվում է ոչ միայն եկեղեցու, այլև պետության ղեկավարությունը՝ Պատմական հուշարձանների վարչության միջոցով: Այս բնագավառում վերջին 25 տարիների ընթացքում ավելի շատ բան է իրագործվել, քան վերջին հարյուրամյակի ընթացքում, երբվանից մեզ մոտ մտահոգություն կա պաշտամունքի, պատմության և արվեստի հնամենի վայրերը ոչնչացումից փրկելու համար: Այս ժամանակամիջոցում վերանորոգվել են, ամրացվել և վերականգնվել գրեթե բոլոր թեմական եկեղեցիները և վանական միաբանությունները, իրենց համայն գույքով, որը արժեք է ներկայացնում ռումին պատմության և մշակույթի տեսակետից և ոչ միայն ուղղափառ, այլև երկրում գործող մյուս պաշտամունքներին պատկանողները նույնպես: Այս նպատակով ծախսվել են զգալի գումարներ, որոնք տրամադրվել են պետության և եկեղեցու կողմից: Այս հուշարձանները այսօր կազմում են երկրի փառքերից և արտասահմանյան ու ռումին զբոսաշրջիկներին ձգող կետերից մեկը, զբոսաշրջիկներ, որոնք հետզհետե աճող թվով այցելում են դրանց, տեղեկանալով նրանց հայրենիքի պատմության մեծ դերի մասին և հիանալով նրանց գեղարվեստական արժանիքներով, որոնք, որոշ դեպքերում, հանդիսանում են համաշխարհային արվեստի անկրկնելի արժեքներ, ինչպիսիք են, օրինակի համար, Մոլդովայի հյուսիսի արտաքին նկարչությամբ 16-րդ դարի հռչակավոր եկեղեցիները: Այս հուշարձաններից ոմանց հիմնադրման կամ կառուցման տարեդարձը վերածվում է իսկական ազգային տոնի, որին մասնակցում են պետական իշխանությունների, երկրի մշակույթի և արվեստի մարդկանց, կամ նույնիսկ ուղղափառ այլ եկեղեցիների ներկայացուցիչներ, ինչպես եղավ, օրինակի հա-

մար, Պուտնայի վանքի կառուցման 500 տարվա տոնակատարությունը (հուլիս, 1966 թ.), կամ Նեագոե Բասարաբ իշխանի՝ Կուրտեա դե Արջեշի վանքի հայտնի եկեղեցու օծման 450 տարվա տարեդարձը (օգոստոս, 1967 թ.), որին մասնակցեց, ուրիշների թվում, նաև երկրի հայ եկեղեցու սրբազան եպիսկոպոսը:

Ռումին ուղղափառ եկեղեցու վերջին ժամանակների կրոնական կյանքի պատմության մեջ արտակարգ նշանակություն ունեցող իրադարձություն եղավ **մի շարք ազգային սրբերի (ծագմամբ ռումինացիներ) սրբացումը և մի քանի ավելի հին սրբերի պաշտամունքի ընդհանրացումը, որոնց մասունքները պահվում են Ռումինիայում,** և որոնց առաջ մատուցվում էր միայն տեղական պաշտամունք: Հանդիսությունները տեղի ունեցան 1955 թվականի հոկտեմբերին, երբ տոնվեց նաև ռումին ուղղափառ եկեղեցու ինքնագլուխ դառնալու 70-րդ տարեդարձը և պատճառ եղան ոգեկան բուռն ապրումների պահերի: Այդտեղ մասնակցում էին մյուս ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչներ ևս, այսպիսով նպաստելով ուղղափառ ինքնագլուխ (ազգային) տարբեր եկեղեցիների միջև համերաշխության ամրապնդմանը: Այդ առիթով կանոնականացված սրբերից ոմանք (ինչպես Չերնիկայի ս. Հովվապետ Կալինիկը և Պարտոշ-Տիմիշոարայի ս. Հովվապետ Հովսեփ Նորն), որոնց մասունքները պահպանվում են, դեռևս ավելի վաղուց դարձել էին ժողովրդական երկրպագության առարկա, սրանով իսկ նպաստելով սրբերի պաշտամունքի ամրապնդմանը, ինչպես և ավելի հին սրբերը, որոնց մասունքները ավելի վաղ բերվել էին Ռումինիա և որոնք կարևոր դեր են խաղացել ռումին ուղղափառ եկեղեցու կրոնական կյանքի պատմության մեջ (Կուրտեա դե Արջեշի ս. Ֆիլոֆտեան, Ցասիի ս. Պարասկիվան, Սուչավայի ս. Հովհաննես Նորն և ուրիշներ):

Ռումին ուղղափառ եկեղեցու հավատացյալների կրոնական կյանքը անմիջականորեն ղեկավարում է և գտնվում իրենց քահանաների հսկողության ներքո. այդ կատարվում է պաշտամունքի շրջանակում (պատարագի կապակցությամբ) հատկապես քարոզի և ուսուցման միջոցով, ինչպես և հին եկեղեցում: Նկատվում է, իրոք, այս եկեղեցու քահանայության քարոզչական և ուսուցողական գործունեության մեջ ակնհայտ մի առաջադիմություն, ինչպես քարոզման ծավալի, այնպես էլ որակի տեսակետից, շնորհիվ հոգևորականության կուլտուրական մակարդակի անշեղ բարձրացման, քանզի **եկեղեցու ծառայողների կազմավորման համար անհրաժեշտ ուշադրությունը** հանդիսանում է ս. Սինոդի և Նորին Սրբություն Հուստինիանոս Պատրիարքի ծանր մտահոգությունը: Վերջինս, դեռևս այս եկեղեցու ղեկը իր ձեռքը վերցնելու առաջին օրերից, ռումին ուղղափառ եկեղեցուն հաղորդեց նոր ուղղություն և կյանքի նոր ոգի, ձգտելով այն վերածել այսօրվա իր հավատացյալներին օգտավետ մի հաստատության: Աստվածաբանական ուսուցումը, որն առաջ գործում էր պետական դպրոցներում, վերակազմակերպվեց նոր հիմքերի վրա և դրվեց եկեղեցու ղեկավարության, հսկողության և պատասխանատվության տակ: Ռումին ուղղափառ եկեղեցու ծառայողների պատրաստման համար նախատեսված երկու տեսակի դպրոցներում (ճեմարաններ և համալսարանական աստիճանի աստվածաբանական ինստիտուտներ), ապագա հոգևորականներին տրվում է ինչպես իրենց առաքելությունը կատարելու համար անհրաժեշտ աստվածաբանական զարգացումը, այնպես էլ կրոնա-բարոյական և քաղաքացիական շրջահայաց մի դաստիարակություն, որպեսզի դրանք դառնան և՛ եկեղեցու լավ ծառայողներ, և՛ հայրենիքի անձնվեր քաղաքացիներ: Ուսուցման դպրոցներն ավարտելուց հետո, (քահանաների ստվար մեծամասնությունը աստվածաբանական ինստիտուտների շրջանավարտներ են), նրանց աստվածաբանական զարգացումը ամբողջանում թարմացվում է, առօրյային տեղյակ է պահվում և բարելավվում, իսկ նրանց կողմնորոշումը ժամանակի խնդիրներում ապահովվում է աստվածաբանական հանդեսների ընթերցմամբ, քարոզչական կողմնորոշման դասընթացներով (որ յուրաքանչյուր հոգևորական պարտավոր է անցնել քահանայության առաջին հինգ տարիներից հետո, իսկ երկրորդ անգամ՝ քահանայության տասը տարիներից հետո), ինչպես և հատուկ զեկուցումներով, որոնք տեղի են ունենում երկու ամիսը մեկ անգամ:

Եկեղեցական ուսուցման կարիքների բավարարման, հոգևորականության աստվածաբանական զարգացման, ինչպես և իր հավատացյալների կրոնա-բարոյական ղեկավարման համար, ռումին ուղղափառ եկեղեցին ներկայումս ծավալում է **հրատարակչական** աշխույժ և հարուստ մի գործունեություն, որը ղեկավարվում է հատկապես ռումին պատրիարքության աստվածաշնչական և ուղղափառ առաքելության ինստիտուտի միջոցով: Տպվել են ճեմարանների և աստվածաբանական ինստիտուտների համար ձեռնարկներ, արարողության գրեթե բոլոր գրքերի նոր և բարելավված հրատարակություններ, հավատի մի նոր խոստովանու-

թյուն՝ երկու նշանագրությամբ (սաղմոսային կամ եկեղեցական և գծային) եկեղեցական երաժշտության գրքեր՝ ուսանողների, դպիրների և եկեղեցական երգչախմբերի գործածության համար, քարոզների հատորներ և Շարակնոցի մի նոր հրատարակություն, Աստվածաշնչի մեկ և Նոր Կտակարանի մի քանի նոր հրատարակություններ, աստվածաբանական ուսումնասիրությունների հատորներ, հավատացյալների համար աղոթագրքեր և տարեկան օրացույցներ, մենագրական բրոշյուրներ, արվեստի և պատմության եկեղեցական հուշարձաններով ծալովի գրքույկներ և տեսարաններ և այլն: Ամսական լույս են տեսնում ռումին պատրիարքության կենտրոնական երեք և միտրոպոլտական 6 հանդեսներ: Մինչև օրս լույս են տեսել Նորին Սրբություն Հուստինիանոս Պատրիարքի գրավոր ստեղծագործություններից 10 հատորներ, ընդհանուր՝ «Սոցիալական Առաքելություն», «Հոգևորականության համար օրինակներ և հորդորներ» վերնագրով, որի մեջ ընդգրկված են բարձր հովվապետի գրած և ստորագրած կոնդակները, քարոզները, հավուր պատշաճի ճառեր, հոգևորականությանն ուղղված հորդորներ, սիրո ուղերձներ, բանաձևեր և այլն: Սա ընդարձակ ստեղծագործություն է, այժմեական գործնական մեծ արժեքի և հոգևորականության համար անգնահատելիորեն օգտավետ, որտեղ ներկայացված է Հուստինիանոս Պատրիարքի պատկերացումը այսօրվա քահանայության և, ինչպես և հոգեվորականության հիմնական կոչման մասին՝ «Սոցիալական Առաքելություն»-ը, ժամանակի պահանջներին հարմարեցված և եկեղեցու ու հայրենիքի ծառայությանը դրված, ուրեմն Աստուծո և մարդկանց ծառայությանը: Այդ պատճառով, գլխավոր պարտականությունների՝ հավատացյալների կրոնական պահանջները բավարարելու, կատարման կողքին, ռումին ուղղափառ եկեղեցու ծառայողները իրենց ժամանակի ու գործունեության մի մեծ մասը հատկացնում են իրենց քաղաքացիական-հայրենասիրական պարտականությունների կատարմանը, պետական իշխանություններին աջակցելով բոլոր այն նախաձեռնություններում և գործողություններում, որոնք կոչված են երկրի նյութական և ոգեկան առաջադիմությունն ապահովելու, կենսամակարդակը բարելավելու և բարձրացնելու, հայրենիքի բոլոր որդիների համար ավելի երջանիկ ու ծաղկուն կյանք ստեղծելու:

Ի դեպ, նույն նպատակների իրագործմանն են մասնակցում նաև Ռումինիայում ապրող քրիստոնեական այլ դավանությունների և կրոնական պաշտամունքների հավատացյալներն ու հոգևորականները, որոնց հետ ռումին ուղղափառ եկեղեցու հավատացյալներն ու հոգևորականները եղբայրաբար գործակցում են: Իրավամբ, Ռումինիայի կրոնական դավանությանց ընդհանուր իրավակարգի վերաբերյալ այժմյան օրենքը (1948 թ.) հաստատեց կրոնական դավանությանց լիակատար հավասարությունը օրենքի առաջ, վերացնելով նրանց միջև գոյություն ունեցող դավանական անհանդուրժողականությունը և սկիզբ դնելով մի նոր մթնոլորտի՝ լիակատար հավասարության և փոխադարձ հարգանքի, բոլոր դավանությանց ծառայողների և հավատացյալների միջև փոխըմբռնման և համագործակցության՝ երկրի և ամբողջ մարդկության համար ընդհանուր հետաքրքրության հարցերում, ինչպես, օրինակ, խաղաղության ամրապնդման և պետությունների միջև լուրջ տարաձայնությունների լուծման, որպես միջոց պատերազմի վերացման համար աշխատանքը, պայքարը՝ ռասիզմի դեմ գաղութասիրության և իմպերիալիզմի վերացման համար, բոլոր ժողովուրդների սոցիալական արդարության, նյութական և հոգեկան առաջադիմության համար և այլն: Հուստինիանոս Պատրիարքի նախաձեռնությամբ Ռումինիայի կրոնական տարբեր դավանությանց պետերը պարբերաբար հանդիպում են և քննարկում այս բնույթի այժմեական հարցերից ոմանք, մշակելով ընդհանուր ուղերձներ և ցուցումներ ու հորդորներ տալով համապատասխան դավանության անձնակազմին և հավատացյալներին: Նույն նպատակով ուղղափառ աստվածաբանները հանդիպում են բողոքական և կաթոլիկ աստվածաբանների հետ միջդավանական աստվածաբանական կոնֆերանսներում, որոնք տեղի են ունենում տարեկան երեք անգամ (Բուխարեստ, Կլուժ, Սիբիու քաղաքներում): Այս կոնֆերանսներում ներկայացվում են հետաքրքրական զեկուցումներ և ենթազեկուցումներ, որոնց հաջորդում են լայն բանավեճ՝ քրիստոնեական բոլոր դավանությունների համար ընդհանուր հետաքրքրության նյութերի շուրջ՝ ձգտելով ձևակերպել այն տարբեր ուղիները և հնարավորությունները, որոնց շնորհիվ քրիստոնեական եկեղեցիները, անկախ նրանց միջև գոյություն ունեցող հավատի, պաշտամունքի և կազմակերպության տարբերություններից, կարող են համագործակցել այսօրվա մարդկության համար անհետաձգելի և ստիպողական հրատապության խնդիրների լուծման ուղղությամբ, ինչպես են խաղաղության ապահովումը, սոցիալական առաջադիմությունը, «երրորդ աշխարհին» օգնությունը,

քրիստոնեական միասնության իրականացումը և այլն:

Այսպիսով, ռումին ուղղափառ եկեղեցու ղեկավարությամբ իրականացվում է **տեղական, ներքին մակարդակի մի էկումենիզմ:** Ռումին ուղղափառ եկեղեցին միաժամանակ ծավալում է **արտաքին մակարդակի վրա էկումենիկ** մի լայն ու բեղմնավոր **գործունեություն:** Որպես եկեղեցիների էկումենիկ խորհրդի անդամ, նա մասնակցում է, իր պատգամավորներով, էկումենիստական գործունեությանը՝ քրիստոնեական այս խոշորագույն կազմակերպության ժողովներին, համագումարներին և խորհրդակցություններին, ինչպես նաև միջազգային և միջդավանական մյուս կազմակերպությունների աշխատանքներին (Պրագայի խաղաղության քրիստոնեական կոնֆերանսը, Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսը և Խաղաղության համաշխարհային խորհուրդը): Ռումին ուղղափառ եկեղեցին ուժեղացնում է նույնպես ուղղափառ մյուս եկեղեցիների հետ հարաբերությունների վերանորոգման և սերտացման գործողությունը, որոնց հետ համագործակցում է ուղղափառ ընդհանուր հետաքրքրության հարցերի լուծման խնդրում, հարցեր, որոնք կկազմեն ապա պանօրթոդոքս սինոդի օրակարգը և միաժամանակ հնարավոր բոլոր միջոցներով (փոխադարձ այցեր, խորհրդակցություններ, հրատարակությունների և ուսանողների փոխանակում, ուսումնասիրություններ և զեկուցումներ և այլն) ուժեղացնում է արևելյան հին եկեղեցիների (ոչ քաղկեդոնական) հետ հարաբերությունները, նկատի ունենալով արևելյան քրիստոնեության միասնության վերականգնման զրույցի կազմակերպումը: Այս գործունեության շրջանակում է արձանագրվում նաև Ն. Ս. Օ. Վազգեն Ա կաթողիկոսի հրավերով՝ ռումին ուղղափառ եկեղեցու պատգամավորության այս այցը հայ եկեղեցուն, այց, որը շարունակում է մեր եկեղեցիների և ժողովուրդների միջև բազմակողմանի, հինավուրց և սերտ կապերը, կապեր, որոնք ցանկանում ենք, որ է՛լ ավելի ամուր, բարեկամական և բեղմնավոր դառնան՝ հանուն քրիստոնեական միասնության իրագործման և աշխարհում խաղաղության հաստատման:



ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ-ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆԸ*

Վարպետների մեջ էլ, ինչպես երևում է, անհամաձայնություն է տեղի ունենում և մեծ վարպետը պահանջ է դնում փոքր վարպետին արձակել, որպեսզի ինքը կարողանա գործը գլուխ հանել և լավ թուղթ տալ: Կաթողիկոսը համաձայնվում է, արձակում է փոքրին և Պոլիս վերադարձնում: Դորանից հետո մեծ վարպետը նոր պահանջ է դնում, որ վեց տարվա պայման կապեն և վարձը տան, իրեն գործը վերջացնելու համար: Բայց կաթողիկոսը

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1972 թվականի №№ Դ—Ե-ից:

1775 ի Շիրազ՝ առ Մահմատ Էմինն վասն թղթաշինի:

«Թուղթ մի ևս առ Մահմատ Էմինն գրեաց: Որում և ծանոյց զգրելն առ տեղւոյ նուիրակ Ստեփաննոս և Աւետիք վարդապետսն վասն թղթաշինի: Եւ զթուղթն նոցա յղեաց առ նա զի տացէ նոցա և ի նոցանէ հարցեալ իմասցի զորպէսն թղթաշինին. զի թէ նոքա ըստ պատուիրի իւրոյ զթղթաշէնն պատրաստեալ են բերել ընդ իւրեանս, բարի է: Եւ եթէ ոչ՝ զիւր խոստացեալ թղթաշէնն յանձնեսցէ նոցա առ ի բերել ի սուրբ Աթոռս»:

Անդ, էջ 326

Ի Կարս առ Ալի փաշայն, առ Իբրահիմ Աֆանտին և առ յայլս: Խնդիր վասն թղթաշէն ֆուանկացն, զի յղեսցեն ի սուրբ Աթոռս:

Թուղթ սիրոյ առ Կարսայ Ալի փաշայն գրեաց (որ ի յօգոստ. ԺԶ(16) յիշեցեալ Է) յորմէ և խնդրեաց, զի վասն թղթաշինացն զոր ինչ գրեալ է Իբրահիմ Աֆանտուն, այնպէս արասցէ: Որում և ընծայ ևս յղեաց, որ էր Դ(4) լուլա զարպապ, Է(7) սպիտակ մոմ, Բ(2) ոնխա վարդաջուր և փոքր ինչ միրգ: Թուղթ սիրոյ ևս առ Իբրահիմ Աֆանտին (որ ի յունվ. ԺԶ(16) յիշեցաւ) փուռուլայ մի ևս գրեաց առ նա վասն թղթաշինացն: Զի արզ արարեալ փաշային յղել տացէ զնոսա ի սուրբ Աթոռ»:

Անդ, էջ 329

«Թուղթ ևս առ Իբրահիմ Աֆանտու Վեքիլախարճ պարոն Գէորգն գրեաց ի պատասխանի թղթոյն, (որ ի յնվ. ԺԶ(16) յիշեցեալ է) որ զորպէսն թղթաշինացն գրեալ էր ուրբաթան Վեհին, պատուէր՝ զի թէ նոքա թղթաշէնքն իցեն, ի ձեռն Աֆանտուն մուրախաս առնել տացէ նոցա: Իսկ թէ փաշայն չթողուցու զնոսա, ինքն այսքան Ծ(50) խարճի տացէ նոցա: Զորս և ի սէր ունիցի: Բայց յետոյ մեր Գէորգին պատուիրեաց ասել նմա, զի այսքան (1) խարճի տացէ նոցա»:

Անդ, էջ 330

«Վասն թղթաշինութեան գործեացն հաստ և մեծ փայտք պիտոյացան և յերկրոջս մերում ըստ այնքանութեան փայտք ոչ գտանեցան: Եւ լուաք թէ՝ ի մայրին Բամբակաձորու հաստ և մեծ փայտք շատ գոն: Վասն որոյ և սրբազան Վեհն զթղթաշէնսն ընդ մեր միրզային եղեալ յղեաց անդ, զի երթեալ տեսցեն զփայտն և որոց հաւանեսցին, նշանադրեալ, ցուցանիցեն արանցն մերոց, զի հատեալ բերցեն: Որոց աղագաւ առ Բաբաբէգն՝ Դամղուլին և Մահմատ աղայն ուրոյն ուրոյն զերիս թուղթս յանձնարարութեան գրեաց վասն թղթաշինացն, զի ի երթալն նոցա անդ, ի սէր ունիցին զնոսա, և բանից նոցա ձեռնտու լիցին: Որք եկին ի մարտի ԻԸ(28)»:

Անդ, 366

«Ծանոյց և զգալն (Զաքիկենց Գրիգոր աղային) թղթաշինացն ի ս. Աթոռս: Որք ի փետրվ. ԺԳ(13) եկեալ մտին աստ: Եւ թէ որպէս էին եկեալ և յՕսմանցւոց երկրոջն զի՞նչ պատահեալ նոցա և որքան մասրաֆ եղեալ վասն նոցա, զամէնն մի ընդ միոջէ յետոյ գրել

պահանջում է դեռևս յուր շնորհքը ցույց տալ: Նրանց միտքն էր մի կերպ փողերն ստանալ և ապա փախչել: Նրանք սկսում են միևնույն ժամանակ մեծամեծ ծախքեր անել տալ և դժվար պահանջներ դնել, որպես թե գործի հաջողության համար: Սիմեոն կաթողիկոսը նրանց բոլոր պահանջներին էլ բավարարություն է տալիս: Երկու տարի անցնում է, սակայն գործը մի քայլ

խոստացաւ նմա: Եւ յաւուր միում ի մէջ խօսից էհարց սրբազան Վեհն թղթաշինացն, թէ որպէ՞ս և ի՞նչ պայմանաւ եկիք: Ասացին թէ՝ բաց ի ճանապարհի մասրաֆեն Գ(3) տարի մնամք աստ, տարին մեկիս հազար ղռուշ վարձ լինի: Զայս ևս ծանոյց նմա»:

Անդ. էջ 369

Թղթաշենները տեսան ծառերը և եկան պատմեցին. «վասն որոյ և սրբազան Վեհն զԽաչատուր վարդապետն առաքեաց անդ. զի զվայտսն բերցէ ի ս. Աթոռս: Որոյ աղագաւ և Բաբաբէգին՝ Դամղուլուն Մահմատ Աղային և Մելիք Շաքարօյին զԴ(4) թուղթս գրեաց: Խնդրելով ի նոցանէ՝ զի ի հատանելն և բերելն Խաչատուր վարդապետին զվայտսն ի սուրբ Աթոռն, ըստ ամենայնի մուղայեթ և ձեռնտու լիցին բանիցն նորա: Եւ ընդ թղթոյն Ա(1) խառայ կապայ վասն Բաբաբէգին յղեաց սրբազան Վեհն, Գ(3) մահոդ կապայ վասն Շաքարօյին»:

Անդ. էջ 375

1776 հոկտ. 13 ի Պոլիս, ի Կարին և ի Կարս թուղթք, ընդ թղթաշէն փոքր ֆռանկին:

«Իսկ և ըստ որում ասացաւ, յամսոյս ԺԱ(11) թղթաշէն ֆռանկքն, տակաւին զլաւ իմն թուղթ ոչ հանին, զի և մեք միամտէաք և ուրախանայաք: Ուստի՝ ի մեծ տարակուսանաւ կալով մեր, ստիպէաք զնոսա միշտ, զի թէ զլաւ թուղթս հանել գիտեն, հանցեն, ապա թէ ոչ, տացեն մեզ ստոյգ իմն պատասխանի: Իսկ փոքր թղթաշէն ֆռանկն՝, որի անունն էր Մուսի Դէյսօր, զոր և Յովհաննէս կոչէին, դեռ մինչև ցարդ մեզ ոչ պիտոյացաւ: Քանզի՝ զթղթատունն համայն պարագայիւքն մեծ թղթաշէնն՝ որ Մուսի Բէյսօն՝ Յովսէփ ևս կոչիր, շինեցուցեալ ի գլուխ եբեր, ցուցանելով զչափսն և զձեւսն, և յօրինելով զամենայն յոյժ հաստատնագոյն:

Իսկ փոքր ամենևին բանի իմիք չպիտոյացաւ, զի ասէին թէ սա միայն լաւ թուղթ հանել գիտէ, և յորմէ հետէ եկին աստ, մինչ ցայժմ կայր պարապ և դատարկ: Իսկ յորժամ թուղթ հանելոյ ժամանակն եկն, յայնժամ բաց ի յոչ հանելոյն զլաւ թուղթ, սկսաւ ևս մեծաւ դժտութեամբ վարիլ առ ընկերն՝ և առ թարջիմանն իւրեանց, որ և եդ ի մտի գնալ յերկիր իւր և ոչ ետ հանգստութիւն ընկերացն, տաղտկացուցանելով և զլսելիս սրբազան Վեհին, ի ձեռն նոցին, թէ զիս յղեա յերկիրն իմ: Եւ սրբազան Վեհին տեսեալ թէ ոչ է իմիք պիտանացու և զընկերն ևս ոչ թողացուցանէ միամտութեամբ հետևիլ գործոյն, վասնորոյ թոյլ ետ նմա գնալ, զոր և յղեաց ի Կարս, և գրեաց Իբրահիմ Աֆանտուն, զի տարեալ իւր գիտեցեալ հաւատարիմ թաթարի միոյ ուղևորեսցէ զնա ի մեծն Պոլիս, զի տարեալ հասուսցէ առ պատրիարքն և զիւր վարձն անդ առնուցու ի նմանէ»:

Անդ. էջ 526—527

Թուղթ ևս առ Զաքիկենց Գրիգոր աղայն գրեաց ի Մադրաս.... «Որպէս ի մարտի ելն խոստացաւ նմա սրբազան Վեհն զկատարեալ որպէսն թղթաշէն ֆրանկացն յետոյ գրել ինքեան, ըստ խոստմանն իւրոյ ահա այժմ գրեաց, զի երկոքին թղթաշէնքն (որոյ միոյն անունն Յովսէփ էր և միւսոյն Յովհաննէս) ըստ խնդրոց Մուսի մլաջին և այս Գրիգոր աղայիս, և գիտութեամբ մուսի Դէվոյին ի ՌՉՀԴ թուոջ (1774) Փրկչին և յապրիլին ելեալ յերկրէն յիւրեանց, ի սոյն թուոջս և ի փետրվ. ԺԳ (13) եկեալ մտին ի ս. Աթոռս, և ճանապարհի խարճն ըստ լատինացւոց հաշուին մինչև ի Պոլիս եղել էր 1674 լիւռն, որ ըստ մեր հաշուոյն լինի 920 ղռուշ: Եւ ի Պոլիս 600 ղռուշ թաթարին էին տուեալ, որ եբեր զնոսա մինչև ի Կարին: 422 ղռուշ ևս իւրեանք էին խարճեալ: 200 ղռուշի չափ ևս ի Պոլիս՝ ագանելոյ, ձիոյ, այարի և այլ պիտանեաց էին խարճեալ: ԳՃ(300) ղռուշի չափ դրամ խարճեաց վասն նոցա, մինչև ի Կարսայ բերել ետ զնոսա ի ս. Աթոռս»:

Բացի այդ կաթողիկոսը նորից վճարում է ծախք 1550 ղռուռուշ, ապա վճարում է երկուսի ռոճիկը 1550 ղռուշ և հագնելիք ու ուտելիք պէտք է վանքը տար նմա:

«...Անա ի գարունս ի մարտ ամսոյն սկսեալ զքեարխանայն և զայլ տունսն և զգործիսն շինեցուցանեն: Տակաւին չեն աւարտեալ: Մեծ տունն մէկ մեծ եկեղեցւոյ չափ կլինի, տաշեալ քարամբք և կրով: Երկայնութիւնը Ի(20) գազ է և լայնութիւնն Թ(9) գազ»:

Անդ. էջ 418—19

առաջ չի գնում: Սիմեոն կաթողիկոսը խիստ նեղանալով, հասկանում է նրանց խաբեբայությունը և վարպետներին կանչելով՝ գործ է պահանջում: Այդ ժամանակ միայն վարպետները խոստովանվում են, որ ուխտել էին իրենց արհեստը ոչ ոքի չսովորեցնել: Կաթողիկոսը ստիպված է լինում փալախա բե-

---

Ի Թիֆլիզ՝ առ Թաղօյենց պ. Մկրտումն պատուէր, զի՝ թղթատանն աղագաւ Բ(2) փայտատաշ խառատ յղեսցէ: «Թուղթ գրեաց սրբազան Վեհն ի Թիֆլիզ առ երէցփոխան պ. Մկրտումն՝ ի պատասխանի թղթոյն, զոր ընդ Թասալուի Ցարութիւնին յղեալ էր: Եւ գրեալ էր սրբազան Վեհին թէ՝ աճա Բ(2) խառատ ի պատրաստի կան, եթէ կամիս՝ յղեցից: Գրեաց զի փութով Բ(2) փայտատաշ խառատ յղեսցէ: Վասն այն չարխաքաշ խառատ ոչ խնդրեաց ի նմանէ, զի թղթաշէն ֆռանկաց գործոյն փայտատաշ խառատ էր պիտոյ, այժմ»:

Անդ. էջ 461

1777 թ. հոկտ. 28 մեծ թղթաշէն մուսի Բէյսոնն էլ վերադարձաւ Ֆրանսիա: «Զի որովհետև ասէ, անօգուտ էր մնալն դոցա աստ, և յիրեանք ևս գնալ կամեցան, վասն այսորիկ աճա յղեցաք» գրում է Պոլիս Զաքարիա վարդապետ պատրիարքին*:

Ի Փարէզ, ի Մարչիլիա, ի Հնդիկս, ի Պոլիս, ի Կարին, ի Կեսարիա և ի Կարս.

«Այլ որովհետև աճա երթայր թղթաշէնն, ...վասն որոյ զթուղթս գրեաց ի Մարչիլիա աւ Շահրիմանեան Մարգար Աղայն, և ծանոյց նմա զգրելն յառաջ ի յապրիլի ԺԹ (19) զթուղթ, նա և Դէվօյին՝ և Գրիգոր Աղային, և յղելն առ ինքն ի վերայ Պոլսոյ: Իսկ և այժմ ծանոյց սմա զյղելն Բ(երկու) թղթաշէն փռանկացն միոյն յառաջ ի հոկտեմբերի ԼԸ(28) և միոյն դեկտեմբերի 6: Բայց, ասէ, վասն յիւրոյ ենենգաւորութեան, մնաց մինչ ի յունուար ամսոյն ԻԹ(29): Այլև՝ որպէս ի դեկտեմբերի Զ(6) առ Գրիգոր Աղայն, նոյնպէս և այժմ առ սա՝ գրեալ ծանոյց զամենայն ենենգութիւնս և զանպիտանութիւնս թղթաշինացն, որք ենենգաւոր մտօք ոչ հանին զլաւ թուղթ, և ոչ ուսուցին զաշակերտս, և զվեց տարւոյ վարձս խնդրէին, և այլ զոր ինչ չարութիւնս արարեալ էին՝ ի կարճոյ ծանոյց: Եւ թէ որպէս զերից ամաց վարձս երկուցն ետ լրիւ, թէպէտ Լ(30) ամիս էր, դեռ ելանելոյն երկրէն յիրեանց: Միոյն ԲՌԷԺ(2700) դրուշ և միոյն ԱՌԸԺ(1800) դրուշ, հանդերձ գալոյ և գնալոյ բոլոր խարճովն ճանապարհական: Եւ զայլ ամենայն բանս նոցին լրիւ ծանուցեալ՝ զայս գրեաց ապա, զի Դէվօյին ծանուցէ զայսոսիկ: Քանզի մեք, ասէ, ի պատճառս դոցա մինչ ի ԺԶՌ(16.000) վնաս կրեցաք, և ի դոցանէ մէկ օգուտ չտեսաք: Ասա, զի վասն Աստուծոյ դատաստան արասցէ, զի աստ մեր խօսելն անպատշաճ էր:

...Իսկ և որպէս ի վերն առ Մարգարն և Դէվօն և Գրիգորն, նոյնպէս և առ սա Զաքարիա վարդապետն գրեաց զենենգաւորութիւն թղթաշինացն:

...Մանաւանդ այսր նոր գնացօղ մեծ թղթաշինիս, որ խաբեաց զմեզ թէ՝ մինչև զփոքրն ոչ յղեցէք, ես ոչ կարեմ լաւ թուղթ հանել, և յորժամ յղեցաք, սկսաւ ասել թէ՝ ինձ ձեռագիր տուք, որ վեց տարւոյ վարձ տայք ինձ և ես լաւ թուղթ հանեմ և աշակերտ ուսուցանեմ, և երբ վերծանիմ, գնամ շուտով: Եւ մեք ասացաք, թէ շնորհդ ցոյց մեզ տեսցուք և ապա զայդպիսի խանդ ասա. նա սկսաւ նոր թուղթ հանել, քան զառաջինն վատթար և անպէտ: Որով և մեք զգուշեալ՝ այլ անօգուտ տեսաք զմնալն աստ, և յղեցաք. բայց շնորհօքն Աստուծոյ մեր տղայքն քան զդոսա լաւ թուղթ հանելոց են: Ցայս երկու տարիս, ասէ, այդ խաբեբայք յամենայն գործոց մերոց զմեզ արգելին, բացի վնասուցն, զոր յետոյ գրելոց եմ, ասէ»:

Անդ,3-րդ մասն, էջ 17—21

«Թուղթ առ Շահամիր Աղայն, դարձեալ նոյն՝ որ ինչ ի մայիս ԻԹ(29) հանդերձ յաւելուածովն, որ ի յունիսի ԺԲ(12): Եւ այժմ այս աւելի, զի որպէս յառաջ ի յունիսի ԺԲ(12): Մարութեան Յովսէփ Աղային ծանոյց զվերջին մեծ թղթաշէն ֆրանկին, որ վեց տարւոյ վարձ խնդրելոյ աստ լրբութիւն արար, և վերջապէս հաւանեցաւ Գ(3) տարւոյ վարձ առնուլ և գնացեալ ի Պոլիս, անդ ևս զնոյն լրբութիւնն արարեալ էր և վեց տարւոյ վարձ խնդրեալ և նոքա չէին տուեալ, ուստի միայն զճանապարհի ծախսն առեալ ի պատրիարքէն՝ ի Պոլսոյ մինչև յիւր յերկիրն ԲՃԼԳ(233) դրուշ, ելեալ գնացեալ էր անդ: Աստ ևս որ ի մէջ ԱՃԾ(150) դրուշ էառ, ի կողմանէ վարձուն, և ի Կարս առեալ էր ԱՃԺԷ(117) դրուշ՝ վասն ծախուց ճանապարհին և տանող թաթարին, մինչև ի մեծն Պոլիս. զայսոսիկ ևս ծանոյց»:

Անդ, էջ 198

* Դիւան Հայոց Պատմութեան, գիրք ԺԱ. Սիմէոն կաթուղիկոսի Ցիշատակարանը, մասն 3-րդ, վերջին, (1777—79, Թիֆլիզ, 1913, էջ 15:



«Գիրք Աղօթից որ կոչի զբօսարան Հոգևոր»-ի տիտղոսաթերթը. ս. Էջմիածին. 1772

րել տալ նրանց պատժելու համար: Միայն այդ ժամանակ վարպետները վեց ամիս ժամանակ են խնդրում թուղթ շինելու համար և իրենց հանձն առած բոլոր գործերը կատարելու: Սիմեոն կաթողիկոսը զիջելով նրանց ուզած ժամանակամիջոցը շնորհում է, բայց միևնույն ժամանակ նրանց վերա հսկող է

Վասն թղթատանն թուղթ հասարակ՝ տալ զշորահին:

«Եւ զի վասն թղթատանն ատ չգտանիւր ըստ բաւականին շորահին՝ ի քթանէ կամ ի բամբակէ՝ յորոց լինէր թուղթ, և ժողովելն ատի և անտի՝ էր յոյժ դժուարին և անձեռնհաս: Զի դրամով գնել ոչ լինէր, և այլ ինչ կերպ և հնար չգտանէաք: Ուստի, այժմ զայս գտաք հնար, զի Կիւրեղ անուամբ դերձակ ոմն յղեցաք, կա՛մ դրամով, կա՛մ այլ ինչ դիւրաձեռն հնարիւք ժողովել զշորահին վասն թղթատանն, և բերել ատ: Որ գնաց այժմ ի կողմանս Ալաշկերտու, Բասենու և Ախալցխայու և Կարսայ, և այլ նոցին մերձակայից: Վասն որոյ գրեաց ևս ընդ սմա զթուղթ օրինութեան հասարակապէս, զի ուր և հանդիպեսցի, օգնութիւն արասցեն, տալով զշորահին, վասն թղթատանն առ ի լինել նիւթ թղթոյն: Յետ այսր ի յՕշական գնացաք ի յեալայ ի յունիս ԺԷ(17)»:

Անդ, էջ 314—315



«Տաղարան փոքրիկ»-ի երկրորդ տպագրության տիտղոսաթերթը. ս. Էջմիածին. 1793

կարգում Իսահակ եպիսկոպոս Գեղամյանին, որի հոգացողությամբ կարճ ժամանակում թե՛ թղթաշինության գործարանն է պատրաստվում և թե՛ տպարանի համար թուղթ է հասնում 1775 թվին*:

Սիմեոն կաթողիկոսը նոր շինել տված թղթով առաջին անգամ տպել տվեց յուր **Պարտավճար** գիրքը, որի մի օրինակն ուղարկեց Գրիգոր աղա-

* Դիւան Հայոց պատմութեան, գիրք Գ, Սիմէոն կաթ.-ի Ցիշատակարանը, Թիֆլիզ, 1894: «Ազգապատում», Բ հտ., Կ. Պոլիս, 1914, էջ 3101:

յին և հայտնեց, որ ամբողջ գործարանի վերա ծախք է եղել 7800 թուման: Գրիգոր աղան տեսնելով յուր արտաքուին նվիրաբերության անդրանիկ պտուղը, վճարում է ամբողջ գումարը, ուղարկելով կաթողիկոսին իբրև շնորհակալություն 400 զույգ ընպանակներ, որոնց վերա գրված էր ոսկեգիր հայերեն տառերով՝ «Ի բարի վայելս Սիմէոն կաթողիկոսին, ի ՌՄԻԶ (1777) հայոց թուին»:

Սիմեոն կաթողիկոսը մի ուրիշ թղթով էլ թղթաշեն վարպետների խաբեբայության մասին է պատմում Գրիգոր աղային, ավելացնելով, որ չնայած դորան, թե նրանք իրենց պայմանը չկատարեցին և աշակերտներին ոչինչ չսովորեցրին, այնուամենայնիվ նրանց հաջողվել է թուղթ շինելու արհեստը հասկանալ և ավելի լավ են պատրաստում, քան վարպետները: Նույն գրության մեջ հիշում է, որ թուղթը շինված է Էջմիածնի անվամբ և նշանաբանով, խոստանալով, որ ինչպես տպագրատան, այնպես էլ թղթատան ճակատին գրել տալ Գրիգոր աղայի հիշատակը: Ինքը Գրիգոր աղան անգլիերենից թարգմանված մուրհակներ է ուղարկում լեզուն սրբագրելու և տպագրելու համար, որը և կաթողիկոսը կատարում է ուրախությամբ: Միևնույն ժամանակ հայտնում է նաև, թե ի հիշատակ այդ մեծ բարերարության Գրիգոր աղայի, **Զբօսարան** և **Տօնացոյց** գրքերը ձրիապես բաժանել է բոլոր եկեղեցիներին:

Ս. Էջմիածնի թղթագործարանում պատրաստված այս թուղթը բոլոր թերթերի վերա ուներ որոշ նշան, թերթի մի երեսի վերա տպված էր ս. Էջմիածնի անվան ջրանկար փակագիրը, որի տակը կար նաև երկու տառ Ս. Կ. (Սիմեոն կաթողիկոս), իսկ թերթի մյուս երեսին տպված էր բարերարի անվան սկզբնատառերը՝ Գ. Մ. (Գրիգոր Միքայելյան) և թղթաշինության գործարանի կառուցման հայկական թվականը՝ ՌՄԻԵ (1776):

Սիմեոն կաթողիկոսը 1774 թվին տպեց յուր պատրաստած **Տօնացոյցը**, որ յուր անունով էլ կոչվում է, որովհետև ինքն էր կարգավորել և երկու հատորի բաժանել: Վերջաբանի մեջ հիշում է, թե՛ Էջմիածնի տպարանի համար ինչ նեղություններ և քաշել և թե՛ ինչպես հետզհետե զարգանում ու ծաղկում էր տպագրության արվեստը Էջմիածնի տպարանում:

«Ահա հինգ ամ է,—ասում է նա,—յորս աշխատիմք և տքնիմք զի զարհեստս զայս ի ձեռն բերցուք և հաստատեսցուք ի սուրբ Աթոռոջս, զոր և հաստատեցաք իսկ Աստուծով: Յորում տպեցաք նախապէս զքանի հատ **Սաղմոս**, որ զտհասութիւնս շատ ունէր նկատմամբ տպեցմանն: Երկրորդապէս տպեցաք զփոքրիկ **Գիրքն Աղօթից** և ևս փորձելոյ աղագաւ զպարագայս գործոյս, որ թէպէտ հասուն էր քան զ**Սաղմոսն**, սակայն եւ ևս ունէր զտհասութիւնս ոմանս՝ որքան առ գործս այս: Ապա երրորդապէս տպեցաք զ**Տօնացոյցս** զայս, որ Աստուծով քան զնոսա հասուն է և կատարեալ»:

Մի քիչ հետո շարունակում է.

...«Ի մարդոց պիտանեաց ունիմք զմեծ սովս. գտանեցեալքն ևս անկիրթ և անյարմարք զնիւթոց հարկաւորաց և զայլոց պարագայից գործոյս ոչ զմի ունիմք առձեռն, այլ՝ զամենեսեան ի հեռուստ վայրաց բերեմք մեծաւ տաժանմամբ և տասնապատիկ ծախիւք: Եւ զայնս ևս ի յառ ձեռն բերելն մեր որպէս և իցէ, անդէն մրրկածին ժամանակն, և կատաղի ժամանակաւորքն որք զմեօք՝ միջաբեկ առնեն զմեզ և խափանեն զյառաջադրեցեալ կամս մեր»:

Յուր գրած հիշատակարանում Սիմեոն կաթողիկոսը չի մոռանում հիշելու նաև «զԻսահակ եպիսկոպոսն Գեղամացի, որ յամենայնի կարգաւորիչ և տնօրինիչ է գործոյս և գործավարացն սորին, անձանձիր աշխատեցմամբ:

Ընդամին և զտիրացու Յարութիւնն Էջմիածնեցի, որ է փորագրող և քանդակող բոլորից գրոց, պատկերաց, խորանաց, կանոնաց և ծաղկանց, նաև տպող գրքոյս...: Արժանի է յիշման և Շօնոթեցի Մկրտիչ արքեպիսկոպոսն, որ իբրու նախկին հեղինակ եղև գործոյս այսորիկ՝ որքան առ փորագրութիւնն ի պողովատեայս...: Գրիգոր Աղայն ջուղայեցի ի Հինդ բնակեալ... Խօջաջանեան Զաքիկենց... քանզի գործս այս բոլորովին պարագայիւք և բնաւիւք ծախիւքն վերոյիշեալ բարեպաշտի... յառաջանայ ձրիապէս»*:

Սիմեոն կաթողիկոսի հորինած **Տօնացուցը** կրոնական պատկերներով զարդարած բավականին մաքուր տիպ էր: 16 մոտ 564 երես: **Տօնացուցի** վերև բերված հիշատակարանից պարզապես տեսնվում է, որ պատկերներ **փորագրողը, տառեր շարողը, և ցրողը-տպողը և մուր քսողը, սրբագրողը, պատկերների և այլն փորագրողը,** մի խոսքով **տպարանի մեջ աշխատող բոլոր անձինք եղել են ս. Էջմիածնի միաբաններ, եպիսկոպոսից սկսած մինչև վերջին դպիրը.** և «սա ապացույց է տպագրական գործի կարևորության նշանակություն տալուն և միաբանների միահամուռ ուժերով գործի հաջողությանը նվիրված լինելուն»**:

«Տոնացուցի հրատարակությունը կրոնական-քաղաքական նպատակ ևս ուներ, այդ տոնացուցի գործածությամբը պետք է հայերի միջից վերանար կաթոլիկների տպած և հայոց եկեղեցու տոները աղավաղած Տոնացույցների գործածությունը և երկրորդ՝ Սիմեոն կաթողիկոսը հրավիրում է եկեղեցու հարազատ զավակներին զգուշանալ, ոչ այնքան այլադավան օտարազգի քրիստոնյաներից, որքան ավելի պետք է զգուշանալ հենց հայերից, որոնք իրենց եկեղեցին թողած՝ օտար դավանությանց են դիմել և ներքուստ ոխերիմ թշնամի դարձել, որն ավելի վտանգավոր է»***:

Սիմեոն կաթողիկոսի կազմած նոր Տոնացուցը, որի մեջ խիստ կերպով դատապարտում էր կաթոլիկ կղերին, առիթ է լինում, որ Կ. Պոլսի հայերը 1786 թվի սեպտեմբերի 3-ին արգելքի տակ են դնում այդ Տոնացույցի գործածությունը: «ՌՄԼԵ—1786 սեպտեմբեր 3: Յայս թուականիս կատարելապէս ուրգելին զգործածութիւն սրբագրեալ Տօնացոյցին և զհնգեսին Կիւրակէն բարձին, բաց ի գիւտի նշխարաց Կիւրակէէն»****:

---

* Տօնացոյց, ...աշխատութեամբ տեառն Սիմէօնի կաթողիկոսի, ՌՉՀԴ, Էջմիածին, էջ 554—564: Նաև Դիւան Հայոց պատմութեան, որտեղ Գ. քհն. Աղանյանը անում է հետևյալ դիտողությունները այս մասին. «Որովհետև հայոց եկեղեցական Տոնացույցը հայոց շարժական տարվա վերա էր հիմնված և այդ պատճառով տոների կատարման ժամանակի մեջ շփոթություն էր առաջ գալիս, ուստի և անհրաժեշտ էր հիմնավորապես բարեփոխել Տոնացույցը, և այս մեծ գործը կատարեց Սիմեոն Երևանցի կաթողիկոսը ԺԸ դարի երրորդ քառորդում: Նա մտցրեց անշարժ տարին եկեղեցական տոնակատարության մեջ, հաստատեց 532 տարվա մշտնջենական շրջանը և մտցրեց տոնելի սրբերի շարքը Հայոց եկեղեցու ընդհանավոր հայրեր Հովհան Որոտնեցուն և Գրիգոր Տաթևացուն: Եվ այդ նորոգված Տոնացույցը Սիմեոնը տպեց իր բացած տպարանում, նույնիսկ իր շինած թղթագործարանի վրա, բայց որովհետև վերջիններս ուժգին կերպով մաքառել էին կաթոլիկության դեմ, ուստի և լատինամիտ հայերի թելադրությամբ Պոլսի հայերը մի առ ժամանակ չգործածեցին այս «սրբագրված Տոնացույցը» այլ հնովին վարում էին եկեղեցու ժամակարգությունը, բայց սահմանահայերը շուտով զգացին իրանց բռնած անհարմար դիրքը և սկսեցին գործածել այն»: Տես նաև Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ժ, Մանր մատենագիրք, ԺԵ—ԺԹ դար, Թիֆլիս, 1912, էջ 556—557 (ծանոթ. 124):

** **Ալեքս. Երիցյան,** Պատմական տեսություն հայ տպագրության, Տփխիս, 1879, էջ 25:

*** **Ալեքս Երիցյան,** անդ, էջ 26:

**** Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ժ, Մանր մատենագիրք ԺԵ—ԺԹ դար, Թիֆլիս, 1912, էջ 463:

ՏՕՆԱՑՈՅՑ

1799

Սիմեոն Երևանցու «Տօնացոյց»-ի երկրորդ տպագրության տիտղոսաթերթը. Կ. Պոլիս, 1799

Ահա այսպես Սիմեոն կաթողիկոսի եռանդուն ջանքերի շնորհիվ ս. Էջմիածնի տպարանը օրըստօրե ծաղկելով, շարունակում է գրքեր լույս ընծայել: Ինչպես հիշվեց առաջին տպագրածը **Զբօսարանն** էր, հետո՝ մի **Տաղարան** երկրորդ տպագրությամբ 1777-ին: Նույն թվին տպվում է նաև **Կարգ թաղման Հայրապետաց, եպիսկոպոսաց, և քահանայից** Մաշտոցը, որի հիշատակարանում ասված է՝ «զոր ի բուն Մաշտոցէն մերմէ առեալ սրբագրեալ և կարգաւորեալ Տեառն Սիմէոնի գերերջանիկ և գիտնական կաթուղիկոսի

ամենայն հայոց, եւ տպագրել մեծաւ զգուշութեամբ ինքնին իսկ լինելով վերակացու»: Սույն գիրքն ունի խորհրդավոր փայտափոր պատկերներ Մասիս սարի և հայրապետական Աթոռի, որոնք արևելյան բոլոր հայ տպագրությանց մեջ գտնվում են:



Ս. Էջմիածնի թղթագործարանում պատրաստված թղթի դրոշմը
Սիմեոն կաթողիկոսի և Գրիգոր Միքայելյանի անվան սկզբնատառերով

Սիմեոն կաթողիկոսի հիմնած տպարանում գործելիս են եղել երկու հատ ձեռքի մամուլներ: Հայտնի չէ երբ են այդ մամուլները գործածությունից դուրս եկել, հավանականորեն երբ նոր կատարելագործված մեքենաներ են ստացվում, Սիմեոն կաթողիկոսի ձեռքի մամուլները մնում են անգործածելի և անուշադրության են մատնում այն մամուլները, որոնց տակից Էջմիածնում **առաջին գիրքն** է լույս տեսնում: Հետագայում անփութության և անհասկացողության շնորհիվ այդ մամուլների տախտակները տգետ ձեռքերով կոտրտվել էին և միայն երկու մեծ պտուտակներ էին մնացել, որոնք անհայտության մեջ էին և միայն 1910 թվին գտնվելով՝ Հնությանց թանգարանում դրվեցին*:

* Այս երկու պտուտակները տողերիս գրողը՝ վարպետ Ղևոնդ Ղարախանյանի հետ, 1910 թվին փնտրելով գտավ և թանգարանում դրեց իբրև հնություն:

Սիմեոն կաթողիկոսը վախճանվում է 1780 թվին և նորա մարմինը ամփոփում են ս. Գայանեի վանքի գավթի արևմտյան պատի տակ: Մարմարյա գերեզմանաքարի վերա կա հետևյալ արձանագրությունը.

«Քրիստոս Աստուած իմ Տէր բարի,
Լուր աղէտից քոյս ծառայի.
Դու կացուցեր զիս յայս կարգի,
Ի մշակել ըզքո այգի.
Իսկ ես անուամբ այս պաշտօնի
Գտայ ծառայ ամենայնի.
Եւ որպէս թէ զպարտաւոր մի
Փոխատուաց զիս մատնեցի.
Ոյց ետու եւ ծառայեցի,
Վարձն իմ զսուգ և զցաւ առի.
Այսու կենօք ողորմելի,
Ժամանակս իմ վճարեցի.
Այժմ ամօթով կամ առաջի,
Զի ծառայել քեզ չկարացի:
Արդ, դու նայեաց յիս քաղցրութեամբ,
Թող զյանցանս ներողութեամբ.
Ուրախացո՛ առ Քեզ կոչմամբ,
Եւ սփոփեա՛ Քո սուրբ տեսլեամբ.
Վասն խաչիդ՝ զոր պաշտեցի,
Եւ սուրբ անուանդ՝ զոր կրեցի.
Սիմէօն կաթուղիկոս Երևանցի,
Ի ՌՄԻԹ թուի և յուլիս 26-ի
Ի Վարդավառ կիւրակէի»:

Ժ.

ԺԸ դարի վերջին քառորդին և ԺԹ դարի սկզբներին Հայաստանը ալեկոծված ծովի էր նման: Մի կողմից պարսիկ իշխողները և վրաց Էրեկլի Պարնին կռվի էին դուրս եկել և իրենց հաշիվները Հայաստանում էին վերջացնում: Մյուս կողմից Մուղանլու թուրքերն էին ասպատակում երկիրը և ժողովրդին թալանում*: Այս շրջանում Էջմիածնում և նրա շրջակայքում միայն բռնությունն ու թալանն և հալածանքներն էին թագավորում:

Դեռևս Սիմեոն կաթողիկոսի կենդանության օրով Երևանի խանը և նորա աներ Սուլեյման քուրդը վրաց Հերակլ թագավորի հետ ունեցած պատերազմների պատճառով մեծամեծ չարիք հասցրին ս. Էջմիածնին և շրջակա գյուղերի հայ բնակիչներին:

Ղուկաս կաթողիկոսի ընտրության առաջին տարին ևս շարունակվեցին նոցա պատերազմները, որոնց հետևանքով Արարատյան դաշտի շատ գյուղեր ավերվեցին ու գերի տարվեցին բնակիչները: Ահա այս աղետալի կռիվների մասին է Ղուկաս կաթողիկոսը 1780 թվի դեկտեմբերի 5-ին ողբալով գրում Պոլսի մեծ իշխաններին, որտեղ նա ասում է.

«Գրեալ է ձեզ յառաջ հոգելոյս Հայրապետն մեր զամենայն անցսն անցեալ ամէն. և ահա յայդր է թուղթն, տեսէք թէ զինչ ցաւք և վիշտք են տիպեցեալ երկրիս և սրբոյ Աթոռոյս: Զի երկիրս ըստ մեծի մասին ի Վրաց տուն

* Դիւան Հայոց պատմութեան, գիրք Դ, Ղուկաս կաթողիկոս (1780—1800), Թիֆլիս, 1899, Ցառաջաբան, էջ ԻԸ—ԻԹ:

վարեցեալ՝ աւերեցաւ, և սուրբ Աթոռս թէ՛ ի զօրաց անտի և թէ՛ յետոյ մանաւանդ ի մերկ և ի քաղցեալ մնացորդաց երկրիս՝ դատարկեցաւ ի գոյից, այսինքն թէ՛ ի յուտելեաց և թէ՛ ի խարճելեաց, որք և մինչև ցարդ դեռևս թէ՛ սիրով և թէ՛ ակամայ զհարկաւոր պիտոյս իւրեանց ի մէնջ խնդրեն և առնուն: Քանզի ոչինչ է մնացեալ յերկրոջս: Մինչև ցեղսն ամսոյն հոկտեմբերի, եկաց մնաց խռովութիւնն երկրիս որքան և արարին երթեւեկս վասն հաշտութեան, չեղև հնար»*:

Նույն դրությունը գեղեցիկ կերպով պատկերացնում է Ղուկաս կաթողիկոսը 1790 թվի փետրվարին հնդկաստանցի Շահամիր աղայի անվամբ տված կոնդակի մեջ հետևյալ ձևով.

«Իսկ յաղագս մեղաց մերոց զուրախառիթ դիպմունս ինչ ոչ ունիմք ի գրել, այլ զտրտմառիթ պատահմանց մերոց և կողմանց՝ բազմիցս գրեալ եմք և լուեալ էք և այժմ ևս գրեմք որ յանտիրացելում երկրոջս միշտ կրեմք ըստ առաքելոյն, զպէսպէս վիշտս ի պէս պէս վշտացուցչաց և մանաւանդ հոգք և ցաւք մնացելոց վանօրէից, եկեղեցեաց և եկեղեցականաց մերոց կուտին ի վերայ մեր, քանզի բազում վանօրայք և եկեղեցիք կողոպտեցան և աւերեցան և մանկունք նոցին գերեցեալ ցիր ու ցան եղեն և ոմանք՝ որք մնացեալք են, այնոքիկ ևս օր աւուր կողոպտին և ոտնակոխ լինին»**:

Նույն կաթողիկոսը Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանին 1791 թվի օգոստոսի 18-ին գրում է հետևյալը.

«Եւ վասն գոնէտուրին և գոզէթին և ննջաֆ քրքոցն գրեալ էիր թէ վաղ եմ առաքեալ: Ցիրաւի վաղապէս հասեալ են, որպէս առաջին թղթովն ազդարարեալ եմք քեզ շնորհակալութեամբ, սակայն սնջափն մէկ թուլում էր, չիմացաք թէ՝ պարոն Մկրտումն վասն է՞ր զերկուս չէր յղեալ: Իսկ մինալու ղությունն աղագաւ որ գրես թէ ոչ գտանին այժմ, **ապա զի՞նչ եմք առնելոց, յանդուգն առօղքն, որք ի վաղուց սովորեալ են առնուլ, այլ ևս պահանջեն»*****:

Իրերի այսպիսի խառն ու դառն դրության մեջ ուրախալի մի երևույթ է ներկայացնում Ռուսաստանի հայ գաղթականության մեջ սկսված գրականտպագրական շարժումը, որի գլուխ էր կանգնած Սիմեոն կաթողիկոսի եռանդուն աշխատանքով ու նրա օրինակով ներշնչված յուր աշակերտ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը:

Ինչպես որ Սիմեոն կաթողիկոսը Էջմիածնում գիր ու գրականություն տարածելու համար մեծ աշխատանք թափելով հնդկաստանցի Գրիգոր աղա Միքայելյանի օժանդակությամբ տպարան բաց արեց և թղթաշինության գործարան հիմնեց, Հովսեփ արքեպիսկոպոսն էլ հեռու հյուսիսում նույն եռանդով ու ոգևորությամբ տպարան է հիմնում, որև և նորա մեծ գործերից մեկն է: Հովսեփ արքեպիսկոպոսը այդ նպատակի համար երկար տարիների գրագրություն ուներ Ղուկաս կաթողիկոսի և Ամստերդամի հայերի հետ Ամստերդամի հայ տպարանը ձեռք բերելու համար, սակայն այդ նորան չի հաջողվում:

Այդ ժամանակ նա մեծ աջակցություն է ցույց տալիս 1780 թվին ջուղայեցի վանական Գրիգոր Խալդարյանին, որ Պետերբուրգում տպարան է հիմնում: Այդ տպարանի տառերը Խալդարյանը բերում է Ամստերդամից: 1789 թվին Հովսեփ արքեպիսկոպոսը գնում է այդ տպարանը ամբողջապես և փո-

* Դիւան Հայոց պատմութեան, անդ, էջ 62:

** Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ա—Բ, 1780—1834, Թիֆլիս, 1893, էջ 24:

*** Դիւան Հայոց պատմութեան, գիրք Թ, մասն Ա, Յովսէփ կաթողիկոս Արղութեան, մասն Ա, 1778—1800, Թիֆլիս, 1911, էջ 134:

խաղրում է Նոր Նախիջևանի մոտ յուր հիմնած ս. Խաչ վանքը, որտեղ բացել էր նաև մի դպրոց: Այստեղ տպարանը գործում է մինչև 1794 թիվը՝ հրատարակելով մի շարք գրքեր: Սակայն երբ Հովսեփ արքեպիսկոպոսը տեղափոխվում է Հաշտարխան, տպարանն էլ տեղափոխում է այնտեղ: Թե՛ ս. Խաչի, թե՛ Հաշտարխանի և թե՛ Խալդարյանի տպարանում տպված գրքերը Հովսեփ արքեպիսկոպոսի հրամանն են կրում. Խալդարյանի տպարանը ևս Հով-



Սիմեոն Երևանցու տպարանում գործածվող փայտայ մամուլի պտուտակը

սեփին է համարվում, նորա ջանքերով ձեռք բերած ու բացված լինելուն համար: Հաշտարխանում նորա տպարանը գործում է մինչև ԺԹ դարի առաջին քառորդը, որտեղ տպագրվում էին հայերեն և ռուսերեն գրքեր ամեն տեսակի բովանդակությամբ*:

Հովսեփ արքեպիսկոպոսի տպարանը չնայած յուր աստանդական վիճակին, ԺԸ-րդ դարի վերջին գոյություն ունեցող տպարաններից բեղմնավորներից մեկն է եղել: Այդ տպարաններում տպվել են հայերեն գրքեր թեև գրաբար լեզվով, բայց այնտեղ լույս են տեսել ոչ միայն կրոնա-բարոյական բովանդակությամբ գրքեր, այլև պատմագիրներ և օտար գրականությունից թարգմանություններ:

* Լեո. Հայ գրքի տոնը, Թիֆլիս, 1912, էջ 108:

«Կարգ թաղման կարգաւորաց»-ից մի էջ. ս. Էջմիածին, 1777

Հովսեփ արքեպիսկոպոսը մեծ ցանկություն է ունեցել նաև յուր տպարանում շքեղ ու պատկերազարդ Աստվածաշունչ տպել: Այդ հրատարակության համար նա փորագրել է տալիս պղնձի վերա մի քանի հարյուր պատկերներ, մեծ գումար ծախսելով դրանց վերա, յուր հույսը Հնդկաստանից խոստացած գումարների վերա դնելով: Սակայն, երբ ինքը 1800 թվին կաթողիկոս անվամբ ուղևորվում է Կովկաս և Հնդկաստանից գումարների ստացումն էլ ուշանում է և մանավանդ ինքը Թիֆլիսում վախճանվում է, Հովսեփի այդ գեղեցիկ միտքը՝ Աստվածաշունչ հրատարակել, մնում է անկատար,

իսկ նորա տպարանն էլ փակվում է և եղած կլիշաները կորստյան են մատնվում*:

Չնայած ժամանակի աննպաստ բոլոր այս պայմաններին և երկրի անապահով դրության, որի մեջ կուլտուրական որևէ աշխատանք միայն մեռնել կարող էր, այնուամենայնիվ Սիմեոն կաթողիկոսի հաջորդ Ղուկաս կաթողիկոսը, որ մի շատ գրասեր ու ուսումնասեր մարդ է եղել, ջանք չի խնայում տիրող իշխանների բռնությունների տակ անգամ տպարանն ու թղթագործարանի շենքը պահպանել, իսպառ ավերումից ազատել և նոցա գործունեությունը շարունակել տալ: Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանը, թվելով Ղուկաս կաթողիկոսի շինարարությունները և առաջ բերելով արձանագրությունները, հիշում է, որ սեղանատուն են տեղափոխում տպարանը:

«Զի յառաջին խոհանոցն՝ որպէս գրեցաք, փոխադրեցին զգործարանն տպագրութեան: Ի սեղանատանէ աստի մտանեն ի սեղանատունն ձմռան ընդ երկուս դրունս, իսկ ի միջոցս այսոցիկ երկուց շինուածոց՝ տպագրատան և սեղանատան, է սրահ կամարայարկ... և արձան յիշատակագրութեան ջերմեռանդ նուիրանացն և անուան նորա և ազգայնոցն դնի արտաքուստ ի կամարի մեծի դրանն՝ որ ընդ մէջ տպարանին և սեղանատան»**:

Թե՛ Ղուկաս կաթողիկոսը ևս մտադիր է եղել ըստ հնարավորության ջանք չխնայել տպարանն ու թղթագործարանը շեն պահելու,—հակառակ Մսեր Մսերհանի մեղադրության***, երևում է նորա 1781 թվի հուլիսի 12-ին Ախալցխայի ժողովրդին ուղղած գրությունից թղթագործարանի համար հին շորեր հավաքելու:

«Թուղթ առ միաբնադաւան ժողովուրդսն Ախալցխայու, վասն յղեալ արդեանց իրեանց, օրհնութիւն և շնորհակալութիւն և պատուէր՝ մնալ ի հարազատութեան և կալ ջերմեռանդ և հաստատուն ի հաւատս սուրբ Հայաստանեայցս եկեղեցւոյ»:

Այս գրության մեջ կաթողիկոսը ասում է, որ ամեն տեսակի արդյունքներն Մայր Աթոռի նվիրակին տան և ավելացնում է.

«Եւ որ ինչ արդիւնք իցեն սրբոյ Աթոռոյս՝ թէ գանձանակ և թէ այլ ինչ՝ ամէնն պարտին ձեռամբ դորին ժողովել և ի սուրբ Աթոռ հասանել: Եւ **հնոտի շոր եւս, որ ինչ վասն թղթաշինութեան ժողովիցի՝** զայն**** ևս դա պարտի յղել աստ. և դուք սիրելիքդ մեր պարտիք յօժարութեամբ տալ զհնոտիս, որքան և կարիցէք որ ձեզ չէ ինչ ծանրութիւն, իսկ թղթաշինութեան սրբոյ Աթոռոյս է մեծ ձեռնտուութիւն և ձեզ պատճառ բարեաց վարձուց ի Տեառնէ»*****:

Նույն թղթի մեջ կաթողիկոսը օրհնելով ժողովրդին հոգուտ Մայր Աթոռի տված նվերների համար, ասում է.

«Որք այժմ ամենայօժար սրտիւք և առատութեամբք շնորհեալ էք հաւատոյ մօրս ձերոյ սրբոյ Աթոռոյս զհինգ թիլանի մոմ Ա(1) թիլանի և կէս մեղր, Բ(2) թիլանի ձիթապտուղ և **Ա(1) հակն զոր յաղագս թղթաշինութեան»*****:

---

* Դիւան Հայոց պատմութեան, գիրք Թ, անդ, էջ 487—500:

** **Հովհ. եպս. Շահխաթունյան,** Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի, հատոր Ա, 1842, էջ 102:

*** Պատմութիւն կաթուղիկոսաց Էջմիածնի, ի Սիմէօնէ մինչ ցՅովհաննէս Ը, 1763—1831, ի Մոսկուա, 1876, էջ 5—13:

**** Ընդգծումները մերն են: Ա. Ե. Ա.:

***** Դիւան Հայոց պատմութեան, գիրք Դ, էջ 91:

****** Դիւան Հայոց պատմութեան, գիրք Դ, էջ 89:

ԳԻՐՔ
ՈՐԿՈՉԻ
ՊԱՐՏԱՎՃԱՐ

«Պարտավճար» գրքի տիտղոսաթերթը. ս. Էջմիածին. 1779

Թեև թղթի գործարանը երկար չի շարունակել յուր գոյությունը, սակայն տպարանը յուր գործունեությունը շարունակել է Ղուկաս կաթողիկոսի օրով ևս տալով մի քանի հրատարակություններ, որոնց մեջ աչքի ընկնողը Սիմեոն կաթողիկոսի սեփական շարադրություններ են եղել:

Այս հրատարակությունների մեջ է նաև Սիմեոն կաթողիկոսի, **Պարտավճարը**, որի 9 տպագրական թերթը լույս էր տեսել դեռևս հեղինակի կենդանության ժամանակ: 1784 թվին տպվում է Խաչիկ իշխանի ծախքով **Ժամագիրքը**, 1787-ին **Յովսէփոս**, 1791-ին ջուղայեցի Հոհաննջան աղայի ծախքով **Ջեռաց շարական** և **Մաշտոց**: Բացի այս հայտնի տպագրություններից՝ հավանականորեն եղել են և ուրիշները, որոնք անհայտ են մնացել:

Ղուկաս կաթողիկոսի օրով եղած հալածանքներն ու նեղությունները չեն դադարում նաև Դավիթ կաթողիկոսի օրով, որը Գաղատիա ուղարկված նվիրակի համար գրում է երեցփոխան Գրիգոր աղային հետևյալ հանձնարարականը.

«Քանզի ահա լուալ էք ի յարկէ, թէ զկնի հոգելոյս Ղուկաս կաթուղիկոսի վախճանմանն և այսր որքան վիշտք և տառապանք և անհուն վնասք էին, որք ժամանեցին խղճալի սրբոյ Աթոռոյս, թէ ի յօտարաց և թէ մանաւանդ ի մերային ընտանեաց, ի փառամոլ որդւոց սորին որ և յաղագս պէսպէսեաց բազմապատիկ փորձութեանց և վնասուցն կրեցելոց պակասաւորեալ է իսպառ ի յամենից կարևոր պիտոյից, ևս և ի չքաւորութեան կայ: Վասնորոյ յամենայն սրտէ ձեռնտու և օժանդակ լինելով նուիրակիդ ջանասցիս արդիւնաւորել զգործսն և խաղաղութեամբ հասուցանել յաւարտն ի յօգնութիւն յոգնադիմի պակասութեանց սրբոյ Գահիս»*:

Քաղաքական այսպիսի ծանր պայմանների մեջ Մայր Աթոռի տպարանից որևէ աչքի ընկնող գործունեություն պահանջել չէր կարելի: Այնուամենայնիվ, թեև յուր նախկին վայելչությունից զրկված, տպարանը պահպանվում է առանձին խնամքով ներածին չափ, և նա շարունակում է գործել և գրքեր լույս ընծայել:

Բայց թղթաշինության գործարանը, որ Էջմիածնի վանքի պարսպից դուրս էր գտնվում, միանգամայն խանգարվում է, որովհետև պարսից և օսմանցվոց միմյանց դեմ կռվող զորքերը հափշտակում են երկաթյա և պղնձյա գործիքները և տանում դնում են հեռավոր տեղերում. մանավանդ աղա Մահմադ խանի արշավանքի հետևանքով ավերմունքը կատարելության է հասնում**:

Թեև ձուլված տառերի մի մասը, որ զինվորները տարել էին, հայազգի անձինք տեսնելով գերիվարների ձեռքին, կարողանում են ազատել և նորից Մայր Աթոռի տպարանին վերադարձնել, բայց մեծ մասը նոքա հալում գընդակներ և գրքերից էլ փամփուշտներ են պատրաստում**:

---

* Դիւան Հայոց պատմութեան, գիրք Է, մասն Բ, Դավթի կաթողիկոսի, 1803—1804, Թիֆլիս, 1909, էջ 324:

** Թղթագործարանի կիսավեր շենքը մինչև վերջին ժամանակները գոյություն ուներ: Այդ շինությունը ժողովրդի մեջ հայտնի էր «Քիաղզխանա (թղթի գործարան) անվամբ: Սույն շինությունից սկսած մի կողմից մինչև Գայանեի վանքը, մյուս կողմից մինչև վանքի հարավային դարբասը պտղատու ծառերով լի պարտեզն է եղել, որտեղ պատրաստելիս են եղել թղթի զանգվածը: Այդ պարտեզը վաղուց գոյություն չունի, բայց աշուղական երգերի մեջ հիշվում է: Օրինակ, Կարապետ անվամբ աշուղի մի ոտանավորի մեջ կարդում ենք.

«...Քիաղզխանի բաղչի տակին մեկ փոսում փորդ թափած էր,
Մտիկ տուի քարի տակին սիպտակ պճեղներդ բաց էր...»:

«Հայ աշուղներ» լույս գցած աշխատասիրությունով Գէորգայ Ախվերդեան, հրատարակությամբ օր. Մանէ Ախվերդյանի, Թիֆլիս, 1903, էջ 86: Երջանկահիշատակ Խրիմյան կաթողիկոսը լճի ափին նոր հյուրանոց շինել տալով, նորոգել տվեց հյուրանոցին կից «Քիաղզխանի» շենքը:

(Շարունակելի)



Ա. ՉՈՊԱՆՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

Հայ մշակույթի վաստակաշատ երախտավորներից է Արշակ Հովհաննեսի Չոպանյանը (1872—1954), որը թողել է հարուստ և արժեքավոր գրական ժառանգություն, որը ներկայումս համարվում է Հայաստանի կուլտուրայի մինիստրության ենթակա Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի սեփականությունը, վավերագրերի քանակը հասնում է 70.000-ի:

Ա. Չոպանյանը ծնվել է Պոլսում, ոսկերիչ Հովհաննես Չոպանյանի ընտանիքում: Սկզբնական կրթությունն ստացել է Պեշիկթաշի Մաքրուհյան վարժարանում, աշակերտելով թատերագիր Սրապիոն Թոլլյանին, որն հատուկ ուշադրություն է դարձրել և ուղղություն տվել շնորհալի պատանու առաջին գրական քայլերին: Չոպանյանի ինքնուրույն և թարգմանական առաջին փորձերը լույս են տեսել Պոլսի «Բուրաստան մանկանց» հանդեսում:

1887—1893 թթ. նա սովորել և ավարտել է Ղալաթիո Կեդրոնական վարժարանը, աշակերտելով Եղիա Տեմիրճիպաշյանին, Թովմաս Թերզյանին, Մինաս Չերազին և ուրիշների, որոնք մեծ ազդեցություն են թողել ապագա գրականագետի վրա:

1893 թ. Չոպանյանը մեկնել է Փարիզ, հետևել Սորբոնի համալսարանի դասախոսություններին: 1894 թ. վերադարձել է Պոլիս, իսկ 1895 թ. խմբագրել է «Ծաղիկ» պարբերականը:

Նույն թվի վերջին նա թողել է Պոլիսը և ընդմիշտ հաստատվել Փարիզում:

Նրա վաղ շրջանի գեղարվեստական ստեղծագործությունների առաջին գրքույկը «Արշալույսի ձայներ» վերնագրով լույս է տեսել Պոլսում 1891 թ., որի մասին հետաքրքիր գրախոսականներ են գրել Ե. Տեմիրճիպաշյանը, Հովհ. Հովհաննիսյանը և ուրիշներ:

Չոպանյանը 1898 թ. Փարիզում սկսել է հրատարակել «Անահիտ» հանդեսը, որն ընդհատումներով լույս է տեսել մինչև 1950 թիվը: «Անահիտ»-ը հսկայական, կարևոր դեր կատարեց արտասահմանի հայ մշակույթի կյանքում. նրա մեջ հանդես են եկել հայ անվանի մտավորականներ, գրողներ, արվեստագետներ, թարգմանիչներ, գիտնականներ և ազգային գործիչներ, որոնք սատարել են հայ մշակույթի հարստացմանը:

Չոպանյանը հեղինակ է ոչ միայն բազմաթիվ հոդվածների և ուսումնասիրությունների, այլև առանձին գրքերով լույս ընծայված աշխատությունների, գեղարվեստական և թարգմանական գործերի:

1894 թ. Թիֆլիսում լույս է տեսել նրա «Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը», 1902 թ. Փարիզում՝ «Նահապետ Քուչակի դիվանը», 1907 թ.՝ «Մկրտիչ Պեշիկթաշլյանի կյանքն ու գործը», ու 1910 թ.՝ «Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթանյան նկարիչը» և այլ ուսումնասիրություններ, 1924, 1929 թթ.՝ երկու հատորով «Դեմքեր» ժողովածուն:

Չոպանյանը հանդես է եկել նաև ֆրանսիական պարբերական մամուլում հայ կյանքի ու մշակույթի վերաբերյալ նյութերով, իսկ

առանձին գրքերով հրատարակել է „Les massacres d'Arménie„ (1896), „Poétes Arméniens anciens et modernes" (1902), „Les trouvéres Arméniens„ (1906), „Poémes" (1908), „La Roseraie d'Arménie"-ի 3 հատորները (1918, 1923 և 1929):

Բազմաժանր է Չոպանյանի արխիվի բովանդակությունը: Որպես բանասեր-գիտնական Չոպանյանը աշխարհի տարբեր մասեր-նադարաններից (Էջմիածին, Վենետիկ, Վիեննա, Երուսաղեմ, Անթիլիաս, Զմմառ, Լոնդոն, Փարիզ) հավաքել է հայ հին և միջնադարյան անվանի գրողների ստեղծագործություններից բազմաթիվ էջեր, իր գիտական հրատարակությունների համար: Նրանց մի մասը հրատարակել է, սակայն մեծ մասը մնացել է իր արխիվում, որոնք պետք է կարգավորել և լրացնելով տալ հրատարակության:

Մեծ արժեք և հետաքրքրություն է ներկայացնում ազգային հարցի առթիվ Չոպանյանի արխիվում տեղ գտած պաշտոնական գրությունները, նամակները, հոդվածները, զեկուցագրերը, կոչերը և համապատասխան նյութերը, որոնք տասնյակ տարիների պատմություն ունեն:

Չոպանյանի արխիվի շատ կարևոր բաժիններից մեկն էլ ինքնակենսագրական բնույթ կրող հուշերն են, որոնց մեջ մտնում են նաև հայ և օտար հայտնի դեմքերի՝ իր ուսուցիչների, ապագայում հայտնի մարդիկ դարձած դասընկերների, գրողների, գործիչների, արվեստագետների մասին գրածները:

Ա. Չոպանյանի արխիվի ամենաարժեքավոր բաժիններից մեկն է նամակագրական ժառանգությունը, որի մեջ գտնվում են հայ և օտար բազմաթիվ գրողներից, արվեստագետներից, գիտնականներից, բարձրաստիճան հոգևորականներից և ազգային գործիչներից ու պետական պաշտոնյաներից ստացած նամակները, որոնց թիվը հասնում է 30.000-ի. այդ թվին պետք է ավելացնել 5000-ի հասնող իր գրած նամակների մի մասի սևագիր պատճենները և վերջին տարիներին սփյուռքից թանգարան հասած տարբեր արխիվային ֆոնդերի մեջ եղած Չոպանյանից նրանց հղած նամակները:

Արշակ Չոպանյանի թողած գրական հարուստ ժառանգությունը հայ մշակույթի մի հսկայական շտեմարան է, մեծ գործչի և հայրենասերի անմահ հիշատակը հավերժացնող:

Ա. Չոպանյանի նամակագրական ժառանգությունից «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք հանձնում Մաղաքիա պատրիարք Օրմանյանին, Կոմիտաս վարդապետին, Խորեն արք. Մուրադբեգյանին, Գարեգին Ա կաթողիկոս Հովսեփյանցին, Կյուրեղ Բ Երուսաղեմի հայոց պատրիարքին, Գևորգ Զ Ամենայն Հայոց կաթողիկոսին, Արտավազդ արք. Սյուրմեյանին, Գարեգին պատրիարք Խաչատրյանին և հանրածանոթ մի քանի հայ մտավորականներին նրա գրած նամակներից մի քանիսը:

ԳՈՀԱՐ ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ

1904, նոյ. 5, Փարիզ,

Ամենապատիվ Ս. պատրիարք Հայր,

Այսօր պ. Էգնայանեն իմացա, որ Ներքին գործոց նախարարը որոշեր է որբերը թրքական դպրոց մը դնել: Եթե այդպես ըլլա, Էգնայանին կացությունը շատ անախորժ հանգամանքներու մեջ պիտի մտնե: Իրեն դեմ գրգռված մտքեր կան և անոնց մեջ՝ հեղափոխականներ ալ: Արդեն ըսողներ կան թե ինչո՞ւ Պոլիս ղրկեց, թուրքերուն հանձնեց և այլն: Եթե Պերպերյան վարժարանը դրվին տղաքը, ամեն ձայն կարելի է լռեցնել. շատ լավ լուծում մը կըլլա այդ: Բայց թրքական վարժարան մը դրվելնին ընդհակառակը պիտի բորբոքե կրքերը: Կը խընդրեմ որ հաճիք իսկույն կրցածնիդ ընել որպեսզի տղաքը Պերպերյան վարժարանը դրվին: Դժվար չէ Ձեզ համար բացատրել, փաստել, վերջապես միջոց մը գտնել, որպեսզի այդ արդյունքը ձեռք ձգվի: Կը կըրկնեմ, հետևանքները շատ անախորժ կրնան ըլլալ, եթե իրերն այդ վիճակին մեջ մնան: Էգնայանին ալ միևնույն բանը ըսի: Ինք ալ զարմացած և դժգոհ կերևա այդ նոր որոշումեն: Քանի որ ինքն է բարերարը, և կուզե տղաքը Պերպերյան վարժարանը դընել, ինչո՞ւ ուրիշներ կը միջամտեն:

Տղոցը ըսած էի թե մինչև որ Պատրիարքին պատասխանը չգնա Վռամշապուհ քահանայեն, կմեկնին Փարիզեն: Դժբախտաբար, համոզվեր և մեկներ են: Դժբախտաբար, Դուք ալ անմիջապես չպատասխանեցիք և Ձեր որոշումը կամ կարծիքը չհայտնեցիք: Բայց եղածը եղած է. այժմ, որ տղաքը հոդ են, անհրաժեշտ է որ Պերպերյան վարժարանը դրվին, ատոր համար ամեն

* Նամակը ուղղված է Մաղաքիա պատրիարք Օրմանյանին:

կարելի միջոց կը խնդրեմ որ ձեռք առնեք: Ասիկա կը խնդրեմ Ձեզնե թե՛ տողոցը բարիքին համար, և թե՛ որպեսզի խեղդվին այն ահավոր սքանտալները որ պիտի տարածվին այստեղ եթե իրերը մնան այդ վիճակին մեջ:

Ընդունեցեք հարգալից զգացմանցս հավաստիքը:

Ա. ՉՈՊԱՆՅԱՆ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

1906, դեկտ. 6 Փարիզ

Գերապատիվ տ. Կոմիտաս վարդապետ.
Հարգելի հայրենակից,

Փարիզի Հայկ. Միության (կեդրոնական) խորհուրդը պարտք կը համարե իր խորին շնորհակալություններն հայտնել Ձեզ այն թանկագին աջակցության համար զոր անձնապես հաճեցիք շնորհել մեր հայկական նվագահանդեսին:

Խորհուրդս, իր երախտագիտությունը Ձեզ հայտնելու համար, որոշեց հատկացնել 1000 ֆրանք՝ Ձեր անտիպ աշխատություններեն միույն տպագրության:

Կը խնդրենք որ հաճիք ընդունել մեր հարգանքներուն զգացմանց հավաստիքը:

(Ա. ՉՈՊԱՆՅԱՆ)

<193...>

Գերապատիվ տ. Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեգյանին.
Էջմիածին

Հարգելի բարեկամ

Լրագիրներեն հաճույքով իմացա որ Հայաստանի կառավարությունը հավանություն հայտնած է Էջմիածնա մեջ հոգևոր դպրանոցի մը վերաբացման: Բայց դրամն է որ կը պակսի այդ պետքին գոհացում տալու համար:

Վեց-յոթ ամիս առաջ, **Ապագա** թերթի հոդվածներեն մեկուն մեջ կտակներու հարցին առթիվ Սանասարյան կտակի մասին ևս, առաջարկած էի որ Պոլսո Սանասարյան խանին անցյալ տարիներուն վարձագիններեն գոյացած բավական կարևոր գումարը որ Փարիզ դրամատան մը մեջ կը գտնվի, պահ դրած խնամակալության նախագահի անունով, գործադրվի Էջմիածնի մեջ հոգևոր դպրանոց մը բանալու ծրագրին իրագործման իբր հեղինակի հիմնական միջոց: Միմիայն այդ գումարով (կարծեմ մեկ միլիոն ֆրանքեն քիչ մը ավելի է) Սանասարյան վարժարան մը բանալ Հայաստանի մեջ կարելի չէ, իսկ խանը Պոլիս գտնվելով հնարավոր չէ ծախել զայն, ոչ ալ կարելի է կարծեմ այսուհետև անոր վարձագինները Փարիզ ղրկել. խնամակալության Պոլսո անդամները կը մտածեն թե շատ զգուշ պետք է վարվիլ, բայց Փարիզ դրամատան մը մեջ պահ դրած գումարեն Էջմիածնի մեջ հոգևոր դպրանոցի մը վերաբացման գործնականությունը, ոնէ անպատեհության տեղի չի կրնար տալ և բոլորովին համաձայն ալ է բարերարին հայտնած կամքին քանի որ կտակին մեջ շեշտած է թե այդ կտակված գումարով հիմնվելիք դպրոցին մեջ աշակերտները պետք է կրթվին Հայաստանյայց եկեղեցվո ոգվույն համեմատ:

Ինչո՞ւ Մայր Աթոռը ինքը այս առաջարկը իր կողմե չներկայացներ Սանասարյան խնամակալության ատենապետ պ. Գաբրիել Նորատունկյանին, ինչպես և Պոլիս՝ տեղապահ Գևորգ Ասլանյան սրբազանին:

Հուսալով որ այս թելադրությունս կը հաճիք հաղորդել Վեհ. Հայրապետին և Գեր. Խորհուրդին կը խնդրեմ որ ընդունիք սիրալիր հարգանքներուս հավաստիքը:

Ա. ՉՈՊԱՆՅԱՆ

1940, օգոստ. 6, Փարիզ

Վեհափառ Տեր*

Վստահ ըլլալով որ միաձայնությամբ պիտի ընտրվիք Կիլիկիո կաթողիկոս, ես առաջուց խնդակցություններս ու շնորհավորություններս հայտնած էի Ձեզի: Եթե անկից ի վեր չկրկնեցի շնորհավորություններս, պատճառը արդեն իսկ այդ պարտականությունը կանխավ կատարած ըլլալս չէ, այլ արտակարգ ու հուզիչ դեպքերը որ Ձեր ընտրվելեն ի վեր պատահեցան:

Վերջերս Հալեպեն նամակներ և Պեյրու-

---

* Նամակը ուղղված է Մեծի Տանն Կիլիկիո նորընտիր կաթողիկոս Տ. Գարեգին Ա Հովսեփյանին:

թեն թերթեր ստացա. կը խորհիմ որ այս նամակս ալ ուրեմն պիտի կարենա Ձեր ձեռքը հասնիլ: Կը խնդրեմ որ ընդունեք իմ սրտագին շնորհավորություններս, որոնց կը միացնեմ ջերմ մաղթանքներս: Կը մաղթեմ որ Ձեզի տրվի երկար ու նվազ մրրկային-տարիներով մնալ այդ պատմական թանկագին Աթոռին վրա և Ձեր ազգասեր սրտին, շինարար մտքին և անձնվեր հոգիին բեղմնավոր կարողությանց նորանոր ապացուցումներով նպաստավորել Ձեր հայրապետության հովանվույն տակ գտնվող հայ համայնքը:

Հաճեցեք ընդունիլ, Վեհափառ Տեր, խորին հարգանքիս հավաստիքը:

Ա. ՉՈՊԱՆՅԱՆ

ԿՅՈՒՐԵՂ Բ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ*

1947, մայիս 14, Փարիզ

Ամենապատիվ Ս. Հայր

Մեծապես ամոթով կը զգամ զիս Ձեր մոտ: Շատոնց է որ ստացած եմ Ձեր 12 փետրվար թվակիր նամակը, և դեռ չեմ կրցած Ձեր ամենապատվության ինձմե ուզածը ղրկել:

Հապաղմանս միակ պատճառը այլազան, անվերջ, անթիվ աշխատանքներով ծանրաբեռնված ըլլալս է: Կ ուզեի Ձեր նամակին տալիք պատասխանիս հետ, որ անշուշտ դրական միայն կրնար ըլլալ, գրություն մը ալ ղրկել այդ հայկական հանրագիտարանին համար: Դեռ չկրցա շարադրել այդ գրությունը: Ավելի դժվար է այդպիսի մեծ ու ճոխ նյութերու վրա ըսվելիքը քանի մը էջի մեջ սղմեցնել, քան ընդարձակ ուսումնասիրություն մը նվիրել անոնց:

Այսօր հակիրճ նամակով մը գեթ կուգամ Ձեր Ամենապատվության ուղղել, Ձեր ներողամտությունը խնդրելու համար և հայտնելու համար, թե որոշած եմ գրել ուզված 100 տողը language and literature բաժինին վրա. կը հուսամ ի վիճակի ըլլալ այդ 100 տողը առավելն երկու շաբթեն Ձեր Ամենապատվության ղրկելու:

Կը խնդրեմ որ ընդունեք, մեծապատիվ Ս. Հայր, խորին հարգանքիս հավաստիքը:

Ա. ՉՈՊԱՆՅԱՆ

---

* Նամակը ուղղված է Երուսաղեմի հայոց Տ. Կյուրեղ Բ պատրիարք Իսրայելյանին

1948, հունիս 10, Փարիզ

Սիրելի Գարեգին Սրբազան*

Ներեցեք Ձեր նամակներուն ցարդ մանրամասնորեն պատասխանած չըլլալուս. շատ բան ունիմ գլուխս այս միջոցին. քիչ օրեն երկարորեն պիտի գրեմ Ձեզի. այսօր կը փութամ միայն Ձեզ շնորհավորել Ձեր **Նարեկի** տաղաչափյալ թարգմանության համար, որ թե՛ իբր շարադրություն և թե՛ իբր տպագրություն գեղեցիկ է: Կուզեմ նաև Գեղամ սողոմոնյանի խնդրույն շուտով լուծվելուն համար Ձեր աջակցությունը խնդրել. անհրաժեշտ է որ վայրկյան մը առաջ խեղճ տղան ինքզինքը հոդ նետե, Պուենոս Այրեսեն իր վիզան շատոնց եկած է հոս Արժանթինյան հյուպատոսարանը, բայց պետք է որ ֆրանսական իշխանություններն ալ (Շթութկարտի ֆրանսական հյուպատոսեն) ստանա թրանզիթի վիզա մը գալու համար ֆրանսա և շոգենավ առնելու համար դեպի Պուենոս Այրես, երեկ Արտաքին գործոց նախարարությունը գացի և կարևոր պաշտոնատար մը տեսա, հարկ եղածը ընել խոստացավ որպեսզի visa de transit-ը շնորհվի Գեղամին, բայց ըսավ, լավագույնն այն է, որ իր շոգենավի տոմսակն այժմեն ղրկվի ինձի Պուենոս Այրեսեն և ես զայն ցույց տամ իրեն: Արդեն Գեղամը, նամակով մը զոր Ձեզի ղրկեցի, խնդրած էր պ. Տիարպեքիրյանեն որ իր ճամփորդության ծախքին համար հարկ եղած գումարը շնորհե իրեն կամ գեթ իբր փոխատվություն հասցնե իրեն. լավագույնն այն է, որ պ. Տիարպեքիրյան շոգենավի տոմսակն առնե և ղրկե ինձի. այդ ձևով իր ընելիքը բարիքը անմիջապես և ամբողջապես կիրականանա, ու Գեղամը իսկույն կուգա հոս և շոգենավը կառնե հոդ գալու համար: Կը խնդրեմ որ այդ բարի գործը շուտով կատարվի:

Սիրով Ձերդ

Ա. ՉՈՊԱՆՅԱՆ

1949, ապրիլ 27, Փարիզ

Նորին Սուրբ Օծություն Գարեգին Ա Վեհափառ Տեր և ամենասիրելի բարեկամ

---

* Նամակը ուղղված է Տ. Գարեգին արք. Խաչատրյանին (տրապիզոնցի):

Ստացա Ձեր երկու նամակները ինչպես և Սիմոն Սիմոնյանի նամակը: Չափազանց կը ցավիմ որ Ձեր ազնիվ և հրապուրիչ հրավերն ընդունիլ **այս տարվան համար՝** դըժբախտաբար բացարձակապես անհնար է: Մինչև հառաջիկա գարուն ավելի, քան տասնյակ մը շատ կարևոր հանձնառություն ունիմ, կամ ծրագրված ու կիսով սկսված գործ ունիմ, զորոնք հետաձգելս կարելի չէ: Ձեր հրավերն ինձի եկավ շատ ուշ, և եթե զայն կարենայի ընդունիլ, պետք էր որ անմիջապես մեկնեի, ինչ որ շատ մը պատճառներով անկարելի է: Ներողամիտ եղեք ուրեմն Ձեր փափաքը որ իմս ալ է ներկա տարվան ընթացքին չկատարելուս համար:

Եթե հաճիք պահպանել Ձեր հրավերը հառաջիկա տարվան համար, պայմանով որ աշնան ըլլա մեկնումս (սեպտ. 15-են—նոյեմբ. 30-ի շրջան, temperature տեսակետով լավագույն շրջանը այդ կողմերը), սիրով պիտի ընդունիմ զայն: Մինչև հառաջիկա ամառվան վերջը, կարգ մը կարևոր գործեր կարգադրած կըլլամ և ի վիճակի կըլլամ գալու այդտեղ և ի Ձեր ծրագրած աշխատանքները կատարելու որոնց վրա կրնաք ավելցնել նաև մի-երկու բանախոսություն ֆրանսերեն՝ հայ գրականության մասին՝ լիբանանցոց համար: Մի մտահոգվիք մեր երկուքին ալ տարուց ըլլալուն համար. առույգ և կորովով լեցուն ենք երկուքս ալ ու ապահովապես մեր առջև դեռ առնվազն տասը տարի ունինք աշխատելու և արտադրելու համար. գալ տարի՝ աշնան՝ երկուքս ալ պիտի ըլլանք այնքան ուժեղ առլըցուն որքան այսօր:

Ուրեմն. եթե համաձայն եք Ձեր հրավերը պահպանելու. Ձեզի կըսեմ «ցտեսություն 1950 ի սեպտեմբերի վերջերը»:

Տեղեկությունները զոր Ձեր նամակին մեջ տված եք Անթիլիասի Կիլիկյան կաթողիկոսարանին մեջ արդեն իսկ ձեռք ձգված նյութական ու բարոյական ուժերուն և Ձեր ապագայի ծրագիրներու մասին, մեծապես հրճվեցուցին զիս:

Այդ բոլորը մեր ժողովուրդը կը պարտի էն առաջ Ձեր հեղինակավոր անձնավորության հմայքին, կորովին ու նախաձեռնության ոգիին: Կը մաղթեմ որ Ձեր բոլոր ծրագիրները կարենաք իրականացնել:

Քոլոյյանին գրեցի իր տան մեջ Ձեր թողած ձեռագիրներու և այլ իրերու ինչ եղած ըլլալու մասին տեղեկություն խնդրելով.

Տեր Լևոնին մեկ տխուր սխրագործության զոհ եղած ըլլալու են Ձեր թողածները: Տեր Լևոնին կինն ու զավակները շատ քիչ կը ճանչնամ. Քոլոյյանին պատասխանը առնելս հետո պիտի տեսնեմ Տեր Ացկեն և անկից պիտի խնդրեմ որ ինքը տեսնե Տեր Լևոնին կինը ու որդիները և անոնցմե տեղեկություն ուզե այդ մասին:

Ձեր կիսանդրին ողբացյալ Գյուրջյանի գլուխ գործոցներեն մին է:

Երեկ գացի մյուս Rue Nunges-er et coli, որ Փարիզեն բավական հեռու մեկ անկյունը կը գտնվի, կուզեի տիկին Գյուրջյանը տեսնել և այդ մասին խոսիլ, եթե երկրորդ օրինակ մը հորինած է, պիտի խնդրեմ տիկին Գյուրջյանին որ զայն նվիրե Անթիլիասի կաթողիկոսարանին:

Տիկին Գյուրջյան դուրս ելած էր:

Այսօր կը գրեմ իրեն և ժամադրություն կը խնդրեմ հառաջիկա երկու օրվան մը համար: Եթե երկրորդ օրինակ մը չկա, պիտի առաջարկեմ որ տիկինը այդ buste-ը ծախե մատչելի գինով մը և <Հիսիլ> Ջամքերթեանն պիտի խնդրեմ որ ինքը գնե և նվիրե Անթիլիասի կաթողիկոսարանին:

Ձերմ բարևներով՝
Ձերդ

<Ա. ՉՈՊԱՆՅԱՆ>

1949, դեկտ. 2, Փարիզ

Գարեգին Ա կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո

Վեհափառ Տեր,

Ստացա հայ ձեռագիրներու Ձեր կազմած լայնածավալ ցուցակը՝ զոր սկսած եք տպագրել՝ առաջին մասը: Ուրախ եմ որ այդ ստվար ու կարևոր գործը, որուն Ձեր կյանքի ընթացքին ուժ և ժամանակ հատկացուցած եք, վերջապես կարող կըլլաք հրատարակել և հայ ու օտար բանասերներուն տրամադրության տակ դնել: Կը մաղթեմ որ միջոցներ ունենաք ի լույս ընծայելու նաև Ձեր ուրիշ անտիպ կամ կիսավարտ աշխատությունները, որոնք հայ բանասիրության մեծ ծառայություն մատուցանելու կոչված են: Վստահ եմ որ Դուք ալ նույն մաղթանքը կընեք իմ անտիպ գործերուս համար, որոնք (հայերեն ու ֆրանսերեն) բազմաթիվ են, բազմազան, և զոր այնքան կը ցանկամ՝ անհետանալե առաջ՝ հրատարակված տեսնել:

Ձերմ սիրով և խոր հարգանքով

Ձերդ

<Ա. ՉՈՊԱՆՅԱՆ>

անթվ. <1949, Փարիզ>

Վեհափառ Տեր և ամենասիրելի բարեկամ*

Ստացա Ձեր նոր լույս տեսած «Յիշատակարանք ձեռագրաց» ստվար հատորը. հոյակապ գործ մըն է, ապրի այն ազնիվ ու ազգասեր ամոլը որ այդպիսի հրատարակություն մը կարելի դարձուցեր է իր մեկենասական ճոխ նվերով:

Ապրի՜ նաև երիտասարդ բանաստեղծ Սասունցի Սիմոն Սիմոնյանը որ ներածությունը շարադրեր է և Ձեր ձեռագրին տպագրության հսկելու փափուկ ու դժվար աշխատությունն ստանձներ է:

Կը մաղթեմ որ Ձեր առողջական վիճակը որ արդեն իսկ զգալի կերպով բարվոքած է, ավելի ևս բարվոքի. կը մաղթեմ նաև նորանոր մեկենասներ գտնեիք և ձեռագրաց հիշատակարաններուն այդ հսկա հավաքածուին մյուս երեք հատորներն ալ կարենան լույս տեսնիլ Ձեր հսկողության տակ:

Անգամ մը, որ Ձեր ուժեղ կազմվածքը հաղթեց այդ տկարությունը որ հանկարծ Ձեզ ուժասպառ ըրավ, համոզված եմ որ այլևս վտանգը անցած է և այսուհետև դեպի լիակատար բուժում պիտի ընթանա Ձեր թանկագին առողջությունը: Ձեր ներկայությունը, Ձեր նախագահությունը դեռ տարիներով անհրաժեշտ են Կիլիկյան կաթողիկոսարանի ու Դպրեվանքի այդ հայկական մեծ ու բարերար Տան համար:

Ձեր հանկարծական ծանր հիվանդությունը պատճառ եղավ որ Ձեր իսկ որոշած միջնադարյան հայ բանաստեղծության մասին շարք մը բանախոսություններ Ձեր Դպրեվանքին մեջ կատարելուն և այդ առթիվ Պեյրութի և Հալեպի մեջ Ձեր նախագահության տակ իմ գրական 60-ամյա գործունեությանս հոբելյանի տոնախմբման ծրագիրները ջուրն իյնան այդտեղ: Իմ հոդ գալս 2—3 տարիս մնալս շատ մը ծախքի դուռ կրնա բանալ և ծրագրին այդ մասը կարելի է ջնջել, բայց հոբելյանս որ այնքան ջերմ ոգևորությամբ տոնվեցավ Նյու-Յորք, Պոսթըն, Պ. Այրես, Թեհրան առանց իմ ներկայությանս, հիմա կը տոնվի նաև Պեյրութ և Հալեպ ուր կը գտնվին ազգասեր կամ գրասեր հայ սակավաթիվ համայնքներ, որոնց մեջ գիտեմ որ բարեկամներ շատ ունիմ: Այդ հանդեսներուն իմ ներկայությունը անհրաժեշտ չէ. անհրաժեշտը այդ առթիվ Սուրիո և Լիբանանի հայոց մեջ հանգանակություն մը բանալով իմ կարգ մը կարևոր անտիպ գործերուս տպագրության և տպված գործերեն ոմանց վերահրատարակման հավաքածուներու համար հարկ եղած գումարներուն ապահովելն է: Ուրիշ նամակով մը պիտի ղրկեմ Ձեզի քիչ օրեն այդ հրատարակելի գործերուն ցուցակը, ոմանք հայերեն, ոմանք ֆրանսերեն, որոնցմե մին է Քուչակյան լավագույն տաղերուն ֆրանսերեն թարգմանությունս իմ կողմե ներածությամբ մը և Rene grousse պատմաբանին և ակադեմականին հառաջաբանը: Ատոր տպագրության ծախքերն արդեն ապահոված կրնամ համարել, դիմեցի քանի մը ունևոր ակնեցիներու խնդրելով որ Ակնեցի մեծ աշուղ Քուչակին այդ հատորին տպագրության ծախքերու մասնակցին: Ես հարկ եղած գումարին կեսը արդեն գտած եմ, մյուս կեսին համար խոստացած է հավաքել Պոլսո Պատրիարք Խաչատուրյան Արքեպիսկոպոս, որ արդեն Հարավային Ամերիկայի հայոց առաջնորդ եղած ատեն հանգանակություն մը բացավ. 300,000 ֆրանք հավաքեց և կարելի դարձուց իմ բանաստեղծությանցս լիակատար հավաքածուին հրատարակումին: Կարդացի՞ք **Պայքար**-ի բացառիկին մեջ Բյուզանդ Էղիայանի ընդարձակ հոդվածը իմ գրական գործունեության մասին, եթե չեք կարդացած կը խնդրեմ որ կարդաք, լավագույն ուսումնասիրությունն է, որ հայ մը ըրած ըլլա իմ գրական և ազգասիրական վաստակիս:

Եթե Պեյրութի և Հալեպի մեջ հոբելյանս տոնվի և հանգանակություն մը բացվի, վստահ եմ որ հրատարակելի գործերս դոնե է՞ն կարևորներուն տպագրության ծախքերը, կապահովվին (Պուենոս Այրեսի հանգանակությունը մոտ 700,000 ֆրանքի գումարին է հասեր):

Գարեգին Խաչատուրյան սրբազանն է որ որոշած էր Պ. Այրեսի հոբելյանին տոնախմբությունը և հանգանակությունը: Ինք գնաց Պոլիս, բայց իր բարեկամները (Պ... ֆիլ և այլք) գործադրեցին իր որոշումը: Պիտի ցանկամ այդ գումարով հրատարակել „Roseraie d'Arménie"-ի չորրորդ հատորը որուն ձեռագիրը գրեթե ամբողջապես պատրաստ է:

Եթե ես անհետանամ, այդ գործերը չեն կրնար հրատարակվիլ հարկ եղած խնամքով. անհրաժեշտ է որ մեռնելե առաջ լրացնեմ այդ գործերուն ձեռագիրը և տպագրությանը ես ինքս հսկեմ:

Մաղթելով Ձեզի լիակատար բուժում և Ձեր բոլոր հոյակապ ծրագիրներու իրականացումը, կը խնդրեմ որ ընդունիք ամենաջերմ և գորովալիր բարեմաղթությանս հավաստիքը:

Ա. ՉՈՊԱՆՅԱՆ

* Նամակը ուղղված է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Տ. Գարեգին Ա. Հովսեփյանին:

1950, մարտ 14, Փարիզ

Սիրելի Արտավազդ սրբազան*

Այսօր Քարյանին ղրկեցի երկու ցուցակ իմ հրատարակելի գործերուս, որպեսզի ուրբաթ օրվան Հանձնաժողովի նիստին զանոնք կարդա և հետո Ձեզի հանձնե: Մին ցուցակն է մեկ մասին այն գործերես որ ատենով տպված են և սպառված ու կարծե որ երկրորդ տպագրություն մը ունենան. մյուս ցուցակն է գրական էջերուս որոշ շարքերու հավաքածուներու որ դեռ հատորի մեջ չեն ամփոփված, կամ շարադրված, բայց անտիպ մնացած գործերու կամ ծրագրված, մասամբ շարադրված երկասիրությանց, որոնց հրատարակումը ջերմորեն կը ցանկամ անհետանալես առաջ իրականացած տեսնել: Գիտեմ որ թե՛ **Անահիտ**-ի ընդհատված հրատարակումը վերսկսելու և թե՛ այդ ցուցակներուն մեջ մատնանշված գործերը տպագրելու համար ստվար գումարներ հարկավոր են, և հույս չունիմ որ այդ բոլորը կրնա շուտով իրականանալ, այնպիսի պահու մը մանավանդ ուր մեր ժողովուրդը հրատապ ստիպողական պետքեր ունի որոնց գոհացում անհրաժեշտ է տալ: Բայց կուզեմ որ գիտնաք և հոբելյանական Հանձնաժողովին հայտնեք թե հոբելյանիս նախաձեռնությունը Ձեր սրբազնության կողմե առնվելեն իսկ առաջ գտնվեցան քանի մը գրասեր անձնավորություններ որ ինքնաբերաբար իմ գրական աշխատությանցս տպագրական ծախքերն ապահովել ջանացին: Պ. Ապրո Գուանճյան պատրաստականություն հայտնեց „La Rosesraie d'Arménie-ի առաջին հատորին (որ շատոնց սպառած է) երկրորդը տպագրության մը ծախքերն ստանձնելու: Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյան Պուենոս Այրեսի մեջ հանգանակություն բացավ իմ բանաստեղծությանցս լիակատար հավաքածուին տպագրության համար, այդ տպագրությունը արդեն երեք քառորդով կատարված է, և կը հուսամ որ երեք շաբթեն հատորը լույս սեսնե: Ամերիկա գտնվող անձնավորություն մը, որ չուզեր որ իր անունը հայտնվի, վերջերս ինձի ղրկեց երեք հարյուր տոլար, **Անահիտ**-ի վերերևման օգնելու համար. (**Անահիտ**-ի 1949-ի երկրորդ թիվը և 1950-ի առաջին թիվը միասին լույս պիտի տեսնեն այս տարվան հունիսի վերջերը): Կը հուսամ որ այդ ազնիվ գրասեր հայերուն օրինակին հետևող ուրիշ հայրենակիցներ ալ պիտի գտնվին եթե մանավանդ Դուք իրենց կոչ մը ուղղեք:

Սիրով Ձերդ

Ա. ՉՈՊԱՆՅԱՆ
(Ծարունակելի)

* Նամակը ուղղված է Փարիզի առաջնորդ Տ. Արտավազդ արքեպ. Սյուրմեյանին:





ԼԵՎՈՆ ԲԱՏԻԿՅԱՆ

(Բանասիրական գիտությունների թեկնածու)

ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԸ՝ ՊԱՐԱԿԱՆՈՆ ԳՐՎԱԾՔՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆԻՉ

Անվավեր, պարականոն, նաև՝ անկանոն են կոչվում այն գրքերն ու գրվածքները, որոնք քրիստոնյա ընդհանրական եկեղեցին դուրս է դրել սուրբ գրքերի շարքից:

Հայ մատենագիտության պատմությունը ցույց է տալիս, որ միջնադարյան Հայաստանում հասարակական տարբեր հոսանքների ու խմբակցությունների միջև ծավալվող պայքարը հանդես էր գալիս կրոնական քողի տակ:

Այդ պայքարին ուղղություն տվողը եկեղեցին էր, որովհետև կրոնա-դավանաբանական խնդիրները միայն նրա իրավասությունն էր: Գրականությունը, իբրև կյանքի գեղարվեստական արտացոլք, իր հերթին, ձեռք էր բերում դավանաբանական բնույթ: Ուստի գրականության ընտրության՝ ընդունման կամ մերժման գործը ևս դառնում էր հայ եկեղեցու մտահոգության առարկաներից մեկը:

Հեթանոսական շրջանի գեղեցիկ գրականությունը՝ բանաստեղծություն, ժողովրդական երգեր, ավանդություններ, առասպելներ և այլն, աստիճանաբար հալածվում և մոռացվում էին առաջին ջերմեռանդ քրիստոնյաների կողմից: Սրանց փոխարինելու էր գալիս Աստվածաշունչը (Ս. Գիրքը) իր բաղկացուցիչ մասերով՝ «Ավետարանով», «Հին և Նոր կտակարաններով», «Գործք առաքելոցով» և այլն: Որքան քրիստոնեությունը զարգանում էր ու արմատներ ձգում, այնքան իր փալն ու հմայքը կորցնում էր հեթանոսությունից եկող մտավոր արտադրանքը: Հեթանոսական գունեղ երևակայությամբ հարուստ գեղարվեստական ճոխ ստեղծագործություններին փոխարինելու եկած Սուրբ Գիրքը իր հակիրճությամբ ու սեղմությամբ բավարարվածություն չէր բերում գործողություններով ու դեպքերով հագեցած և զարդարուն նկարագրություններով հարուստ առասպելաբանությանն ընտելացած ժողովրդին: Աստվածաշնչի կանոնական գրվածքներից դուրս մնացած պարականոնները շղարշվել են հրաշքների, տեսիլների, վարքերի ու կրոնական պատումների գունավոր քողով և գրականության պատմության մեջ կոչվում են պարականոն, անվավեր կամ անկանոն գրականություն:

Պարականոն գրքերի հեղինակները, մեծ մասամբ աղանդավորական շարժման պարագլուխներ էին, աշխատում էին իրենց հեղինակած գործերը, հասկանալի պատճառներով, ներմուծել Հին և Նոր կտակարանների կանոնների մեջ իբրև դրանց մաս կազմող գրվածքներ՝ իրենց տեսակետներն ու կրոնական նկատառումները հիմնավորելու նպատակով: Այդ իմաստով էլ դրանք արտահայտում էին ոչ միայն կրոնական ու աստվածաբանական տեսակետներ, այլև՝ թաքցրած միտումներով ու կանխակալ նպատակներով ձգտում էին տարածել աղանդավորական գաղափարներ: Պաշտոնական եկեղեցին ու նրա հոգևոր պետերը միշտ էլ բացասաբար են վերաբերվել և խիստ արգելքներ են հարուցել նմանօրինակ գրվածքների նկատմամբ: Սակայն, պետք է ասել, որոշ անվավեր գրվածքներ, որոնք խիստ գունազարդված են կրոնա-բարեպաշտական քողով, մուտք են գործել անգամ Հին և Նոր կտակարանների կանոնների մեջ: Այսպես՝ Հին կտակարանի պարականոն կամ «ծածիկ» գրվածքներ նկատվել են «Կտակք ԺԲ նահապետաց», «Յուդիթ», «Տովբիթ», «Մակաբայեցի Ա, Բ, Գ», «Իմաստութիւն Սողոմոնի», «Սիրաք», «Թուղթ Բարուքայ», «Աղօթք Մանասէի», «Եզր Ա, Բ, Գ», «Թուղթ Երեմիայի»:

Նոր կտակարանի անվավերականներն են «Թուղթ Կորնթացւոց առ Պաւղոս», «Թուղթ Պաւղոսի առ

Կորնթացիս Գ», «Հանգիստ Յովհաննու առաքելոյ», «Աղերս Եւթաղի», իսկ Նոր կտակարանից դուրս՝ արգելված գրքեր են՝ «Գիրք մանկութեան Տեառն», «Թոմայի աւետարանն», «Յայտնութիւնն Պետրոսի», «Կաթուղիկէ թուղթքն բառնաբա և Յովդաի և Թաւմահ» և այլն:

Վերոհիշյալ պարականոնները մինչև այժմ էլ պահպանվում են մեր եկեղեցական գրականության մեջ, անգամ սրանց մեծ մասը 1860 թ. Հ. Արսեն Բագրատունին զետեղել է իր հրատարակած Աստվածաշնչում:

Սամուել Անեցին վկայում է որ ասորի նեստորականը քարոզիչները 590 թ. Հայաստան էին բերել մի շարք «սուտ» գրքեր և թարգմանել էին հայերեն[1]: Անեցին տալիս է նաև տաս գրքերի անուններ: Սակայն Հ. Անանյանի տվյալներով դրանք ոչ թե 10, այլ 16 են՝ «Ադամայ կտակն», «Ծիոն օրհնութեան», «Փիլիպանն», «Գորտոսակն», «Կիրակոսակն», «Ղոսիմուն», «Պետրոսի տեսիլն», «Դիաթեկն», «Աստուածածնին պատմութիւն», «Սեբէոսն», «Փիւրոնացիքն», «Մանկութիւն Տեառն», «Լուսաւորչին տեսիլքն», «Զանթաչելի մատեանն», «Գրիգորի և Բարսեղի հարցմունքն», «զՄանեայ մեկնութիւնն աւետարանի»[2]:

Անվավեր և «սուտ» գրվածքների թարգմանությունները մեզանում սկսվել են 5-րդ դարի սկզբներին և ավարտվել 6-րդ դարի վերջերին: Դրանք մեծ նշանակություն են ձեռք բերել, մանավանդ, 431 թ. Եփեսոսի և Քաղկեդոնի ժողովից հետո, նեստորականների և եվտիքականների դեմ պայքարելիս և որ հայ եկեղեցին այդ թարգմանությունները պայքարի զենք դարձրած՝ ուղղում էր հենց իրենց՝ աղանդավորների դեմ:

Անվավեր գրականության գիտական ուսումնասիրությունը սկզբնավորվում է 15—16-րդ դարերում: Սակայն մինչև 19-րդ դարը մնում է իր սաղմնային վիճակի մեջ: Վերածննդի շրջանի ուսումնասիրողները դրանք գնահատում են իբրև ս. Գրքի և եկեղեցական ավանդությունների դեմ գրված գործեր կամ առասպելաբանություններ:

19-րդ դարում անվավեր գրվածքների ուսումնասիրությունը թևակոխում է մի նոր փուլ, հատկապես եվրոպական երկրներում: Գիտնականները դրանք ենթարկում են բանասիրական լուրջ հետազոտման և ցույց են տալիս դրանց կրոնական, պատմական, հասարակական, բարոյական ու կենցաղագրական նշանակությունը:

Անվավեր գրականության գիտական ուսումնասիրությունն առաջին անգամ լրջորեն սկսվում է Գերմանիայում: Բազմաթիվ հետազոտողներ՝ Տիշենդորֆ, Ռընան, Դիլման, Ֆաբրիկոս, Սինկեր, Հառնակ և ուրիշներ հավաքում և հրատարակում են արաբերեն ու լատիներեն լեզուներում պահպանված «Ադամագրքի», «Կտակ տասներկու նահապետաց», «Պատմութիւն Մովսիսի», «Պատմութիւն Ասանեթա», «Մահ մարգարէից» և միջնադարյան այլ անվավերականներից առանձին կտորներ ու հատվածներ, կցելով ծանոթագրություններ ու մեկնաբանություններ: Հետզհետե գիտական-բանասիրական այսպիսի աշխատանքներ են տարվում նաև եվրոպական մյուս երկրներում Ֆրանսիայում, Անգլիայում, ապա՝ Ռուսաստանում: 1868 թ. ռուս բանասեր Տիխոնրավովը հրատարակում է «Կտակ երկոտասան նահապետաց»-ի սլավոնական թարգմանությունը, որը հետագայում Պիպինն ու Սպերանսկին լույս ընծայեցին նաև ռումիներեն ու չեխերեն լեզուներով:

Այսպիսով, եվրոպական գիտնական-բանասերները տարբեր ձեռագրերից առանձնացնում և հրատարակում էին ստվարածավալ հատորներ, որտեղ ակնարկային հիշատակություն անգամ չկար հայոց լեզվում թարգմանաբար պահպանված անվավեր գրվածքների մասին:

Մկրտիչ Էմինը նկատում է, որ հայոց կրոնական գրականության այդ ճյուղը, որը չափազանց հարուստ է ու հին, պետք է Եվրոպայի գիտնականների ուշադրությանն արժանանա ոչ միայն այն պատճառով, որ այնտեղ կան ընդհանուր անվավերականների հետաքրքիր տարբերակներ, այլև նրա համար, որ հայկական գրչագրերում պահպանվում են այնպիսի գրվածքներ, որոնք ունեն շատ հին թարգմանությունը կորած են առհասարակ և մնում են միայն հայերեն թարգմանությունները:

Այս հանգամանքն, ահա, պատճառ է դառնում, որ հայագետ-գիտնականը շուրջ քսան տարի (1861—1882 թթ.) զբաղվի վերոհիշյալ հարցերի ուսումնասիրությամբ[3]: Այդ ընթացքում նա ռուսական պարբերական մամուլի էջերում՝ «Православный обозрений», «Труды Московского Археологического общества», «Русский архив», «Критический обозрение» ուսումնասիրություններ ու հոդվածներ՝ հայ

---

[1] «Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 76—77:

[2] **Հ. Ս. Անանյան**, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, էջ XXXVIII:

[3] Էմինից առաջ անվավեր գրականության հարցերով զբաղվել են Մխիթարյան ուխտի վարդապետներ Հ. Հովհ. Զոհրաբյանը և Հ. Արսեն Բագրատունին: Հ. Զոհրաբյանը 1805 թ. մի շարք անվավեր գրվածքներ, որոնց հունական և ասորական բնագրերը, զետեղեց իր հրատարակած Աստվածաշնչի հավելվածում: Մնացածները, սակայն, անբավարար հանգամանքների բերումով, լույս չտեսան և մնացին Փարիզի արքունի մատենադարանում պահված: Էմինի ահազանգից հետո, 1886 թ. Կարիերը այդ ձեռագրերից ընտրում և թարգմանում է «Պատմութիւն Հովսէփի և կնոջ նորին Ասանեթի» անվավեր գրվածքը („Une versione armenienne de l'Histore d'Assenete") և բնագրի հետ միասին հրատարակում է „Nouuveau Me'langes Orenteaux„ («Նոր արևելյան հանդես») պարբերականում:

հոգևոր գրականության վերաբերյալ, այդ թվում և թարգմանում է տասն անվավեր գրվածքներ՝ մի մասին կցելով մանրամասն առաջաբաններ ու ծանոթագրություններ:

Էմինը նպատակ ուներ հավաքել և հրատարակել հայ հին գրականության ողջ անվավեր գրվածքները: 1879 թ. Մոսկվայի Հնագիտական ընկերության վեցերորդ նիստում նա պահանջ է ներկայացնում, որ ընկերությունն իր վրա վերցնի հայոց անվավեր գրվածքների հրատարակության պատասխանատվությունը:

«Հայոց եկեղեցու անվավեր գրվածքները,—ասում է Էմինը այս նիստում,—կազմում են ամբողջ շարքեր, որոնք ունեն պատմական հաջորդականություն: Այդ շարքերը սկզբնավորվում են հայերի քրիստոնեություն ընդունելու ժամանակներից և շարունակվում մինչև Սահակ Պարթևը և նրա հաջորդները: Դրանց մեջ կան այնպիսիք, որոնք միակն են իրենց հնությամբ և պահպանվում են միայն հայերեն լեզվով»[4]: Եվ խոսելով «Հանգիստ Հովհաննու ավետարանչի» անվավեր գրվածքի մասին, որի թարգմանությունը նա տպագրել էր 1876 թ. «Православное обозрение» ամսագրի հունվարի համարում, Էմինը ավելացնում է. «Այս անվավեր գրվածքը միակն է իր հնությամբ, որը ոչ հունաց և ոչ էլ մյուս լեզուներում է պահպանվել: Անվավեր գրվածքների մասնագետները այն ընդունեցին մեծ ցնծությամբ, իբրև մի կարևոր գյուտ»[5]:

Դրանից հետո Էմինը ավելի անհանգիստ ու պահանջկոտ է դառնում պարականոն գրվածքների հրատարակության գործում: Նա 1880 թ., դարձյալ Մոսկվայի հնագիտական ընկերությանը ներկայացնում է անվավեր գրվածքների մի ընդարձակ ցանկ (թվով 106), որ քաղել էր 1863 թ. Էջմիածնում հրատարակված ձեռագրերի գրացուցակից[6]: Ցանկի վերջում հայագետը շարադրում է իր նպատակները, մտահոգություններն ու մտորումները մատենագրության այդ ճյուղին պատկանող արժեքները կորուստից փրկելու մասին: Նա գրում է. «Ահա այն պարականոն գրվածքների թվարկումը, որ հայտնաբերվել են մեր կողմից Էջմիածնի ձեռագրերի գրացուցակում: Կասկած չկա, որ նման գրվածքները պահպանվում են և՛ թուրքահայաստանում, և՛ Պարսկաստանում, և՛ Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյանների գրադարաններում, և՛ Փարիզում, և՛ Լոնդոնում, էլ չենք խոսում Անդրկովկասի երկրամասի կենտրոնների մասին, ուր մեծ թիվ են կազմում հայերը: Դիմելով հայ երիտասարդ գիտնականներին, շարունակում է Էմինը,—մեզ թույլ ենք տալիս կոչ անելու նրանց՝ զբաղվել ապոկրիֆների հավաքման և լույս ընծայման գործով, որոնցով այնքան հարուստ է մեր մատենագրությունը, բայց որոնք, ցավոք, մինչև օրս մատնված են անուշադրության»[7]:

Գիտնականը չափազանց ափսոսանքով է խոսում, որ հայկական անվավեր գրվածքների մի մասն արդեն անհետացել է մատենագիտական հրապարակից, իսկ մյուս մասն էլ կարող է անհետանալ, եթե մտահոգություն չլինի նրանց նկատմամբ[8]: Էմինը նամակագրական կապեր է հաստատում նաև արտասահմանի իր գրչակիցների, մասնավորապես Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Ֆրեդերիկ Մյուլլերի և Վենետիկի Մխիթարյան միաբանության հայրերի հետ: Այդ նպատակի համար, նա վերջիններիս կտակում է տասն հազար ֆրանկ[9]: 1896—1898 թվականների ընթացքում Մխիթարյան միաբանությունը լույս է ընծայում հայկական հին ձեռագրերում պահպանված պարականոն գրվածքները «Թանգարան հին և նոր նախնեաց» շարքով և նվիրումով Մկրտիչ Էմինի հիշատակին: Առաջին գիրքը պարունակում է «Հին կտակարանի» պարականոնները («Անկանոն գիրք Հին կտակարանաց»), երկրորդը՝ Նոր կտակարանի պարականոնները («Անկանոն գիրք Նոր կտակարանաց»): 1898 թ., դարձյալ նույն ուխտի հրատարակությամբ, լույս է տեսնում Հ. Բարսեղ վարդապետ Սարգսյանի «Ուսումնասիրություն Հին կտակարանի անվավեր գրոց վրա» վերտառությամբ աշխատությունը:

Էմինի թարգմանած և ռուս ընթերցողին ներկայացրած անվավեր գրվածքներն են՝ «Ցորում և բանք մարգարէականք և վասն փոխման Աստուածածնին թէ որպէս եղև կամ որպէս շնորհեցաւ անարատ տիպ պատկերին ի փայտ», «Տեսիլ Աստուածածնին Մարիամու զոր ետես տանջանք մեղաւորաց», «Պատմութիւն Յովսեփայ և կնոջ նորին Ասանեթի», «Պատմութիւն երանելոյն Զոսիմոսի, յորժամ զմտաւ ածէր գնալ յերկիրն երանելեաց», «Վարք սրբոյն Թադէոսի և Բարդուղիմէոսի», «Տեսիլք Յովհաննու», «Հանգիստ Յովհաննու աւետարանչի», «Ցաղագս Կինոպասայ և չարարուեստ կախարդութեանց նորա զոր արար առաջի Յոհաննու», «Ցաղագս աւետարանին թէ որպէս պատմեցաւ ի Յոհաննէ կամ թէ յորում տեղւոջ ընկալան»:

Մեր մատենագրության մեջ անվավեր գրվածքները ստեղծվել են պատմական հաջորդականությամբ և,

---

[4] Архив ЛОИА, фонд 3, дело 78, лист 3.

[5] Նույն տեղը:

[6] Переводы и статьи Н. О. Эмина, էջ 343-44.

[7] Переводы и статьи Н. О. Эмина, էջ 344.

[8] Էմինից հետո Վենետիկում և Վիեննայում լրվեցին արդեն նման ձեռնարկման առաջին արձագանքները: Հ. Գ. Զարբհանալյանը 1889 թ. հրատարակած իր «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց» գրքում խոսելով օտար լեզուներից հայերեն թարգմանված գրվածքների մասին կանգ է առնում հատկապես ասորերենից թարգմանված «անվավեր» կամ, ինչպես ինքն է ասում, «անհարազատ» կոչված գրությունների վրա և եզրակացնում, որ դրանք շատ հին են և ստեղծվել են «յառաջ քան զժամանակ թարգմանչաց»: 1898 թ. Վիեննայում լույս տեսավ Հ. Հ. Տաշյանի «Վարդապետութիւն Առաքելոց Անվավերական կանոնաց մատյան» աշխատությունը:

[9] Переводы и статьи Н. О. Э., էջ 79.

ինչպես Էմինն է պնդում, որոշակի դեր են խաղում անցյալի մութ էջերը լուսաբանելու գործում: Նրանք առաջացել են հայերի քրիստոնեություն ընդունելու ժամանակներից և շարունակվել հետագայում, որոնք կազմում են տարբեր շարքեր, նվիրված ս. Գրիգոր Լուսավորչին, ս. Հռիփսիմեին, Հռիփսիմյանց կույսերին, ս. Սահակին և այլն:

Գոյություն ունի հայոց Աբգար թագավորի՝ քրիստոնեություն ընդունելու մասին «անվավեր» գրվածքների մի ամբողջ շարք, որից պատմությանն է հասել Աբգարի նամակագրությունը Փրկչի հետ և որին Էմինը «Աբգար նամակ» անունն է տալիս:

«Աբգար նամակից» Էմինը թարգմանել է բոլոր այն մասերը, որ պահպանվել են Մ. Խորենացու «Հայոց պատմության» մեջ, նաև մի հատված Լաբուբնայից, որը կրում է «Հատուած Լաբուբնայի Աբգար նամակից» վերնագիրը: Այս թարգմանությունը բառացի շարադրանքն է Խորենացու «Հայոց պատմության» երկրորդ գրքի «Լ», «ԼԱ» և «ԼԲ» գլուխների, ուր նկարագրվում է Աբգար թագավորի՝ Քրիստոսին նամակ գրելու և իր պալատականների ձեռքով Նրան ուղարկելու պատմությունը:

Հայ մատենագրությանը վաղուց էր հայտնի Աբգարի պատմությունը և նրա՝ Քրիստոսի հետ ունեցած նամակագրությունը՝ Եվսեբոս Կեսարացու և Մովսես Խորենացու երկասիրությունների միջոցով: Սակայն անցյալ դարի 60-ական թվականներին բանասիրության մեջ հայտնագործվեց Ղերուբնա-Լաբուբնայի հայերեն և ասորերեն բնագրերը և պարզվեց, որ Լաբուբնան, Եվս. Կեսարացու հետ, գլխավոր աղբյուրն է եղել Աբգար թագավորին վերաբերող զրույցի գրեթե բոլոր տարբերակների: Զրույցներից բացի, կան նաև մի շաք չափածո գրվածքներ՝ մի մասը Աբգարյան ծանոթ թեմաներով, մյուս մասը՝ հոգևոր բովանդակությամբ, որպես ներբող՝ նվիրված Աբգարի հիշատակին[10]:

1876 թ. ապրիլի 9-ի Սարգիս Խորասանյանին գրած նամակից երևում է գիտնականի ոչ միայն սերն ու շահագրգռվածությունը, այլև՝ գիտական կիրքն ու ազգային հպարտանքը. «Սիրելի և թանկագին Սերգեյ Դանիելովիչ, ուղարկում եմ քեզ իմ մի նոր բրոշյուրը «Апокрифическое сказание об успении евангелиста Иоанна», որը հրատարակվեց «Православного обозрения» ամսագրի հունվարի համարում: Այս անվավեր գրվածքը միակն է իր հնությամբ, ոչ հունաց և ոչ մյուս լեզուներում դա գոյություն ունի: Այդ մի շատ կարևոր գյուտ է, որ անվավեր գրվածքների մասնագետները ընդունեցին մեծ ցնծությամբ»[11]:

Էմինի թարգմանած անվավեր գրվածքները բնագրերի հետ համեմատած հավասարապես ճիշտ են և գեղեցիկ:

Այս մասին շատ հաճախ ակնարկում է ինքը՝ թարգմանիչը, այսպես՝ «Վասն փոխման Աստուածածնին» գրվածքի առաջաբանում գրում է. «Թարգմանությունը կատարված է Վենետիկի Մխիթարյան հրատարակությունից, գրեթե բառացի»[12]: Իսկ հայտնի բանասեր և Նեժինի ինստիտուտի դասախոս Մ. Սպերանսկին Գր. Խալաթյանցի խնդրանքով համեմատելով գիտնականի թարգմանած երեք անվավերները («Տեսի Աստուածածնին Մարիամու զոր ետես տանջանք մեղաւորաց», «Պատմութիւն երանելոյն Զոսիմոսի» և «Պատմութիւն Յովսէփայ և կնոջ նորին Ասանէթի», նրանց հունական բնագրերի հետ նկատում է, որ ռուսերեն թարգմանությունները լիովին համապատասխանում են բնագրերին»[13]:

«Վասն փոխման Աստուածածնին» գրվածքը պատկանում է ընդհանուր եկեղեցուն և շատ հետաքրքիր տարբերակ է Տիրամոր մասին ստեղծված անվավերների մեջ: Էմինի թարգմանության այս տարբերակը ռուսերեն լույս տեսավ 1874 թ. «Православного обозрения» ամսագրի հունվարի համարում: Սույն անվավեր գրվածքը ունի ընդարձակ առաջաբան և ծանոթագրություններ:

Էմինը ապացուցում է, որ այս պատմությունը ստեղծվել է 4-րդ կամ 5-րդ դարերում և հայտնում է այն կարծիքը, թե նրա հեղինակը Հովհան ավետարանիչն է: Նրա թարգմանությունը՝ Աստվածաշնչից, պատկանում է Մովսես Խորենացու գրչին, որովհետև, պնդում է հաղագետը, միայն նա կարող էր այդ շնորհակալ աշխատանքը կատարել իբրև ս. Գրքի թարգմանիչ և իր ժամանակի մեծահռչակ գիտնական: Էմինը գտնում է նաև, որ Խորենացու պատմության մեջ հանդիպում են այնպիսի անվավեր գրվածքներ, որոնք կարելի է դիտել իբրև հիանալի տարբերակներ նույնանման գրվածքների:

Բացի վերոհիշյալ պատճառաբանություններից, գիտնականը որոշակիորեն պնդում է, թե «Վասն փոփոխման Աստուածածնին» անվավերականը Խորենացին գրել է Վասպուրականի մեծ իշխան Սահակ Արծրունու խնդրանքով: «Մոտավորապես 440 թ., ասում է Էմինը, Վասպուրականի իշխանը նամակով դիմում է Խորենացուն և խնդրում գրի առնել Տիրամոր այն հրաշագործ պատկերի պատմությունը. որ գտնվում է Հոգոց վանքում ու ցույց տալ, թե որտեղի՞ց և ո՞ւմ կողմից է այն բերվել Հոգոց վանք, որի մասին շատերն են պատմում և որ այդ պատմությունները նման չեն միմյանց և ինքը չի հավատում դրանց և կամենում է իսկությունը իմանալ պատմահորից»:

Իրոք, մենք այդ նամակը գտնում ենք «Սրբոյ հօրն մերոյ Մովսեսի Խորենացւոյ մատենագրութիւնք» գրքում, որից բերում ենք մի հատված. «...Այլ կամիմք ուսանել 'ի քէն զքանչելագործութիւն պատկերին, որ յանուն Տիրամօրն կայ 'ի Հոգեաց վանս, եթէ ուստի՞ կամ յումմէ՞ բերաւ այն տեղի. զի բազում ինչ այլք այլապէս պատմեն իրս ոչ նման միմեանց. և ոչ հաւատացաք ումեք զստոյգն գիտել»[14]:

---

[10] Այս մասին մանրամասն տես՝ Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտություն, հտ. Ա. էջ 2—3:

[11] ԳԱԹ, Էմինի ֆոնդ, 286—310:

[12] Переводы и статьи Н. О. Эмина, էջ 4.

[13] Նույն տեղը, էջ XVII:

[14] Վենետիկ, 1848, էջ 281—82:

Էմինը անվավերականի 19-րդ ծանոթագրության մեջ ցույց է տալիս, որ Հոգոց վանքը այժմ էլ գոյություն ունի և գտնվում է Վանի մոտակայքում: Մինչև այժմ էլ այնտեղ է պահվում Աստվածածնի պատկերը, որ բերել է Բարդուղիմեոս առաքյալը: Այդ նույն ցանկապատի տակ, մենաստանից ոչ հեռու, թաղված է նաև հայոց Տրդատ թագավորը[15]:

Տարակույս չկա, որ Հոգոց վանքը եղել է և գուցե այսօր էլ պահպանվում են նրա ավերակները: Բաֆֆին նույնպես իր վեպերում («Սամվել», «Կայծեր») հիշատակում է այդ վանքի մասին: Շատ հնարավոր է, որ այնտեղ պահվել է Տիրամոր սրբապատկերը նաև: Բայց դա դեռևս ապացույց չի կարող լինել, թե այն բերվել է Բարդուղիմեոս առաքյալի ձեռքով և անվավերականը պատկանում է Խորենացու գրչին, որովհետև խորենացիագիտությունը արդեն պարզել է, որ պատմահորը վերագրվող բազմաթիվ գրչագրեր ու աշխատություններ այժմ գտել են իրենց ճիշտ հասցեները: Այս գրվածքը պարզապես պատկանում է այն հնությունների շարքին, որոնց թարգմանական բնագրերը պահպանվել են հայերենում և վերագրվել Խորենացուն:

Ինչ վերաբերվում է Էմինի պնդմանը, ապա նա հենվում էր նախ՝ գրվածքի լեզվա-ոճական առանձնահատկությունների վրա, որ հիշեցնում են պատմահորը և ապա՝ Վենետիկի Մխիթարյանների վերոհիշյալ հրատարակության վրա: Ավելացնենք նաև այն, որ Էմինի ժամանակ այս պնդումը կասկած անգամ չէր կարող հարուցել, որովհետև ինչպես ինքը՝ գիտնականն է ասում. «...ինչ վերաբերում է գրվածքի հայերեն տեքստին, այսինքն՝ որ այն պատկանում է Մովսես Խորենացուն, դրանում փոքր ինչ կասկած լինել չի կարող. նախ, նրա համար, որ հայ գիտնականները բոլորը միաձայն դա վերագրում են հայոց պատմահորը, որի հետևանքով Մխիթարյան հայրերը այն զետեղել են իրենց հրատարակած նրա երկերի լիակատար ժողովածուում՝ Սահակ Արծրունու նամակի հետ, երկրորդ՝ նկատի առնելով պատմահոր հայոց գրաբար լեզվի հիմնավոր իմացությունը, նվիրվածությունը հայ մատենագրության դասական շրջանի խոր ուսումնասիրությանը, ինչպես նաև նայելով անվավերականի լեզվին ու ոճին, բավական է, որպեսզի անվերապահորեն համոզվենք, որ այն պատկանում է Մովսես Խորենացուն»[16]:

Միջնադարյան գրական հուշարձանների թվին է պատկանում «Հանգիստ Յովհաննու աւետարանչի» անվավերականը, որը թարգմանել է Էմինը 1860 թ. և հրատարակել «Православного обозрения» պարբերականում՝ 1876 թ. հունվարի գրքում:

Ինչպես նախորդ, այնպես էլ այս թարգմանությունը ունի ընդարձակ ծանոթագրություն և առաջաբան: Առաջաբանում Էմինը եկեղեցական գրականության մեջ կարևոր տեղ է հատկացնում այս գրվածքին և ցույց է տալիս նրա մեծ նշանակությունը հատկապես հայոց եկեղեցում: Ըստ Էմինի, թեև «Հանգիստը» պատկանում է քրիստոնեական եկեղեցու ընդհանուր պարականոն գրվածքների կարգին, բայց հայոց եկեղեցու կողմից ընդունվել է ոչ որպես անկանոն գրվածք, այլ որպես մի գեղեցիկ ապաշ՝ նվիրված Հովհան ավետարանչի գործունեությանը:

Հերոսության ու նվիրվածության դրվագներով լեցուն այս ստեղծագործությունը, որ պատկերում է Քրիստոսի սիրված աշակերտի կյանքն ու նրա վերջին օրերի անցքերը, իր պատմական մասով հայտնի է Արևելքի և Արևմուտքի բոլոր եկեղեցիներին: Բայց առավել արժեքավոր է հայկական տարբերակում պահպանված «Աղօթքը», որ վերագրված է Հովհան ավետարանչին և հայտնի է միայն հայոց եկեղեցուն:

Էմինի կարծիքով, «Աղօթքը» հայոց թարգմանությանը անցել է նրա սկզբնաղբյուրից, որն այժմ գոյություն չունի: Բայց հայ եկեղեցին, որ սրբությամբ պահպանել գիտի բոլոր հին հուշարձանները, այդ թվում նաև այս ավանդությունը, մեզ է հասցրել «Աղօթքով» հանդերձ: Բացի դրանից, ավանդությունը թարգմանելուց հետո, հայոց եկեղեցին անմիջապես «Աղօթքը» տպագրել է իր սուրբ գրքերի՝ «Ճաշոցի» և «Մաշտոցի» մեջ, որը դարեր շարունակ կարդացվում է Հովհան առաքյալի տոնի առթիվ, և բարձրաստիճան հոգևորականների թաղման պահին (դագաղը գերեզման իջեցնելիս)[17]:

Հայոց եկեղեցու պահպանած այս գեղեցիկ հուշարձանը իր հետաքրքրությունը չի կորցրել նաև նոր ժամանակներում և տեղ է գտել 1805 և 1860 թվականներին հրատարակած Աստվածաշնչերի հավելվածներում:

Այս անվավերականը, ինչպես ցույց է տալիս Հ. Հ. Գաթրճյանը, թարգմանվել է հունարենից՝ 5-րդ դարի առաջին կեսերին[18]: Ալիշանը կարծում է, թե այն թարգմանել է Ներսես Լամբրոնացին Ստեփանոս վարդապետի խնդրանքով[19]:

Էմինը գտնում է, որ այն թարգմանվել է 5-րդ դարում՝ ս. Սահակի և ս. Մեսրոպի աշակերտների ձեռքով: Ինչ վերաբերվում է անվավերականի հունարեն բնագրին, ապա նա հավանորեն գրված պիտի լինի քրիստոնեության երկրորդ դարում:

Էմինը այս պնդումը հիմնավորելու համար վկայակոչում է «Հայոց Մաշտոցը», որի խմբագրությունը եղել է 5-րդ դարում, ուր և տեղ է գտել «Հանգիստը»: Բացի այդ, գրվածքի լեզուն իր վրա է կրում 5-րդ դարի ոսկեդենիկ լեզվի բոլոր հատկությունները:

---

[15] Переводы и статьи Н. О. Эмина, էջ 283.

[16] Переводы и статьи Н. О. Эмина, էջ 4.

[17] Переводы и статьи Н. О. Эмина, էջ 22.

[18] Հ. Հ. Գաթրճյան, Հանգիստ երանելոյն Յովհաննու, Վիեննա, 1877, էջ 5—31:

[19] Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 89:

(Շարունակելի)

ՀԱՅԿ ԳԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կ. Պոլսի հունաց ամենապատիվ Տ. Աթենագորաս տիեզերական պատրիարքի մահվան առթիվ փոխանակված հեռագրեր 3

Հեռագրերի փոխանակում Կ. Պոլսո հունաց տիեզերական նոր պատրիարքի ընտրության առիթով 4

Վեհափառ Հայրապետը Թբիլիսիում 5

Մոսկվայի և համայն Ռուսաստանի Նորին սրբություն Տ. Պիմեն պատրիարքի հովվական այցելությունը 13

Հայտարարություն 18

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 19

Հոգևորականաց համագումար Միացյալ Նահանգների արևելյան թեմի . . 21

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔՀՆ. ՄԱՐՈՒՔՅԱՆ—Գրիգոր Նարեկացին մեր օրերին . . 24

Տ. ԵՆԵ ՔԱՀԱՆԱ ԲՐԱՆԻՇՏԵ—Ռումին ուղղափառ եկեղեցու կրոնական արդի կյանքում արտաքին և ներքին հարցեր 31

ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏՅԱՆՑ—Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը 37

ԳՈՀԱՐ ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ—Ա. Չոպանյանի գրական ժառանգությունը . . . 53

ԼԵՎՈՆ ԲԱՏԻԿՅԱՆ—Մկրտիչ Էմինը՝ պարականոն գրվածքների թարգմանիչ . 60

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 22/VI 1972 թ.: Ստորագրված է տպագրության 11/VIII 1972 թ.:
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 469

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1972 թ.